


471



1883

• 200 F

1596

Հայոց 83/507.1
96

ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԴԱԾՈՂԵՎԿԱՆ

ՈՒՂԱԾՓԸՐ ՀԵՇԱԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եղիշեսիրեա

ԱՏԵՓԱՆՈՍ ԱԻԱԳ-ՔՈՀԱՆԱՅ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆԵԱՆ

Ծխական — եկեղեցական ուսումնարանների բոլոր բաժանմուքների և միջնակարգ ուսումնարանների առաջին դաստունների համար:

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Գինն է 50 4.

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ՏՊԱՐԱՆ 8. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՅԻ
ՕՐՈՒԵԼՈՒ ՓՈՎՅ, 5

1883

2(075)
5-52

С арм-к
1596

2(075)
S - 52

Ա Կ Զ Բ ՈՒ Ւ Ֆ

Ք Ր Ա Ս Ո Ւ Ե Ա Վ Ա Ն

Թ Վ Ա Ը Ֆ Ե Բ Հ Ե Ս Ա Յ Յ

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ե Ա Յ Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ա Յ Յ

Խ ա յ ո ւ ս կ ա ր ե ց

Ա Տ Ե Փ Ա Ն Ո Ս Ա Յ Ա Յ Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ա Յ Յ

Ծիսական—եկեղեցական ուսումնարանների բոլոր բաժանմուք-
ների և միջնակարգ ուսումնարանների տռաջին դաստիառ-
ների համար:

Գ. ՏՊԱ.ԳՐԱԴՐՈՒՅՆ

Թ Վ Ա Յ Յ

ՅՈՒՆԱՆԵՍԿՕ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԵԼԵՎԵՆ ՓՈՎՈՅ, 5
1883



ՀԱՅ ԳԱՅ ՀԱՅ

ՀԱՅ Ա Վ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ Ա Ր



ԿՅՑ Ձ Ա

Ե Տ

36389-66

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Января 1883 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.

ՅԱՐԱՋԱԲԱՆ

Եթէ դպրոցը, բացի ուսում մատակարարելուց, պարտաւոր է նաև բարոյապէս կրթել իւր սաներին, ապա ուրեմն նորանում աւանդուող առարկաների շարքում առաջին տեղը պիտի պատկանի քրիստոնէական կրօնի ուսման, որ իւր բարոյական վսեմ և պարզ սկզբունքներավ բարձրացնում և ազնուացնում է մարդուս բնական ընդունակութիւնները և կրթում է նորան ամենատեսակ կատարելութեանց մէջ: Կրօնագիտութիւնը այն ժամանակ միայն լինում է արդիւնաւոր և հասնում է իւր նպատակին, երբ նորա գասախօսութիւնը հաստատուած է մանկավարժական խոհեմ սկզբունքների վերաբ:

Խոհեմութիւնը կրօնի գասախօսութեան, իբրև առարկայի, որ մարդուս կեանքի ուղեցոյցն է, ի հարփէ չէ կայանում նորանում, որ աշակերտը բերան անելով աւանդած դասը, թութակի պէս կրկնէ ալն, այլ պիտի զգայ նոյն ուսման անհրաժեշտութիւնը և կարելութիւնը միանգամայն իւր կեանքի հետ լարմարացնելու այն: Միով բանիւ՝ կրօնի և մարդուս կեանքի մէջ եղած կապը պէտք է ամուր պահպանել, որի վերաբ, առարադդարապ, ոչինչ ուշադրութիւն չէ դարձնվում մեզանում: — Նատիյ վերցնենք մի օրինակ. Երեխալին բառ առ բառ սովորեցնում են Հաւատոյ Հանդանակը և ապա պատուերները, բայց մի և նոյն ժամանակ չեն ցոյց տալիս այն սերտ և անքակտելի կապը, որ տեղի պիտի ունենալ հաւատոյ և բարի գործերի մէջ: Ի՞նչ է լինում արդեօք սորտ

Հետևանքը՝ որովհետեւ երեխալի երևակալութեան մէջ կրօնագիտութիւնը և բարյագիտութիւնը չեն կապուած մէկ մէկու հետ, ուստի և նորա հաւատը մնում է անպառը՝ մեռեալ:

Յաւով սրտի պիտի խոստովանինք, որ մեր ազգալին ծխական՝ եկեղեցական դպրոցներում չէ թէ չէ պահպանվում կրօնի կանոնաւորեալ, մանկավարժական ոկզբունքների վերալ հիմնուած գասախօսութիւնը, այլ մեծ մասամբ, մինչև 1874 թուականը, երբ լոյս տեսաւ նորին Ա. Ե. Հափառութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի պատուական կոնդակը ծխական դպրոցների բարեկարգութեան մասին՝ ալսալիս կարեւոր առարկային բաց էր թողուած աւանդելի առարկաների շարքից: Այս զգալի պահասութեան պատճառը պէտք է տեսնել, ի միջի ալլոց, նաև պիտանացու կտմ, լու ևս ասել, նպատակարարմար զաստգրքերի սակառութեան մէջ:

Այս իսկ Հանգամանքը, որի մասին մենք՝ իբրև երկու տարի շարունակ թեմական վերատեսչութեան պաշտօն կատարող, անձամբ վերահսու եղանք, Հարկադրեց մեզ՝ Ռուսաց Գիմիդրի Սօկոլով Աւագ քահանալի «Ոկզբնական խրատ քրիստոնէական հաւատով» դասադիրքը, որ յօրինել է նա ժողովրդական տարրական դպրոցների Համար, վախել ի Հայ լեզու, յարմարեցնելով միանգամայն Հայաստանեալց եկեղեցւոյ կանոնների և դաւանութեան հետ:

Սօկոլովի անունը, իբրև հմուտ մանկավարժի, արդէն բարտինի է ամբողջ Ռուսաստանին և մենք կարող ենք խոստովանել Հրապարակօրէն, որ նա առաջինը Ռուսաց Հոգեւորական մանկավարժներից կարողացաւ ալսալիս վսեմ առարկային, որպիսի է կրօնը, մատչելի անել մանկական Հասկացողութեանը:

Չենք կարող չայտնել այս տեղ նորին բարձրապատութեան հայր հեղինակին մեր խորին շնորհակալութիւնն այն պատրստականութեան համար, որ նա ցոյց տուեց իւր գրքի

պատկերների կապարները Պետերբուրգից Տփխիս Հասցնելով և միանգամայն զրաւոր կերպով մեզ թուլատրեց, որ իւր աշխատանքը՝ ի լոյս ածենք հայերէն լեզուով, առանց որ և է վարձատրութեան: Ա. Հաւասիկ սորա մասին նորա պատասխանը մեր նամակին. «Այն միտքը, թէ իմ դուգնաքեալ և թուլ աշխատանքը կարող է օգտակար լինել Հայ մանկուովն, ինձ Համար ամեն վարձատրութիւնից էլ բարձր է»:

Այսպէս ուրեմն նոյն զիրքը — սրատկերազարդ — ներկալացնելով Հայ հասարակութեան անուամբու՝ «Ոկզբունք քրիստոնէական սուզափառու հաւատով Հայաստանեալց եկեղեցւոյ» — մեր նպատակն էր զիսաւորապէս Հայոց ծխական դպրոցներին առաջարկել մի ամփոփ զասագիրք կրօնագիտութեան, որպէս զի նոյն դպրոցների աղքատ աշակելուները, սրոնք միջոց չունին, այնաեղից գուրս զալուց լետով, այլևս շարունակել իւրեանց առումը բարձրակարգ դպրոցներում, գուրկ չ մնան այսպիսի կարեւոր և անհրաժեշտ ուսումից:

Այս զիրքը պարաւնակում է իւր մէջ՝ Արքազան Պատմութիւն հին և նոր կտակարանի, վարդապետութիւն քրիստոնէական հաւատով Հայաստայ և բարուականութեան, այն է տեղեկութիւնք եկեղեցւոյ և նորա խորհրդաց վերալ. քրիստոնէական հաւատով տարածումն առհասարակ. Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը Հայաստանում. Քրիստոնէութեան լաղթական տարածումն Հայաստանի մէջ. Գրիգոր լուսաւորիչ. Առեր զիրքը և հաւատով հանգանակը, այլևս ամենակարեւոր աղօթքներ նախ գրաբառ և ապօտ գէմ աշխարհաբառ թարգմանութիւնը:

Կրօնուասոյց վարժապետը պիտի աշխատի հին և նոր կտակարանի պատմութեանց օգնութեամբ զարգացնել մանկան մէջ կրօնական առաջին զգացմունքները և նոյն պատմութեանց հետ ի միասին ուսուցանել նաև աղօթքքներ պատմութեան իմաստին համեմատ, ինչպէս դասաւորուած է սոյն գասագրքի մէջ:

Սոյն գասագրքով կարելի է պարապել նաև այնպիսի երեխաների հետ, որոնք դեռևս կարգալ չգիտեն, բայց ոչ սիստեմատիկաբար, այլ պատկերների օգնութեամբ ծանօթացնելով նրանց սըբազան պատմութեան զանազան իրողութիւնների հետ, այն ևս ժամանակի հանգամանքներին յարմարեցնելով, ինչպէս՝ Սուրբ կայ Մարիամի աւետման և Քրիստոսի ծննդեան տօներից տռաջ պատմել նոյն տօների անցքը, սովորեցնելով և նոցա յարմար երգաբանութիւնը՝ «ուրախ լեր բերկրեալգ» — «խորհուրդ մեծ» և այլն, որեփցէ ծանօթ մարդու հիւանդութեան պատճառով — Քրիստոսի ձեռքով հրաշալի բժշկութեանց անցքերը. որ և իցէ հարսանեաց տռիթով — Կանալ քաղաքում հարսանեաց ժամանակ արոծ տռաջին հրաշքը:

Եթէ այս գասագիրքը կարող կը լինի, գննէ մասամբ, կանոնաւորել և արգիւնաւորել կրօնագիտութեան գասախօսութիւնը մեր ազգալին ծխական գպրոցներում, զրաւելով նաև մանկանց հետաքրքրութիւնը, այնուհետև չափից աւելի վարձարուած կը համարենք մեզ մեր այս ամենաշնչին աշխատանքի համար:

Կրօնուսոյց անորիտվասեան տառցական գպրանոցի՝

ԱՏԵՓԱՆՈՍ ԱՒԱԳ-ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆԵԱՆ



ՍԿԶԲՈՒԹՔ

Ք Բ Ի Ս Ո Ն Է Ա Կ Ա Ն Ո Ւ Գ Ա Փ Ա Ո Ռ Հ Ա Ի Ս Ո Յ


ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1. ԵԲԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Աստուած գերազոյն և ամենակատարեալ էակ է: Զէ եղել այնպիսի ժամանակ՝ որ Աստուած եղած չլինէր: Յաւիտենական է Աստուած, և չկայ աշխարհիս մէջ մի տեղ, ուր չգտնուի նա: Աստուած ամենայն տեղ է: Ա.Հ.Հնաբարձը է Աստուած (որովհետեւ ամէնքի համար զերազոյն բարի է կամենում). Ա.Հ.Հնաբարձը է (մեր գործած յալտնի և գաղտնի գործերը գիտէ), նոյնպէս և Ա.Հ.Հնաբարձը է: Յստ իւր էութեան անմարմին հոգի է Աստուած:

Ինքն Աստուած յալտնած է մեզ թէ, ըստ բնութեան մի է, և ունի երեք անձինք, որք են՝ Հայր Աստուած, Որդի Աստուած և Հոգի սուրբ Աստուած, թէ այս անձինքը ունին հաւատար զօրութիւն և պատիւ, և թէ երեք անձինք մի Աստուած են և ոչ երեք: Երեք և մի լինելու հեռաւոր նըմանութիւնը բնութեան մէջ ևս տեսնվում է: Օրինակի համար, արեգակից ծնվում է լուս և բղիում է ջերմութիւն, նոյնպէս Հայր Աստուածոց ծնվում է Որդին և բղիում է Հոգին

Սուրբ. և ինչպէս չե կարելի արեգակից բաժանել ոչ լուսը և
ոչ տաքութիւնը, այնպէս ևս Հայր Աստուծուց չե կարելի



բաժանել Որդին Աստուած և Սուրբ Հոգին: Այս իսկ պատ-
ճառով Աստուած կոչվում է և է Ամենասուրբ Երրորդութեան
միանալուն և առաջաժանէլ:

Եռանձնեալ Աստուած տուաւ մեզ պատուիրաններ, որոն-
ցով պէտք է պատուենք Նորան և առանձին ակնածութեամք
լիշենք Նորա սուրբ անունը: Մենք ևս կատարելով Նորա
պատուիրանները, փառաբանում ենք Աստուծուն և յալտնում
ենք ցանկութիւն Նորա անունով ապրելու, ախինքն այնպէս
վարուելու, ինչպէս պահանջում է Նորա անուան փառքը:

**Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ
ոյլ աստուածք բաց յինեն:**

Ես եմ քո Տէր Աստուածը և ինձանից զատ ուրիշ աս-
տուածներ չունենաս:

**Ո՞ի առնուցուս զանուն Կստուծոյ քո ՚ի
վերայ մնոտեաց.**

Աստուծոյ անունը չիշես ունախն տեղը:

**Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ յա-
ղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ:**

**Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն:**

**Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ
ամեն:**

2. Թէ Ինչ Են ՀրեւՏԱԿՆԵՐԸ

Սկզբում Աստուած ստեղծեց՝ ալսինքն ոչնչից գոլացրեց,
շատ հրեշտակներ: Հրեշտակները անմարմին (ուրեմն և ան-
տեսանելի), անմահ, իմացական և ազատ հոգիք են: Նոքա
հրեշտակ (ալսինքն համբաւարեր) ասվում են այն պատճառով,
որ Աստուծոյ հրամանով մարմնաւոր կերպարանք են ստա-
նում և Աստուծոյ կամքը յալտնում են: Ամէն հրեշտակ նոյն

աստիճանի գօրութիւն և փառք չունի: Հրեշտակները բաժանվում են ինն դասակարգ, և այս պատճառով զանազան անուններ ունին՝ ոմանք հրէշտակներ են ասվում, ոմանք հրէշտակներ, և ոմանք սէրպէնքներ և սէրպէնքներ:

Աստուած Հրեշտակներին բարի ստեղծեց, բայց վերին դասակարգի Հրեշտակներից մինը հպարտացաւ, կամեցաւ Աստուծոյ հաւասար լինիլ, ուստի սկսաւ հակառակիլ նորան և տրտնջալ նորա դէմ, կարողացաւ դէպի չարը մոլորացնել ուրիշ շատ հրեշտակներ, որոնք նորա հետ երկնքից թօթափեցան: Այն չար հրեշտակին ստորագոյ ենք ասում (որ կընշանակէ հակառակորդ), իսկ նորա մոլորեցրած հրեշտակներին դեռև և արդառածունք ստորագոյ: Այսպէս հրեշտակները բաժանուեցան բարի և չար: Բարի Հրեշտակները Աստուծոյ կամքը յայտնում են մարդկանց, ամէն բարի գործերի մէջ օգնում են նոցա, չար բաներից պահպանում են մեզ. իսկ չար հրեշտակները ամէն բարի բանեն թշնամի են:

Ամենաբարին Աստուած իւրաքանչիւր մարդու մի Հրեշտակ է տալիս, որ ասվում է պահպան հրէշտակ. նորան դիմում ենք մենք մեր աղօթքով. երբ քնից արժնանում ենք՝ խնդրում ենք, որ այն օրը օգնէ մեզ բարեգործութիւն անելու. իսկ քնելու ժամանակ խնդրում ենք, որ մեզ ազատ պահէ սատանակի փորձութիւններից և արժանի անէ Աստուածալին ողորմութեան:

Հրեշտակի խաղաղութեանց, յանձնանալու մեր անձը յանձնիր գանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ տակին, որ դալով մեզ պահէնցէ զմեզ անմօտ, հանգիստ և արխուով՝ ի տուէ և ի թուն պահպանէ մեզ

Տէր զօրութեանց, խաղաղութեան մեր անձը յանձնիր հրէշտակնեան հրէշտակնեան հրեշտակներից, որ կերպիկ սիրեն միմեանց ալնպէս, ինչպէս իւրեանց անձը: Աստուած առաջին մարդուն Արայ անուանեց, իսկ նախամօրը Եւս:

Դիշերի, յարթնութեան դիշեր և ցերեկ, մեր արև և ՚ի հանգատեան մերթուն և ընած ժամանում, զի ՚Իու ես աւնակը: Որովհետեւ ՚Իու րարիչ լուսոյ և հասնակը լուսոյ և զիշերուայտիչ զիշերի:

Յ. ՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԻՍ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԻՑ

Հրեշտակներից յետոյ Աստուած ստեղծեց վեց օրուալ մէջ այն բոլոր բաները, որ մենք տեսնում ենք: Առաջին օրը ստեղծեց լուսը: Երկրորդ օրը ստեղծեց տեսանելի երկինքը: Երրորդ օրը՝ ջուրը ցածաքից բաժանեց, և հրամակեց որ հողը բուսացանէ բուսեր, չորրորդ օրը ստեղծեց ալեգակը, լուսինը և աստղերը, հինգերորդ օրը՝ թռչունները, վեցերորդ օրը ստեղծեց բոլոր կենդանիները և յետոյ մարդը:

Աստուած մարդու մարմինը հողից ստեղծեց և փչելով տուեց նորան բանական, ազատ և անմաշ հոգի: Այս հոգւով մարդը զանազանուեցաւ կենդանիներից: Աստուած մարդու հոգին ստեղծեց իւր կերպին և նմանութեան պէս, շնորհելով նորան անարատ միտք և սուրբ կամք:

Աստուած առաջին մարդու կողքից ստեղծեց նորա համար կին, այսինքն այնպիսի մարդ, որպէս նա ինքն էր: Աստուած տրու արաւ, որպէս զի մարդիկ սիրեն միմեանց ալնպէս, ինչպէս իւրեանց անձը: Աստուած առաջին մարդուն Արայ անուանեց, իսկ նախամօրը Եւս:

Եօթներորդ օրը Աստուած ոչինչ չատեղծեց, վասնորոյ այն օրը կոչուեցաւ շաբաթ. (որ կընշանակէ հանգստութիւն):

Աստուած օրհնեց և սրբեց այն օրը և հրամալեց որ տօն և սուրբ պահուի՝ ՚ի լիշտատկ աշխարհի ստեղծագործութեան:

Աստուած աշխարհը ստեղծելուց յետով անխնամ չժողեց նորան, այլ իւր հովանաւորութեան ներքոյ պահելով, նախալիքնամում է և ամէն բարի բանին օգնում է: Այս պատճառով մննք Աստծուն անուանում ենք Տէր, Երկնաւոր թագաւոր, Արարիչ, Ամենակալ և Նախախնամող: Խւ մեր ամէն կարօտութիւնների ժամանակ աղօթքով դիմում ենք դէսի Նա:

Ամենայն բարի գործի համար մենք խնդրում ենք Արարիչ Աստուծոյ և Ամենակալի օրհնութիւնը և շնորհակալ ենք լինում Նորանից այն ամէն բանի համար, ինչ որ Նա տալիս է մեզ:

Օրհնեան տէր:

Գոհանամ գքէն (Հնորհակալ եմ քեզանից),
Տէր Կատուած իմ:

Մեր դէսի Ամենակալ և Արարիչ Աստուածն ունեցած հաւատը յայտնում ենք այսպէս:

Հաւատամք ՚ի մի Կատուած, ՚ի Հոյրն Ամենակալ, յԱրարիչն Երկնի և Երկրի, Երեւելեաց և աներեւութից:

Երեւելի անուանում ենք Աստուծոյ այն արարածները, որոնց կարող ենք տեսնել՝ Երկիրը և ամենը՝ ինչ որ նորագերակ կալ. իսկ աներեւոյթ՝ Հրեշտակներին:

Աստուծոյ պատուիրոնը Էօլներորդ օրուայ Տուին:

Յիշեա սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսցես և արասցես զամենայն զգործս քո, իսկ

յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Կատուծոյ:

Միտգ պահիր շաբաթ օրը, որ սրբութեամբ պահես նորան, ալսինքն այն օրը նուիրես բարի գործերի: Այց օր աշխատիր, ալսինքն արագ քո գործերը, իսկ եօթներորդ օրը գաղարիր այդ գործերից ՚ի պատիւ քո Տէր Աստուծոյ:

Կուտօտեան աղօթք:

Գոհանամ գքէն,
Տէր Կատուած իմ, որ
զարթուցեր զիս ՚ի
հանգստենէ քնոյ շնոր-
հիւ ողորմութեան Քո:
Զարթո զմիսս իմ
արդարութեամբ առ
Քեզ Տէր Կատուած
իմ, զի տեսցեն աչք
իմ զփրկութիւն Քո:
Եկեսցէ և ընակեսցի
յիս Կատուածութիւն
Քո. և ողորմութիւն
Քո հովանի և պահա-
պան լիցի ՚ի վերայ իմ:
Եւ զիս արժանի արա
՚ի տուէ և ՚ի զիշերի և
յամենայն ժամու միշտ
խորհիլ ՚ի սէր պատուի-

Հնորհակալ եմ Քե-
զանից, Տէր Կատուած
իմ, որ Քո ողորմու-
թեան շնորհիւր զար-
թեցրիր իսձ հանգիստ
քնից: Զարթեցրու
իմ միտքը արդարու-
թիւնով գէպի Քեզ,
Տէր Կատուած իմ, որ
իմ աչքերը տեսնեն Քո
փրկութիւնը, զայ և
ընակուի իմ մէջ Քո
Կատուածութիւնը. և
Քո ողորմութիւնը հո-
վանի և պահապան լինի
իմ վրայ: Եւ իսձ ար-
ժանի արա զիշեր և
ցերեկ և ամէն ժամա-
նակ Քո պատուի-

բանաց Քոց. և գո-
հանալով փառաւորել
զայր և զԱրդի և
զսուրբ Հոգիդ, այժմ
և միշտ և յաւետեանս
յաւիտենից, ամէն:

բանները կատարել:
Եւ շնորհակալութեամբ
փառաւորել Հօրը և
Որդուն և սուրբ Հո-
գուն. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտե-
նից ամէն:

4. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԸ ԳՐԱԽՏԻ ՄԷջ

Աստուած Ադամին ու Եւային բնակեցրեց դրախտի մէջ,
որ արեւելեան կողմը գեղեցիկ պարտէզ էր: Նորա մէջ մի ծառ
և կար, որի պտուղներն ուտողները հիւանդութիւնից և
մահից ազատ էին լինում: Այս ծառի անունն էր Ծառ ՀՅԱՋ:
Աստուած առաջին մարդոց դրախտը տանելով, օրհնեց նրանց
և ասաց. «Բազմացէք, լցրէք երկիրս և նորան տիրեցէք:»
Առաջին մարդիկը երջանիկ կեանք ունէին դրախտի մէջ և
ոչ մէկ բանի կարօտութիւն չէին զգում, հոգեկան զբաղմունք
ունէին որ ճանաչում էին Աստուծուն: Սորանից զատ ինքն Աստուած
երեւում էր նրանց, և յայտնում էր այն բաները, որ իրենք
իրենց չէին կարող իմասնալ. ունէին նաև մարմնական զբաղ-
մունք, ալսինքն դրախտը պահպանում և մշակում էին: Նոքա
ոչ թշնամութիւն գիտէին և ոչ խարէութիւն, և անմեղ
մանկանց նման ամօթ չէին զգում:

Որպէս զի մարդիկ հնագանդութիւն և բարեխտուն կեանք
վարել սովորին, Աստուած պատուել տուաւ նոցա: Պատուիրեց
որ չուտեն այն ծառի պտուղը, որի անունն էր Ծառ Քիառու-
թէան բայցոյ և շորի, — սուելով որ եթէ ուտեն, կը մեռնին:

Աղօրմած. Աստուածը մեզ ևս կարողութիւն և ոյժ է

տալիս բարի բան սովորելու, իւր կամքը մեզ ևս լայտնում է
և տալիս է Աստուածային անկեղծութիւն: Վասն որոյ մենք
ևս մեր գասառութիւնից առաջ աղօթք ասելով ինդրում ենք,
որ օգնէ մեզ աւանդուած ուսմունքը սովորելու: Խսկ գասա-
ռութիւնից յետոյ աղօթք ասելով շնորհակալ ենք լինում մեզ
պարգևած ողօրմութեան համար, և օրհնութիւն ենք խնդրում
նոցա համար, որոնք օգնեցին մեզ սովորելու:

Եղօթք դասից առաջ:

Ամենաբարի **Աս-**
տուած, առաքեա՞ առ
մեզ զշնորհա՞ Հոգւոյդ
Քո սրբոյ, որ պարզեէ
մեզ զմիտս և կազզուրէ
զզօրութիւնս Հոգւոց
մերոց, որպէս զի մեր
ընդունելով գաւանդեալ
մեզ ուսմունս՝ զարգաս-
ցուք Քեզ ստեղծողիդ
մերում՝ ՚ի փառս, ՚ի
միսիթարութիւն ծնո-
զաց մերոց, յօգուտ
եկեղեցւոյ և Հոյրե-
նեաց:

Ով ամենաբարի
Աստուած, ուղարկիր
դէպի մեզ Քո սուրբ
Հոգւոյդ շնորհքը, որ
մեզ միտք պարգևեէ, և
զօրացնէ մեր Հոգւոր
կարօգութիւնները, որ-
պէս զի մենք ուշք
դարձնելով մեզ տուած
ուսմունքին, մեծա-
նանք Քեզ ստեղծու-
զիդ փառք տալու, մեր
ծնողացը միսիթարե-
լու և եկեղեցւոյն ու
Հոյրենիրին օդտակար
լինելու:

Աղօթք դասից յետոյ:

Գոշանամ զՔին,
Արարիչ զի արժանի
արարեր զմեզ չնորհաց
Քոց՝ ընդունելութեան
ուսմանս, օրչսեա զմե-
ծաւորս, զծնողս և զու-
սուցիչս մեր, որք ա-
ռաջնորդեն մեզ՝ ի զի-
տութիւն բարութեան,
և տուր մեզ զկարո-
ղութիւն՝ ի շարունա-
կութիւն ուսմանս այ-
սորիկ:

5. ԱՐԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՔԻ ՄԵջ ԸՆԿՆՈՒՅ

Սատանան՝ առաջին մարդոց երանելի վիճակի վերալ
նախանձելով, մոլորեցրեց նրանց գէպի չարը։ Մէկ անգամ
երբ Եւան անցնում էր արգելեալ ծառի մօտով, սատանան՝
օձի կերպարանք մտնելով, մօտեցաւ նրան և հարցրեց. «Յի-
րափի, միթէ Աստուած արգելել է դրախտի ծառերի պտուղ-
ներից ուտել»։ Եւան պատասխանեց թէ՝ «Բոլոր ծառերի
պտուղնէինց կարող ենք ուտել, միայն Հրամայեց Աստուած
այս ծառի պտուղը չուտել, որպէս զի չմեռնինք»։ Ոչ, գուք
չէք մեռնիլ, ասաց սատանան այլ եթէ այս պտղից ուտէք

իսկոյն ձեր աչքերը կը բացուին և Աստուծոյ նման կը լինիք, չարն ու բարին կը հասկանաք: Եւան ցանկացաւ այն պաղից ուտել. նա չկարողացաւ համբերել, կտրեց ու կերաւ, յետոյ Ադամին տուաւ, որ նոյնպէս կերաւ: Եւ այս կերալով առաջին մարդիկ մեղանչեցին: Երբ մեղքը առաջին մարդոց հոգու մէջ մտաւ, իսկոյն ամօթ և սարսափը տիրեց նոցա: Երբ լսեցին, որ Աստուած դրախտի մէջ ման է զալիս, ահավ դողով պահուեցան ծառերի մէջ, չժամանելով՝ որ ամենատես Աստուծուց անկարելի է թագչիլ: «Ադամ, ուր ես», հարցրեց Աստուած: Ադամը պատասխանեց. «Չայնդ լսելով փախեցալ, և որովհետեւ մերկ էի՝ ամաչեցի, ուստի պահուեցալ»: — Զլինի՞ թէ այն արգելուած ծառի պաղից կերար, հարցրեց Աստուած: Այն ժամանակ սկսաւ Ադամ լանցանքը իւր կնոջ վերալ ձգել և ասաւ. «Այս կինս, որ դու ինձ տուիր. ոս ինձ տուաւ այն պլուզը, և ես կերալ»: Աստուած հարցրեց Եւալին. «Այս ինչ քան արիր». իսկ նա պատասխանեց թէ՝ «օձը ինձ խարեց»: Այս կերալով աշա մարդկանց հոգին մեղքերով ապականուեցաւ: Նոքա, որ սկզբից բարի և ճշմարտախօս էին, այն լանցանքը գործելուց յետոյ ստախօս, անձնասիրտ, չարակաիրտ եղան:

Աստուած արգելում է մեզ սրաերիս մէջ նախանձ պահելը կամ ուրիշի բարութեան վերայ նախանձիլը, որովհետեւ նորանից լառաջ են գալի շատ տեսակ շարութիւններ։ Այդ պատուիրանը ապօքէս է կարգացնում։

Ո՞ի ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամեւ-
նայսի, որ ինչ ընկերի քո է:



36389-66

Ե. ԽՈՍՏՈՒՄՆ ՓՐԿՉԻ ԵՒ ՆԱԽԱԾՆՈՂԱՅ ՅԱՆՑԱՆՔԻ
ՊԱՏԻՃԱ:

Արդարադատն Աստուած անիծեց մոլորեցնող ստատանալին,
որ օձի կերպարանք էր առել, և ասաց նրան. «քոյ և այս
կնոջ մէջ թշնամութիւն եմ գնում. սորա սերունդից մէկը
պիտի քո գլուխը ջախջախէ»։ Այս խօսքերը մխիթարութիւն



եղան մարդկանց համար, որսվէտեւ զուշակեցին՝ թէ Փրկչը
աշխարհ պիտի պար Յետոյ Աստուած մարդկանց համար ևս
պատիժ որոշեց, որ այս չմոռանեան իրանց զործոծ մեղքը:
Եւալին առայս՝ թէ այս ցաւով պիտի ծնանիս որդի. իսկ Ազա-
մին ասաց «Հայութիւնը պատճով պիտի ճարես հացդ, մինչեւ որ
մեռնիս»։ Տարբարդիս զի մարդիկ միշտ լիշեն խստացած

Փրկչին, Աստուած սովորեցրեց նոցա, որ իրան կենդանիներ
գոհեն, որով ցայց տառաւ, թէ Փրկչը իւր արիւնավ պիտի
ազատէ մարդկունց։ Յետոյ Աստուած գրախուից արտաքսեց
նրանց։

Բայց սորանից յետոյ ևս Աստուած անիման չժմողեց
մարդկանց, ովլ պատրաստում էր նրանց՝ Փրկչին ընդունելու։
Մինչեւ Փրկչի դալուստը՝ եղած միջոցը կոչվում էր Հին ռախու
ժամանակ, իսկ նորու գոլուց յետոյ՝ եղոծ միջոցը առփում է
նոր ռախու ժամանակ։

Կոտուած, ողորմեա ինձ մեզաւորիս.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՇՅԹՔ

Տէր Կոտուած մեր,
Դու պահեան զմեղ
խաղաղութեամբ՝ ՚ի
զիշերիս յայսմիկ և
յամենայն ժամանակի։
Ըսդ սորք երկիող
քո բհուեալ պահեան
զմիստ և զիստը տրոց
մեր։ Որպէս զի յա-
մենայն ժամ Քեպահե-
պանեալ լիցուը յորու-
զայթից թէ շնամոյն։
Եւ ՚Քեզ
ասնը օրշնութիւն և
վտառք չորր և Որդուն

Տէր Կոտուած մեր,
Դու պահեր մեղ խա-
ղաղութիւնոյ այս զի-
շեր և ամեն ժամա-
նակ, ՚Յու սորք երկիո-
ղեղ մէջ պահեր մեր
միոքք և խորչորդը,
որ ամեն ժամանակի
անխորձ և աղաս իւ-
նինը թշնամու որու-
զայթից։ Եւ ՚Քեզ
ասնը օրշնութիւն և
վտառք չորր և Որդուն

զօրչնութիւն և զփառս
որս չօր և Արդյո և
Հոգւոյն որբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամեն:

Հ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԸ ՄԵԽՉԵՔ ԶԲՀԵԳԵԳ

Մեղքի մէջ ընկած առաջին մարդկանց սերունդն ևս
իւրեանց պէս մեղաւոր եղան: Այն պատճառով բոլոր մարդիկ
կրում են այն պատիժները՝ որ նշանակեց Աստուած Աղամի
և Նւալի համար, բայց այս ցաւերի հետ նախածնողքը հա-
զորդեցին իւրեանց սերունդներին նույ. Փրկչի զալուտեան լուսը:

Ագոմ և Նւան դրախտից արտաքսուելուց յետով որդիք
ունեցան: Առաջին որդուն Կալէն կոչեցին, իսկ երկրորդին
Աբէլ:

Կալէնը երկրագործ էր, իսկ Աբէլը խաշնարած: Մէկ անգամ
եղբայրները կամեցան Աստուածուն զոհ մատուցանել: Երկուսն
ևս իւրեանց աշխատամիեան լու պտուղներից զոհ ըերին,
բայց երկուսի սիրան ևս միասնական չէր: Աբէլը խոստացեալ
Փրկչին հաւատալով և իւր մեղքի վերալ զզջալով էր մատու-
ցանում իւր զոհը, իսկ Կալէնը առանց հաւատալու և զզջա-
լու: Աստուած չընդունեց Կալէնի զոհը, այլ միայն Աբէլինն
ընդունեց: Այն ժամանակ նախանձից վառուած՝ Կալէնը սպա-
նեց Աբէլին: Արդարադասն Աստուած անիծեց եղբայրասպան
Կալէնին՝ ասելով. «Այն հոգը, որի վերալ քո ձեռքով եղբօրդ
անմեղ արիւնը թափիցիր՝ քո դէմ բողոքում է իմ առաջ.
Հալածական և թափուական մնաս աշխարհին երեսին»: Աս-
տուած Աղամին և Նւալին միփթարելու համար՝ Աբէլի փո-
խանակ ուրիշ որդիք տուաւ նոցա, Մէթ անունով (որ միին-

թարիչ կընշանակէ): Կալէնը ծնողաց տանից հեռացաւ և
հեռու տեղ ընակուեցաւ: Եւ այսպէս՝ մարդիկ սկսան իրազից
բաժանուիլ: Կալէնի սերունդները մոռացան Աստուածուն և
անձնատէր ու անխիզճ մարդիկ էին, իսկ Մէթի սերունդը
ճանաչում էր Աստուածուն և արգար էր: Բայց երկար ժամա-
նակ անցնելուց յետով՝ Մէթի սերունդը բարեկամութիւն և
ազգականութիւն արին Կալէնի սերունդի հետ, նոցանից սո-
վորեցին ամէն տևակ չարաւթիւն և մոռացան Աստուածուն:
Միայն արգար Նոյի ընտանիքի մէջ մնաց ճշմարիտ հաւատը:

Սոքա են Աստուածակին պատուիրանները, որոնք արգե-
լում են չարութիւններ անել:

Մի՛ սպանաններ, մի՛ շնար, մի՛ զողանար,
մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:

Տ. ԶԲՀԵԳԵԳ

Արդարադասն Աստուած վճռեց, որ մարդոց ջրհեղեղով
պատճէ: Նա Հրամակեց Նոյին, որ տապան (մեծ նոտ) շինէ,
այնպէս որ մէջը կարսկանան տեղաւորուիլ նորա ընտանիքը
և աշխարհի բոլոր կենդանիները: Այն տապանի մէջ մատ-
նոյ իւր կնոջ հետ, նորս Աէմ, Քամ և Յարէթ որդիքը՝ իրանց
կանանց հետ, և իւր հետ տապանի մէջ մոցրեց ոուրը հա-
մարուած—զոհի կենդանիներից ու թռչուններից եօթն եօթն
զոլզ, իսկ անսուրը անսառններից երկերկու զոլզ: Յետով քա-
ռասուն օր անդադար անձրեւ եկաւ, ջուրը շատացաւ, եզերք-
ներից զաւրու եկաւ, բոլոր երկրիս երեսը ծածկեց, որով իւրեղ-
տուեցան մարդիկ և անսուններ: Ազատուեցան միայն նոքա,
որոնք տապանի մէջ էին:

Երբ չըհեգեգին անցաւ, Նոյ տապանից զուրս եկաւ և

իւր տղատուելուն համար շնորհակալութեան զոհ մտտոյց Աստուծուն: Աստուծած այն զոհը ընդունեց և խոստացաւ, որ այլ ևս Համաշխարհական ջրհեղեղ չիլինիւն իւր խոստաման նշան տուաւ ծիածանի գօտին:



Յ. ՄԱՐԴԻԱՅԻՆ ԱԶԳԸ ՔՐՆԵՎԱՅԻՑ ՅԵՏՈՅ

Ջրհեղեղից լեռով կորճ ժամանակի մէջ մարդիկ նորէն մեղքի մէջ ընկան: Կոյ ալգի տնկից, և երբ խաղող հասաւ, նորա հիւթից բալելիք սրարաստեց: Գիւռու զօրութիւնը չիմանալով, մէկ անգամ փաքր ինչ աւելի խճեց, հարթեցաւ. և մերկ ընկաւ իւր վրանի տակ: Քամը տեսաւ իւր հօր հերկութիւնը և վատ կատակով սրաստեց այն իւր եղբարիներին: Բայց Սէմ և Յարէթ երբ լսեցին, իսկոյն պնացին իրանց հօր

մօտ և վերարկուով ծածկեցին նորա մերկութիւնը: Նոյ Աստուծոյ հրամանով անիծեց Քամին՝ նորա վատ վարմունքի համար, իսկ Սէմին և Յարէթին օրհնեց և միանգամայն գուշակեց, թէ Փրկիչը լոռաջ կըզոյ Սէմի սերանդից:

Աստուծային ուսուութիւնը ծնուցաւ պարուեցաւ մուշ:

Պատուեա դժոյը քո և զմոյը, զի բարի լինիցի քեզ և երկոյինակեաց լինիցիո ՚ի վերայ երկրի: —

Զրհելեղից լեռով մարդկալին ազգը նորէն բազմացաւ նոյի երեք որդիներից: Առաջ բալոր մարդիկ միասին էին առլուսմ և մէկ լեզուով խօսում: Յեղի մէջ ամենից մեծը Յահանգէր էր առվում, որ փոքրերին սովորեցնում էր, թէ ի՞նչ պէս կեանք պէտք է վարին, կատարում էր նրանց և արարիչ Աստուծուն զոհ էր մատուցանում: Բայց լիտոյ, երբ չարագործութիւնք և խռովութիւնք աշխարհիս մէջ շատացան, մի քանի ցեղեր խորհուրդ արին թէ «մի այնպիսի քազաք և աշտարակ շինենք՝ որի ծալը մինչեւ երկինքը հասնի, մեզ համար փառք լինի և ցըրտինք աշխարհիս երեսին»: Բայց Աստուծ շնողեց, որ այն շինութիւնը աւարտեն. շինողների լեզուն այնպիս խառնուկեց, որ չէին կարող միմեսնց խօսքերը համկանալ: Աւստի թողին շինութիւնը և բալոր աշխարհին երեսին ցրուեցան: Այս կերպով զանազան ազգեր ձևացան: Մարդկալին սերունդները զանազան կազմեր ցրուելով՝ իւրեանց ազգակցութիւնը մոռացան: Իւրաքանչիւր սերունդ իւր համար զըեթէ նոր լեզու հնարեց, և Աստուծոյ վերայ նոր կարծիքներ ունեցաւ. նոցա մեծ մասը ճշմարիտ Աստուծուն մո-

ռացան և սկսան Աստուած Համարել այն ամէն բաները, որ իրանց օգուտ կամ վնաս էին տալիս: Ոմանք սկսան երկրպագութիւն անել արեգակին, լուսնին և աստղերին, ոմանք ևս կենդանիները, ծովը, և երկիրս Աստուածոյ տեղ էին ընդունում: Աստուածների մէջ ոմանց մեծ էին Համարում, միւսներին փոքր, ոմանց բարի, ոմանց ևս չար: Յետոյ սկսան ուկուց, արծաթից, քարից և փայտից աստուածներ շինել և մէհեանների մէջ դնելով՝ զոհ էին մատուցանում նոցա: Այնպիսի արձանները էտուժ էին կոչվում, և նոցա մատուցած պաշտօնը կոստոշառութիւն:

Այս անօրէնութիւնը տարածուեցաւ բոլոր աշխարհիս վերայ և գրեթէ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկան:

Կոստոշառութիւն արգելոց Աստուածոյն դադարիրուն:

Մի արասցես քեզ զկուռա ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ՚ի վեր է, և որ ինչ յերկրի ՚ի խոնարհ և որ ինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի—մի երկրպագանիցես նոցա և մի պաշտեացես զնոսա:

10. ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԻՍՍԱՀԱԿ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ

Մինչդեռ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկած էին, Սէմի սերունդից Արքահամ անունով մէկ արդար և ուղղահաւատ մարդ կար: Արքահամը Աստուածոյ Հրամանով թողեց իւր հայրենիքը և գնաց բնակուեցաւ Քանանացւոց երկրի մէջ: Այնտեղ Աստուած քանի մի անդամ երեցաւ նորան և յայտնեց՝ թէ նա Իսահակ անուանով մի որդի ալիտի ունենալ,

որից մեծ ժողովուրդ պիտի յառաջանալ, որ Աստուածոյ ժողովուրդը կըկառաւ նա իւր գէսի Աստուած ունեցած Հաւատը հաստատ պիտի պահէ, և ինքը Քանանացոց երկիրը նրան պիտի տալ: Աստուած այն ժամանակն իսկ Հրամանեց, որ Արքահամի բոլոր սերունդները թլփատուին, և ասաց թէ միան նա կըհամարուի իւր ժողովուրդը, որ թլփատուած կըլինի:

Աստուածոյ խստամունքը կատարուեցաւ: Արքահամը Հարիւր տարեկան եղած ժամանակ Խսահակ որդին ծնոււ: Արքահամը բոլոր սրտով սիրում էր իւր որդուն: Արքահամի Հաւատը և Հնագանդութիւնը Աստուած մեզ իբրև օրինակ տուեց Հետեւեալ կերպով: Մէկ անգամ Աստուած երեւեցաւ Արքահամին և ասաց՝ «Արքահամ»: Արքահամը պատասխանեց՝ «ալսուել եմ:» Աստուած ասաց՝ «վեր առ այդ քո միակ որդիկ Խսահակը, որին զու սիրում ես, և բեր նորան ինձ մտադ—ողջակէզ այն սարի զլիխն, որը ես ցոյց կըտամ քեզ»:—Միւս օրը առաւաօսը կանուխ վերկացաւ Արքահամը, էշը սլատրատեց, ողջակիզի Համար փայտ կոտորեց, կապեց, տառա հետք երկու ծառայ և իր սիրելի որդի Խսահակին և գնաց Աստուածոյ ցոյց տուած տեղը: Նոքա երեք օր ճանապարհին էին: Երբ Արքահամը հեռուից անսաւ սարը, ասաց իր ծառաներին՝ «Գուք ոլստեղ մնացէք՝ մեզի սպասեցէք, իսկ ես ու որդիս մինչև դիմացի սարը կ'երթանք, ալոօծք կ'անենք ու կըդառնանք»:— Արքահամը Խսահակի մէջքին բարձեց փայտը, իսկ ինքը տուաւ կրակն ու սուրը, և նոքա երկուսը գնացին միասին: Ճանապարհին Խսահակը ասաց Արքահամին. «Համբ, ահա մենք ունինք փայտ և կրակ, բայց ողջակիզի ոչխարը ուր է»: Պատասխան տուաւ Արքահամը. «Աստուած ինքը կըպատրաստէ իւր համար ողջակիզի ոչխարը, որդենիկ»: Եւ այնպէս երկուսը միասին շարունակում էին գնալը: Երբոր վեր ելան սարը, Արքահամը սեղան շինեց, դարսեց փայտը, և Խսահակին կա-

պելով զբաւ նորա վերաբ: Յետոյ վեր առաւ սուրբ և ձեռքը
բարձրացրեց, որ մորթէ Խաչակին: Բայց լանկարծ Աստուծոյ
Հրեշտակը ձախն առաւ նորան երկնքից. «Արահամ—Արահամ,
մի գիտչիր տղայիդ, հիմալ հասկացալ, որ աստաւծա-
վախ մարդ ես, և իմ սիրուս համար քո միակ որդուգ չխնայե-
ցիր:» Արահամը իր շարժը նայեցաւ և տնոսւ, որ նորանից
ոչ հեռու մի խոյ, որ է օչխար, կախուած է ծառից: Արա-
համը առաւ ոչխարը և զոհեց Աստուծուն: Նորա վերայ Աստու-
ծոյ Հրեշտակը միւս անգամ էլ ասոց Արահամին. «Այսպէս
է ասում տէրը, որովհետեւ զու հնազանդեցար իմ Հրամանին,
օրհնելով կ'օրհնեմ քեզ և բազմացնելով կը բազմացնեմ քո
սերունդը՝ ինչպէս երկնքի օստղերը և ծովի աւազը: Քո սե-
րունդից յառաջ կըզայ աշխարհի Փրկիչը:» — Սորանից յետոյ
Արահամն ու Խաչակը գտրձան ծառաների մօտ և այնտե-
ղից իրանց տունը: — Նորն խոստմունքը Աստուած կրկնեց
Խոհակին և նորա որդի Յակոբին, որ Խորակէլ կոչուեցաւ, որ
և աւելի արժանաւոր եղաւ Աստուծոյ օրհնութեանը, քան
թէ նորա մեծ եղբայր Եսուս: —

11. ՅԱԿՈԲ ՆԱՀԱՊԵՏԻ ԱՐԴԻՔԻ

Արահամի թոռը՝ Յակոբը տասներկու որդի ուներ: Հայրը
ամենից աւելի սիրում էր կրտսեր որդի Յավուէփին և կարեց
նրան գեղեցիկ ծաղկեալ շորեր, իսկ եղբայրները ասում էին
Յավուէփին և չեին ուզում նորա հետ քաղցրութեամբ խօսել:
Յավուէփը երկու երազ տեսաւ և պատմեց իր եղբայրներին:
Նա ասոց նրանց. «Լսեցէք իմ տեսած երազը. ինձ թւում
էր, թէ մէկ գաշտում որայ էինք կապում. իմ որայս կանգ-
նած էր ուղիղ. իսկ ձեր որանները սպասեցին իմ որայս
և երկրպագութիւն տուին նորան:» — Եղբայրներն ասացին:

«Միթէ մեր վերայ թագաւոր պիտի լինիս զու, կամ պիտի
տիրես մեզ»: Մի քանի օրից յետոյ Յավուէփը իր հօրն և եղ-
բայրներին միւս երազը պատմեց: «Նրազումս, ասաց նա, ինձ
երեւյաւ՝ իրու թէ արեգակը, լուսինը և տասնումեկ աստղեր
ինձ երկրպագում էին: Այս անգամին հայրն էլ լանգիմանեց
նորան, ասելով. — «Այդ ինչ երազ է, միթէ ես, մալրդ ու եղ-



բայրներդ երկրպագութիւն պիտի անենք քեզ»: — Եղբայրները
աւելի բարկացան: Յավուէփի վերայ արև երազների համար: —
Աէկ անզամ Յակոբի որդիքը արածացնում էին խաշները,
իսկ Յավուէփը տանին էր մնացել: Հայրը ասաց նրան. «Գնա
տես, առողջ են արդիոք եղբայրներդ և մեր խաշները և
Համբաւ բնձ ինձ»: Յավուէփը գնաց և գաշտում մոլորաեցաւ:
Այնտեղ մի մարդ գտու նորան և հարցրեց. «Բնչի ես ման-

գալիս» (որոնում):—Յովսէփը պատասխանեց. «Ես իմ եղբայրներին եմ մանգալիս, ասա՞ ինձ, ուր են արածեցնում նոքա:» Անձանօթ մարդն ասաց նրան. «Նոքա ալստեղ չեն. ես լսեցի որ նոքա ասացին, թէ հեռանանք ալստեղից»: Եւ նա ցոյց տուեց նրան, թէ որ կողմն էին գնացել նորա եղբայրները: Երբ Յովսէփը գտաւ եղբայրներին և մօտենում էր նրանց, նոքա սկսեցին մէկ մէկու ասել. «ահա զալիս է երազագուշը. եկէք սովանենք նրան և տեսնենք, թէ ինչպէս պիտի կտարուին նորա երազները»:— Ուուրէն, մեծ եղբայրը, ասաց. «չէ, եղբայրներ, ինչու սովանենք նորան. ինչու մեր ձեռքերը թաթախենք նորա արիւնի մէջ. աւելի լու է ձգենք նորան այս անջուր փոսի մէջ. թող երթալ ինքն իրան մեռնի:» Նորա միտքը այն էր, որ յետով հանէ Յովսէփին այնտեղից ու հօր ձեռքը հասցնէ: Երբ Յովսէփը մօտեցաւ եղբայրներին, սոքա հանեցին նորա ծաղկեալ շորերը և զցեցին փոսի մէջ: Յետով նստեցին հաց ուտելու: Յանկարծ տեսան, որ գալիս են վաճառականներ, որոնք ուղտերով ապրանք էին տանում Եզիապոս: Յուգան ասաց իւր եղբայրներին. «Յովսէփին սպանելուցը մեզ ինչ օգուտ. ինչ և իցէ նա մեր եղբայրն է. եկէք ծախենք նորան այս վաճառականներին»: Ալդ միջոցին Ուուրէնը այնտեղ չէր: Եղբայրները լսեցին Յուղայի խոսքին, Յովսէփին հանեցին փոսից և քսոն դաշեկանով ծախեցին նոյն վաճառականներին: Երբ վաճառականները Յովսէփին տարան, եկաւ Ուուրէնը: Նա չգտաւ Յովսէփին փոսի մէջ և ասաց եղբայրներին. «Յովսէփը այնտեղ չէ, ալժմ ուր կորչիմ ես:» Եղբայրները մորթեցին մի ուղ, նորա արիւնով թրջեցին Յովսէփի շորերը, և այն հօրը ուղարկելով, հրամայեցին ասել. «այս շորերը մենք գտանք դաշտի մէջ. տես արդեօք սա Յովսէփինը չէ:» Յակորը խոկոյն ճանաչեց այն և որսութիւնից աղաղակեց. — «Ո՛չ, այս իմ զաւակիս շորն է. չար զագանի մէկը կերել է Յովսէփին, չար զագանը պատա-

ուել է Յովսէփիս:» — Եւ նա խոկոյն պատառոտեց իր հազուսար, ու նորա տեղ հագու քուրձ, այսինքն ձիու մազից հիւսած հաստ շոր, որ մեծ սուդի ու տըրտմութեան նշան էր: Ողբիւրի պէս աչքերից արտառունք էր թափում ու ասում. «Ծողէք որ ես ես այս սուդուխ գերեզման մտնեմ, որդուս մօտ երթամ:» Վաճառականները Յովսէփին Եզիապոս տարան և այնտեղ ծախեցին Պետափրէս անունով հարուստ իշխանին, որ Եզիապոսի թագաւորի մեծամեծներից մէկն էր և միանգամայն դաշճապետ ու բանտերի գլխաւոր վերակացու: Բայց Աստուած օգնում էր Յովսէփին և նա անուանի եղաւ ըոլոր Եզիապոսաւմ, իբրև երազների քաջ մեկնող: —

12. ՅՈՎՍԷՓԻ ԲԱՆՏԱԿՄ

Սկզբում Յովսէփը կենում էր Պետափրէսի տանը իրեւ ծառայ և ինչ որ հրամայում էին—ամենն էլ սիրով կատարում էր: Յետով Պետափրէսը տեսնելով, որ Յովսէփ հաւատարիմ, աշքաբաց ու շնորհալի տղայ է, սիրեց նրան և ըոլոր իւր տան կառավարութիւնը նորան յանձնեց. Աստուած էլ Յովսէփի պատճառով օրհնեց Եզիապոտացու տունը: Բայց Յովսէփը գեռ չէր մոռացել եղբայրներից հասցրած վիշտը, և ահա մի նոր գժրազդութիւն հատաւ վրան:

Պետափրէսի չար կինը մի օր գանգատուեց իւր մարդուն իբրև թէ Յովսէփը անհաւատարիմ է գէկ ի նա. և Պետափրէսը, տուանց գործի խկութիւնն իմանալու, Յովսէփին զրեց բանտը: Բայց Աստուած ալստեղ էլ չժողոց Յովսէփին: Բանտայետը այնպէս սիրեց Յովսէփին, որ բանտի ըոլոր կալանաւորներին նորա ձեռքը լանձնեց և այնտեղի ըոլոր գործերը նորան էր կատարել տալիս:— Նոյն միջոցին, երբ որ Յովսէփը բանտառուն էր, թագաւորի իշխաններից երկու հոգի ըբերին այնտեղ: Նոցանից մէկը թագաւորի տակառապետն էր,

ալսինքն զինիների վերակացուն, և միւսը մաստակարարը, ալսինքն սեղանի կամ կերակրութիւների վերակացուն: Սոցա տրածը երեխ մի ծանր բան էր, որ ամբողջ տարի մնացին բանտում: Մի օր Յովսէփը տեսաւ, որ սոքա երկուսն էլ շփոթած, երեսները կախած են, հարցրեց նոցա.—«Խնչ է պատճառը, որ ալսօր այդպէս տրտում էք:»—«Զարմանալի երազներ տեսանք, ասացին նոքա, և մէկը չկալ, որ նոցա, մեկնութիւնը տալ մեզ:»—Յովսէփը ասաց նոցա. «Միթէ չգիտէք, որ մեկնութիւնը Աստուծոյ ձեռին է. բայց պատմեցէք ինձ:»—

Տակառապետն ասաց. «Խնձ երեցաւ, որ դիմացս խաղողի մի որթ կալ: Որթի վերալ էլ երեք հատ կանանչ ճիւղ և ճիւղերի վերալ խաղող հասած: Իմ ձեռքումս էլ կար Փարաւոն թագաւորի բաժակը, խաղողը ճմլում էն բոժոնի մէջ և տալիս էի թագաւորի ձեռքը:» Յովսէփին ասաց նորան. «Երեք ճիւղերը—երեք օր են. երեք օրից յետոյ Փարաւոնը յետ կըդարձնէ քեզ քո պաշտօնը, որ առաջուտոյ պէս Փարաւոնի բաժակը իւր ձեռքը տաս: Նւ երբ որ յաջողութեան մէջ լինիս, զու էլ ինձ միտոդ բեր և այս բանտիցը ազատից. ևս ոչինչ լանցոնք չեմ արած:»—Երբոր Յովսէփը մեկնեց տակառապետի երազը, մատակարարն էլ ասաց. «Խս տեսալ երազումս, որ գլխիս վերալ դրած ունէի երեք խան, վերին խանումն էին թագաւորի սիրած սմէն տեսուկ կերակութիւնը և թռչունները ուտառմ էին նրանցից:»—Յովսէփը պատասխանեց. «Երեք խանները—երեք օր են. երեք օրից յետոյ Փարաւոնը քո գլուխը կը վերցնէ վրաչիցդ, մարմինդ կախ կը տայ փարտից և թռչունները քո միուր կ'ուտեն:»—Խնչպէս ասաց Յովսէփը, այնպէս էլ եղաւ: Երբարդ օրը Փարաւոնի ծննդեան տարեգարձն էր. ուտափի և իւր ծառանների համար մեծ հանդէս կատարեց պալատում. միուր եկան տակառապետն ու մատակարարը.—Հրամայից, որ տակառապէտին իր առաջուտոյ պաշտօնը որուի, իսկ մատակարարը կախողան

Հանուեի: Բայց տակառապետը մոռացաւ Յովսէփին և նա ու իս երկու տարի մնաց բանտում:—

13. ՅՈՎԱԿԱ ՓԱՐԱՔԸ

Պատահեց, որ Փարաւոնը երկու երազ տեսաւ: Նրան երեցաւ, իրը թէ կանգնած է գետի եղեցին: Դետի միջից դուրս եկան եօթն գեղեցիկ և պարարտ կովեր և արածում էին ափում: Նոցանից յետոյ նոյն գետից դուրս եկան ուրիշ եօթն կովեր, բայց այնպէս նիշար, որ նոցա նմանը նա երբէք չէր տեսել, և կանգնեցան նոյն կովերի մօտ: Եւ այդ նիշար կովերը պարարտ կովերին կերպն: Փարաւոնը զարթեցաւ, բայց կրկին քնեց: Յետոյ զարձեալ մէ ուրիշ երազ տեսաւ. իրը թէ մէկ փունջ ցովենի վրալ եօթն հատ լիք և գեղեցիկ հասկեր կալին. նոցա մօտ դուրս եկան եօթն հատ էլ փոփտ և չոր հասկեր, և այս փոփտ հասկերը կերան այս եօթն լիք հասկերը: Փարաւոնը զարթեցաւ: Առաւտաւն վաղ կոնչել տաւաւ իր բոլոր իմաստուններին: Նոցա պատմեց երազները, բայց ոչ ոք չկարողացաւ նոցա մեկնութիւնը տալ: Այն ժամանակ տակառապետն ասաց նորան. «Յգիպատառմ կալ մի ծոտու, Յովսէփ անունով Երբակեցի երիտասարդ, որ երազ մեկնել լուգինէ:» Թողուսորը հրամայից, որ իւր մօտ բերեն նորան: Երբ Յովսէփն եկաւ, թողուսորը տասց. «Խս երազ տեսալ, բայց մարդ չկալ, որ մեկնէ լինձ. իսկ քեզ համար տառմ են, թէ ինչ երազ որ լինս, կարող ևս մեկնել:» Յովսէփը պատասխան տուաւ, «առանց Աստուծոյ կարելի չէ յաջող ու ճշմարիտ մեկնութիւն տալ տերաթեանդ երազին:» Երբ որ փարաւոն պատմեց իր երազները, Յովսէփին ասաց. «Տէր արքայ, քո տեսած երկու երազը էլ մի և նոյն նշանակաթիւնն ունին. եօթն զեր կովեր և եօթն լիք հասկեր, եօթն առաւտթեան տորիք են, նոյնուիս և եօթն նիշար կովեր ու եօթն վոփտ հասկեր

սովի տարիք են»։ Այդ երազներով Աստուած քեզ լայտնում է, թէ ի՞նչ պիտի ամէ, ալսինքն թէ առաջ եօթն տարի շարունակ առատութիւն կը լինի, լետով նոցա կը լաջորգեն եօթն սովի տարիներ։ Աւքեմն մէկ իմաստուն և խոհեմ մարդ պիտի ընտրես և բոլոր նզիստոսի վերալ կառավարիչ կարգես։ Թող նա առատութեան տարիներին ցորեն հաւաքէ, և սովի տարիներին նզիստոց վերալ ծախէ, որպէս զի ժողովուրդը սովամտհ չլինի»։ Յովսէփի տուած մեկնութեան և խորհրդին շատ հաւանեցաւ Փարաւոնը և ասաց Յովսէփին. «Քեզանից խմաստուն, քեզանից խոհեմ մարդ ես չունիմ. ես քեզ կըդնեմ գլուխ բոլոր նզիստոսի վերալ, ամէն մարդ հնազանդ կըլինի քո Հրամանին. և ես միայն թագաւորական աթոռուխ բարձր կըլինիմ քեզանից»։ Փարաւոնը իր ձեռքից հանեց մատանին և հազցրեց Յովսէփի մատին, նմանապէս բահեզեալ շոր հազցրեց, զիին ակի մանեակ կախեց, նստեցրեց նորան արքունի կառքի մէջ և նորա առջնեկ մունեափիլ կանչում էր. «Երկրազեցէք, առ է երկրի հալրը»։ Այն ժամանակ Յովսէփը երեսուն տարեկան էր։

14. ՅՈՎՍԷՓԻ ԵԳԻԱՅԻՆԵՐԸ ԳԱԼԻՒ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ

Թագաւորի երազները կատարուեցան։ Հասան առատութեան եօթն տարիները։ Յովսէփ անշատ ցորեն ժողովեց և ամբարեց ամէն քաղաքներում։ Սովի տարիներն էլ հասան։ Յովսէփը սկսեց ցորեն ծախել։ Քաղցածութիւնը տիրեց նաև Քանանց առաջաց երկրին, ուր կենում էր Յովսէփի հալրը։ Յակոբն ասաց իր որգւոյ. «Ես լսեցի, որ նզիստոսում ցորեն է ծախում. գնացէք այնտեղ և գնեցէք, որ քաղցածութիւնից չը մեռնիք»։ Յովսէփի տասն եղբայրները հաւաքուեցան ու գնացին նզիստոս, միայն Բենիամինը մնաց հօր մօտ տանը։ Եղբոր եղբայրները հասան նզիստոս, նոցա բերին Յովսէփի

առաջ։ Յոքա խոնարհ երկրազագեցին նորան, բայց չճանաչեցին. իսկ Յովսէփը ճանաչեց նոցա և խկոյն միաը բերեց իր տեսած երազները։ Յովսէփը Հարցրեց նոցա. «Ո՞ր տեղից էք զալիս»։ Նոքա պատասխան տուին. «Քանանացւոց երկրից»։ — «Քուք լրան էք, ասաց նա. դուք եկել էք իմանալու, թէ ի՞նչ է լինում նզիստոցոց երկրում»։ — «Ոչ, տէր», պատասխանեցին եղբայրները. «մենք ցորեն գնելու ենք եկել, ամէնքն էլ մէկ մարդու որդի՝ խազալ ու հանդարատ մարդիկ ենք»։ — մենք տասներկու երբայր էինք. մեզանից մէկը կորաւ, իսկ փոքրը մնաց տանը հօր մօտ»։ — «Նթէ դուք ճշմարիտն էք իրուում», ասաց նա, «Ճեզանից մէկը ուզարկեցէք տուն, թող նա բերէ ձեր փոքր եղբօրը, իսկ միւսներդ իբրև գերի կըմնաք ինձ մօտ»։ — Նա Հրամայեց նրանց բանոր տանել։ Բայց երբորդ օրը Յովսէփն ասաց նոցա. «Ես աստուածավախ մարդ եմ և չեմ ուգում որ ձեզ անիրաւութիւն լինի. ուրեմն թէ որ դուք անիմսան ու անմեղ մարդիկ էք, տրապէս արէք, թող ձեզանից միայն մէկը մնայ բանափ մէջ, իսկ դուք ձեր առած ցորենը տարէք տուն և տպա ձեր կրտսեր եղբօրը բերէք ինձ մօտ, որ իմանամ թէ ճշմարիտ է ձեր խոռքը. իսկ առանց նորան ինձ չերեւաք»։ — Նո Հրալրեց նոցա առաջնե Շմաւանին կապել, լետով պատուիրեց, որ նոցա պարկերը ցորենով լքցնեն ու բերած փողերը ամէն մէկինը իր պարկի մէջ դնեն թաքուն։ Եւ եղբայրները սկսեցին մէկիմէկու ասել. «Սատուած միզ պատմում է մեր եղբօր դէմ արած մեղքի համար. մենք տեսնում էինք նորա նեղութիւնը և ուշ գտարձրինք նորա աղաշանքին»։ Ուուրէնն էլ վրալ բերաւ, թէ «մտերնիդ չէ, որ առում էի, թէ ոչդ մանուկի զէմ մեղք մի զործէք. և դուք ինձ չլսեցիք. և ահա ալժմ մենք ենք տանջփում»։ Նոքա այսպէս խոռում էին և զդիտէին, որ Յովսէփը նոցա ամէն տսածը հասկանում է, որովհետեւ նոցա հետ թարգմանով էր խոռում։ Յովսէփը հեռացանից և լաց էր լինում։ Եղ-

բարիները տրամութեամբ լցուած ուղւորեցան դէպի տուն:— ծանապարհին երբ որ իջևանեցան, նորանից մէկը բաց արեց իր պարկը և իր փողերը տեսաւ նորա մէջ: Նա ալդ պատմեց եղբայրներին և նոքա ևս իրանց պարկերում միւնորնը գտան: Նոքա զարմացած մէկմէկու ասում էին. «այս ինչ փորձանք է բերում Աստուած մեր գլուխն»:— Երբ նոքա հասան տուն և ինչ որ նզիպտոսում պատահել էր նոցա՝ պատմեցին, Յակոբը շատ տրտմեցաւ և ասաց. «Դուք ինձ անզաւակ թողեցիք. Ցովսէփը չկայ, Շմաւոնը չկայ, Հիմալ Բենիամինն էլ ուղում էք տանել. այս ամէն փորձանքները ինձ համար էին պահուած: Զէ, Բենիամինին չեմ արձակիլ. թէ որ ճանապարհին հիւանդանալ կամ բոն պատահի, լուղի ողբալով գերեզման պիտի իջնեմ:—

15. ՅՈՎՍԵՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ
ԵԳԻՊՏՈՍ

Երբոր նզիպտոսից բերած ցորենը հատաւ, Յակոբ ասաց իր որդոց. «Դնացէք էլի նզիպտոս և, եթէ կարելի է, գնեցէք ցորեն:» Նոքա ասացին. «Նզիպտոսի իշխանը հրամակեց մեզ, որ առանց Բենիամինի չերթանք նորա աչքին. ուստի թէ որ Բենիամինը կըտաս՝ կ'երթանք, ապա թէ ոչ, պէտք է առանց հացի մնանք ու ամէնքս քաղցածութիւնից մեռնենք:» Յահացի ասաց. «ինչ հարկ կար նզիպտոսի իշխանին սուելու, որ մէկ ուրիշ եղբայր էլ ունիք:» Նոքա պատասխանեցին. «ինչ անէինք, բան չժողեց որ չհարցնէ. ում որդիք էք, ձեր հալը նուզ է, ուրիշ եղբայր էլ ունիք. ում մտքիցը կ'անցնէք, որ նա պէտք է ասէք մեզ, թէ զնացէք ձեր եղբայրն էլ պատեղ բներէք:» Յուդան ասաց. «արձակիր Բենիամինին ինձ համար լին: Աս երաշխուազ եմ նորա համար: Աթէ ես նրան լիտ

չբերեմ, թող նորա լանցանքը իմ վերալ լինի բոլոր իմ կեանքումո:» Այն ժամանակ Յակոբը ասաց. «եթէ ալդպէս է, եկէք պասպէս արէք. Հետերնիդ ընծաներ տարէք Նդիմտոսի իշխանին մեր երկրի բերքերիցը՝ ուետին (որ է անուշահամ ու անուշահոտ իւղ), մեզը, խունկ և ընկուզ. և պարկերումք գտած փողերն էլ լետ դարձրէք նորան:» Եղբայրները հաւաքուեցան ու ճանապարհ ընկան: Երբ նոքա եկան Յովսէփի մօտ, նա իւր ծառաներին հրամայեց, որ նրանց տուն տանի: Նդրայրները վախեցած մէկմէկու ասում էին. մեզ անպատճառ կըմեղադրեն մեր պարկերումք գտած փողերի համար և գերիի պէս կըտահեն իրանց մօտ: Նոքա ասացին հազարապետին. «Մենք արդէն գալիս էինք Եղիպտոս հաց գնելու և աշան ինչ պատահեց մեզ՝ մենք մեր պարկերում գտանք այն փողերը, որ մենք վճարել էինք ցորենի համար:» Բայց նա ասաց նոցա. «մի վախենաք, Հանգիստ կացէք. Աստուած ինքը յետ է գարձրել ձեզ ձեր փողերը, ես ամէնը ստացել եմ ինչպէս հարկն էր:» Շուտով Շմաւոնին էլ բերին նոցա մօտ: Եղբայրները իմացան, որ իշխանի տանը պիտի ճաշ ուտեն ու պատրաստեցին իրանց ընծաները: Կէսօրին երբոր Յովսէփը տուն եկաւ, իրենց հետ բերած ընծաները մատուցին նրան ու ընկան երկրպագութիւն արին: Հարցընց Յովսէփը. «ինչպէս էք. ինչպէս է, առնդզ է ձեր ծերունի հալրը:» Ողջ ու ուռողջ է քո ծառալդ՝ մեր հալրը, պատասխան տուին նոքա: Յովսէփ տեսաւ Բենիամինին ու հարցընց. «ա՞յս է ձեր փոքր Եղբայրը, որ ինձ մօտ պիտի բերէիք. Աստուծոյ ողորմութիւնը վրագ լինի, որդեսկը:» Ալսեկ Յովսէփը շուտ հեռացաւ, որովհետեւ աչքերը արգէն լցուած էին արտասուքով. նա մտաւ միւս սենեակը և այնաեղ լաց եղաւ: Յետոյ երեսը լուաց, սիրտը ամուր ըռնեց, դուրս եկաւ և ասաց. «կերտկուք բերէք:» Կերակուրները ըերին ու իրին առանձին տուին, Եղբայրներին առանձին. Նորանց հետ ճաշով Եղիպտոսացիներին

էլ առանձին: Յովսէփն ինքը յատկացրեց եղբայրների համար տեղերը. նոցա նստացրեց աւագութեան կարգով: Արդ զարմացրեց եղբայրներին: Յովսէփ իր սեղանից էր ուղարկում նոցա կերուկուր և Բենիամինին հինգ անգամ աւելի էր տալիս, քան թէ ուրիշներին. այսպէս եղբայրները կերան ու խմեցին նորա մօտ: Ճանապարհ ձգելիս, Յովսէփ հրամայեց որ նոցա պարկերը ցորենով լքցնեն ու գնեն նոցու մէջ՝ ցորենի համար քերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ, բաց ՚ի փողերից, հրամայեց գնել իր արծաթի սկիհն էլ:

16. Թէ ԵԿՉՊԵՍ ԵՎԱՅՅԻՆԵՐԻ ՃԱՆԱՋԵՑԻՆ ՅՈՎՍէՓԻՆ

Երբոր եղբայրները փոքր ինչ հեռացան քաղաքից, Յովսէփ ուղարկեց նոցա ետեից իւր հազարապետին: Հազարապետն հասնելուն պէս ոկտու սոստկութեամբ խօսել նոցա հետ. «ինչու բարութեան փոխարէնը չարութեամբ էք հատացանում: Ինչու գողացաք իմ տիրոջու արծաթէ սկիհը»: Եղբայրները սարսափեցան ու ասացին. «Արդ ինչ խօսքեր են, որ լուսմ ենք, տէր. քան լիցի, որ մենք այդպիսի բան անենք: Մեր միջից ում մօտ որ գտնուի սկիհը, թող նա մահապարտ լինի, իսկ մենք ամէնքս էլ գերի լինինք մեր տիրոջը»: — «Ոչ, ասաց Հազարապետը, ում մօտ որ գտնուի սկիհը, թող նա լինի ինձ գերի, միւսները յանցանք չունին:» Նոքա բաց արին իրանց պարկերը: Հազարապետը մեծից մինչեւ փոքրի պարկերը նայելուց յատոյ, սկիհը գտաւ Բենիամինի պարկի մէջ: Սարսափը տիրեց եղբայրներին: Ահաւգողով նոքա էլի յետ դարձան քաղաքը: Յովսէփը գեռ ևս տանն էր: Ամէնքը գնացին Յովսէփի մօտ ու երեսի վրայ ընկնելով՝ երկրպագութիւն արին: Յովսէփը ասաց նոցա. «ինչ է այդ ձեր արտծը»: Յուղան պատասխան տուաւ. «ինչ պիտի տաննք մեր տիրոջը, ինչ պատասխան տանք, ինչով կարող ենք արդարանուած:

առած մեր մեղքերի համար պատժում է մեզ: Ահա ամէնքս էլ քո գերիներն ենք, թէ մենք և թէ նա, որի մօտ գտնուեցաւ սկիհը:» Բայց Յովսէփը ասաց. «քան լիցի, որ ես արդպիսի բան անեմ: Ում մօտ որ գանուեցաւ սկիհս, նա կըլինի իմ գերիս, իսկ գուք բարով զնացէք ձեր հօր մօտ»: — Այն ժամանակ Յուղան սկսեց աղացել, որ նա այդ չանէ: «Թէ որ հիմա երթանք մեր հօր մօտ, ասում էր նա, — և մեզ հետ չլինի մեր փարբեկութիւնը խոկոն կը մեռնի ծերունին: Աս երաշխաւոր եղան հօրս Բենիամինի համար և ասացի նորուն, որ եթէ յատ չըերեն երեխալին, յանցաւոր լինեմ բոլոր իմ կեանքում: Աւ ինչպէս երեամ հօրս: Ոչ, ես չեմ կարող հօրս չարչարանքը ու մահը տեսնել:» Զկարողացաւ Յովսէփը այլ ևս գիմանուլ: Նա բարձրածախն լաց եղան և ասաց. «Ես Յովսէփն եմ. լիբաւի մինչեւ հիմա իննդանի է հայրս»: Եղբայրները այնպէս շփոթեցան, որ չկարողացան մի խօսք էլ տան: «Մոտ եկէք», ասաց Յովսէփը: Նոքա մօտ եկան: Նա կրկնեց. «Ես ձեր այն Յովսէփ եղբայրն եմ, որին գուք ծախսեցիք. բայց մի տրամիք ինձ ծախսելուդ համար, որովհետեւ Աստուած ինձ ուղարկեց ալտուկ, որ ձեր փրկութեան պատճառ լինիմ: Շուտ արէք, զնացէք իմ հօրս մօտ և պատճեցէք նրան իմ փառքի մտակին ու ասացէք՝ ահա թէ ինչ է տում քո որդի Յովսէփը: — Աստուած ինձ բոլոր Եղիպտոսի տէր կարգեց. Եկ ինձ մօտ, մի ուշանար: Գու կըրնակուիս ինձ մօտ: Աս կըկերակիրեմ քեզ, որտիհետեւ էլի հինգ կուիս ինձ մօտ: Ես կըկերակիրեմ քեզ, որտիհետեւ էլի հինգ կուիս ինձ մօտ: Յովսէփը միւս եղբայրներին էլ համբուրում էր լաց լինում: Յովսէփը միւս եղբայրներին էլ զրկում էր նորան և լաց էր լինում: Յովսէփը միւս եղբայրներին էլ համբուրում էր և նրանց զրկելիս լաց էր լինում: Նոքա էլ սիրա արին և սկսեցին խօսիլ Յովսէփի հետ: Նա շորեր պարզեց, որ զայ: Յովսէփ եղարաներին ճանապարհ զցելիս ասաց. «Ճանապարհին չփիմէք»: — բայցներին ճանապարհ զցելիս ասաց.

17. ՅԱԿՈԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Եղբայրները եկան տուն և ասացին իրանց հօրը. «Յովսէփը կենդանի է. Եգիպտոսի թագաւորը իւր ամբողջ երկրի վերալ իշխան կարգեց նորան»: Յակոբ սրտի ուրախութիւնից չեր ուզում հաւատալ. բայց երբոր Յովսէփի ուղարկած կառքերը և ընծաները տեսաւ, նորէն երիտասարդանալու պէս կենդանացաւ ծերունին: «Եթէ լիրաւի Յովսէփ որդիս գեռ կենդանի է, ասաց նա, սորանից մեծ ուրախութիւն չի կարող լինել ինձ համար. ուրեմն քանի որ չեմ մեռած՝ գնամ տեսնեմ նորան»: Եգիպտոս գնալուց առաջ Յակոբ. Աստուծուն դոհ մատոյց: Աստուած տեսիլքով յայտնուեցաւ Յակոբին ու ասաց. «Մի վախենար, գնա Եգիպտոս: Ես ինքս կը գամ քեզ հետ Եգիպտոս, և ինքս դարձեալ կը հանեմ քո ազգատոհմը այն տեղից: Յովսէփը իւր ձեռքով կը փակէ քո ուչքերը»: — Յակոբը իւր հետ Եգիպտոս տարսու իր բոլոր որդոց, թոռանց, բոլոր խաշները և իւր բոլոր ստացուածքը: Յովսէփին իսկոյն կառքը պատրաստել տուաւ և իւր հօր առաջը դուրս եկաւ: Մօտը հասնելուն պէս՝ վզովը փաթաթուեցաւ ու բարձր ձարնով լաց եղաւ: Հայրն էլ ասաց արտասուօք. «Այսուհետեւ սիրով կը մեռնիմ, որովհետեւ տեսալ որ դու կենդանի ես»: Ինքը Փարաւոնն էլ կամեցաւ տեսնել Յովսէփի հօրը և եղբայրներին: Երբ նոքա ներկայացան թագաւորին, նա Հարցրեց նոյտ. «Ձեր գործն ի՞նչ է». Նոքա պատասխան տուին. «Մենք ոչխարների հովիւ ենք. եկել ենք այս երկրի մէջ բնակուելու, որովհետեւ Քանանացւոց երկրումը սաստիկ սով է»: — Նա ասաց Յովսէփին. «Եգիպտացւոց աշխարհը բաց է քո առաջ, երկրի ամենալաւ տեղումը բնակեցրու հօրդու եղբայրներից»: Յետոյ

օրերը»: Յակոբը պատասխանեց. «Հարիւր երեսուն տարեկան եմ. սակաւ և դժուարին բնենքիս օրերը»:

Յակոբ նահապետը տասն և եօթն տարի կացաւ Եգիպտոսի մէջ: Նրաոր տեսաւ՝ որ մահուան ժամանակը մօտեցել է, կանչեց Յովսէփին և ասաց նրան. «Երբ որ ես մեռնիմ, չժառդես ինձ Եգիպտոսում, ես կամենում եմ իմ Հայրերի հետ ննջել. Դուրս տար ինձ Եգիպտոսից և նոյտ գերեզմանումը թաղիր»: Յովսէփը պատասխանեց. «Խօսքը կը կատարեմ»: Յակոբն ասաց. «Երգուիր ուրեմն»: Յովսէփը երգուեցաւ. Մեռնելուց առաջ Յակոբն օրհնեց իր բոլոր որդոցը. Յուդայի համար մարգարէացաւ, թէ նորա սերունդներից չեն պակասիլ թագաւորներ, մինչեւ որ չգալ Փրկիչը: Եետոյ պարկեցաւ իր մահճի վերայ և վախճանեցաւ: Յովսէփ ընկաւ իր հօր երեսի վերայ, Համբուրեց ու լաց եղաւ: Յակոբի բոլոր որդիքը հաւաքուեցան և ինչպէս Հայրը պատուիրել էր, ալսպէս էլ արեցին. տարան Քանանացւոց երկիրը և այնտեղ թաղեցին: Հօրը մեռնելուց՝ եղայլներն ասացին. «Ի՞նչ պիտի անենք, եթէ Յովսէփը ոխ պահելով իւր սրտի մէջ, կամենալ մեզանից վրէժ առնել այն չարութիւնների փոխարէն, որ մենք գործեցինք նորա դէմ»: Ուստի սիրտ արին, մարդ ուղարկեցին Յովսէփի մօտ ասելու, թէ՝ «մեր Հայրը մեռնելիս պատուիրեց, որ թաղութիւն խնդրենք քեզանից. ուրեմն ներիր մեզի մեր յանցանքը»: Լաց եղաւ Յովսէփը այն սրտաշարժ մեղտիք վերայ: Նա կանչեց իւր եղբայլներին և ասաց. «Ես իմ գրէժու չեմ առնիլ ձեզանից»: Ես վախենում եմ Աստուծուց: «Դուք ուզեցիք ինձ չարիք անել, բայց Աստուած ինձիք բարիք կամեցաւ, որ ժողովուրդի այսքան բազմութիւնը ազատուի մահից: Ուրեմն մի վախենաք. ես կը կերտակրեմ ձեզ և ձեր որդոց»: Եթէ այս պահանջութեան մասին այս պահանջութեանը առ այս ուղարք համար այս պահանջութեանը առ այս ուղարք համար

Առցելաւ մասնաւ պայման ուղարկած է պրեմ
— 18. ՀՀ ՔԵԱՅԲ. ԵԳԻՊՏՈՍՈՒԽՄ

— 18. ՀՀ ՔԵԱՅԲ. ԵԳԻՊՏՈՍՈՒԽՄ
Քակորի ամեռնելուց այստիւ դրամակամ գիշեաւ
Քակորի ամեռնելուց այստիւ դրամակամ գիշեաւ
Ա ՀԱՅ ՅԱԿՈՐԻ ԱՄԵՐՆԵԼՈՎ ԱՅՍՏԻ ԴՐԱՄԱԿԱԿԻ մէջ նորա
ցելը բազմացաւ և մի ազգ յառաջացաւ, որ Ամբայեցի, Հըելի
Ա ՅԻՐԱԼԵԼՈՎ Եր Կոչում: Ա Այս ազգը տասներկու ցեղ բա-
ժանուեցաւ, Յակորի տասներկու թորգուց: Թուով: Խորալելոցիք
Եգիպտոսի մէջ ամսակուելով, ասակաւ առ սակաւ իւրեանց
Հայրենիս պովորութիւնները թողին, և մէկ քանիսը իւրեանց
հաւտան անգամ մուտացան: Աստուած նրանց աղաստելու հաւ
մարդիւը ողորմութիւնից զրկեց: Եղիպտացոց Փարաւոն կո-
չուած թագաւորներն սկսան ծանր աշխատութիւններով նը-
րանց նեղացնելափսիկ Փարաւոններից մէկը Ասակալի Հրաման
հանեց, որ Հըելից նորածին բոլոր արուաւ աղալքը սպանուին:
Այս ժամանակ Հըելիք լիշեցին իւրեանց Աստուծունեւ և սկան
Նորա անզօրմութիւնը, և ազատութիւնը խնդրել: Աղօրման
Ամստածախզալով նոյն վերաբ նոցաւ աղաստարար, ուզարկեց
Մովսէսին ամսան: Հիմա քու իւրի այս պարագանը վայ պարտիստ է եղա-
կար պահն որ անձանանք այսուհետեւ այցու մը զան առ նիշու
մէջ ամսան բայց Փարաւոն ՄՈՎԱԽԵՍ ՄԱՐԹԱԲԵԽ այս պայքա-
ծուուր ողջամ ան պայան հման: Են այցու առ մի նորան իրու
նորան երրոր Մովսէսը ճնուեցաւ, մալրը ակզենտու նորան իւր
տանձէջապահեց, որին կամուացիք չափանեն: լետոյ դրաւ ձիւ-
թով ծեփած կողովում մանձեց զետում բուսած եղեգների մէջ
այն տեղի մօտ, և ուր վողանում էր Փարաւոնի աղջիկը: Թա-
գավորի աղջիկը (տեսաւաւան) փոքր կօղովը, միջից հանեց տար-
զալին որիքնորդեգիր աարաւ և անունը գրաւ Մովսէս, որ
նշանակում է ջրից հանութ: Մովսէսը մեծացաւ և թագաւորի
պալատի մէջ կըթուեցաւ. բայց աւելի յաւ էր հտամառում
չաթարուիլ իւր ազգակից Աստուծոյ ժողովրդի հետ, քան թէ
միանակ երկրաւոր զուարձութիւններ վայելել:

Մովսէսը տեսաւ, որ մի Եգիպտացի սաստիկ ծեծումէ մի
Հըելիքի: Նա Հըելակամ տէր կոցաւ, և նորա հակառակորդին
սպանեց: Փարաւոնը ար լոելով, Հրամակեց՝ որ Մովսէսին
սպանեն: Մովսէսը մերձակալ Արտքացոց երկիրը փախչելով,
մահից ողատուեցաւ:

Սրարփալի մէջ Յոթոր քրմի տանը մնաց, և նորա գստեր
Հետ ամստոնացաւ և քտո ասուն տարի կացաւ նորա մօտ: Նաս
ժուած մուտքում պատճեն սպանութագում սպանութագում տանը



Էր ցաւում դժբաղդ Խորալելոց վերաւ: Ունուես էր կար-
ծում, թէ այն ազգը նեղութիւնից ալնափէս պիտի փճանալ,
ինչպէս որ կրակս սնչանում է ծառը: Մէկ անգամ պաշտի
մէջ տեսաւ մի փշոտ թուփ, մորենի, որ վառվաւ էր, բայց
չէր ալրպում (անկէպ մորենի): Մօնեցաւ այն թփին և նորա
միջից ձայն լսեց, որ ասում էր. «Ես եմ քո հայրերի Աս-

տուածը, եմ տեսնում եմ իմ ժողովրդեանս չարչարանքը՝ և կամենում եմ ազատել նրան: Ուրեմն գնա՞ Փարաւոնի մօտ և իմ ժողովուրդս նգիպտոսից հանիբը»: Մովսէս հրաժարուեցաւ այս պաշտօնը կատարելուց, պատճառ բերելով թէ իրոն չեն հաւատալ: Այն ժամանակ Աստուած նորան տուաւ հրաշագործութիւններ անելու զօրութիւն: Մովսէս իւր ԱՀարոն եղբօր հետ Փարաւոնի դիմացն ելու և տասն հրաշալի պատիմներով ստիպեց թագաւորին, որ Հրէից արձակէ: Տասներորդ պատժից առաջ Մովսէս հրամալեց Հրէից, որ ամէն մէկը իւրեանց հօտի միջից մի մի գառն ընտրեն, երեք օրից յետոյ մորթեն, նորա արիւնով նշան գնեն իւրեանց դռների վերայ և այն ուտեն եղեգ ասուած գառն խոտով և բազարջ հացով: Եւ ասաց նոցա թէ՝ «Այս գիշեր Աստուած պէտք է կոտորէ Եգիպտացւոց անդրանիկներին, իսկ առանց վնասելու կ'անցնի այն դռների մօտով, որոնց վերայ արիւն է քոււած»: Հրէալք Մովսէսի հրամանը կատարեցին: Գիշերը բոլոր նգիպտացւոց տների մէջ լաց ու ողբ տարածուեցաւ: Ամենայն տան մէջ մեռել կար, Հրէից տներից զատ: Նոյն իսկ Եգիպտացիք ինդքում էին Հրէաներից, որ շուտով հեռանան իրանց երկրից:

Այն օրից սկսած՝ Հրէալքը ամենայն տարի մորթում են և ուտում գառն՝ եղեգով ու բազարջ հացով, իբրև նշան որ գառան արիւնով ազատուեցան Եգիպտոսի ցաւալի վիճակից: Այն օրը Պատեհ կամ Զատիկի կոչեցաւ, որ նշանակում է այս կամ առաջարկութիւն:

20. ՀՐԷԱՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈ

Երբ որ Եգիպտացիք իւրեանց ննջեցեալներին թափեցին, ակսան զջալ, որ Խորալէլացւոց թող տուին: Փարաւոնը իւր զօրքերով նոցա յետեւից ընկաւ և կարմիր ծովի եղերքին նոցա հասաւ: Խորալէլացիք վախեցան: բայց Մովսէսը քաջա

Երելով նրանց, գիշեր ժամանակ Աստուածոյ հրամանով գտւագանը ջրին խփեց: Այն ժամանակ մի սաստիկ հողմ վերկացաւ, ծովի ջրերը երկու բաժանեց և յատակը չորացրեց: յամաք յատակի վրայից անցան: Իսկ ջուրը պարսպի նման աջ ու ձախ կողմը կանգնած էր: Եգիպտացիք նոցա ետելից ընկան և զրեթէ ծովի մէջտեղն էին, երբ Խորալէլացիք արդէն անցան միւս եղերքը: Այն ժամանակ Մովսէս իւր գաւազանը մեկնեց դէպի ծովը և ջուրն իսկոյն միացաւ: Փարաւոնը և նորա բոլոր զօրքերը խեղդուեցան:

Խորալէլացիք յատաջ տարան իւրեանց ճանապարհը Արտբալի անսալատի մէջ: Նոքա այն ճանապարհորդութեան մէջ շատ նեղութիւններ կրեցին: Բայց ողորմածն Աստուած ամէն բանի մէջ օգնում էր նոցա: անսալատի մէջ նոցա ճանապարհ էր ցոյց տալիս: Նորա հրամանով օդի մէջ մէկ սիւն երևեցաւ, որ ցերեկը ամալի պէս էր և Խորալէլացւոց արելից էր պաշտպանում, իսկ գիշերը կրակի նման էր լինում և ճանապարհը լուսաւորում էր: Երբ նոքա Եգիպտոսից առած բոլոր հացը հատացրին, Աստուած մանանայ տուաւ նոցա, ալսինքն սննդարար քաղցր հատիկներ, որ ամէն տուաւոտ անօպատի մէջ իջնում էր մեծ քանակութեամբ: Երբ նոցա ջուրը պակասեցաւ, Մովսէս իւր գաւազանը ժալուն խփեց և քարի միջից ջուր բղիսեցրեց: Ամաղեկացիք ճանապարհին նոցա վերալ յարձակուեցան, բայց Խորալէլացիք Աստուածոյ օգնութեամբ յաղթեցին նրանց:

21. ՄԵՆԱ ԼԵՐԱՆ ՎԵՐԱՅ ԱՍՏՈՒԹՈՅ ՏՈՒԱԾ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

Խորալէլացիք՝ Եգիպտոսից գուրս գալուց իսուն օր յետոյ, Սինայ լերան մօտեցան: Երբ այնտեղ կանգնած էին, թանձը մառախուղ Սինալի գտգաթը պատեց, կալծակներ էին արձակ-

զաւմ և սրատունք էր լինում: Խսրակէլացիք լսեցին Աստուծոյ ձաւնը, որ ժողովրդին յալտառում էր իւր սուրբ կամքը, ասելով:

1, Ես եմ Տէր Աստուծուքո, և ոմի լիցին քեզ ոյլ աստուածք բաց յինէն:

Ես եմ քո Տէր Աստուծը և ինձանից զատ ուրիշ աստուածներ չունենա:

2, Ո՞ի արասցես զու քեզ կուռս բատ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ՚ի վեր, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ:

Քեզ Համար կուռք մի շինիր, ոչ վերեւի ըաների նմանութեամբ, ոչ ներքեւ՝ գետնի վերալ եղածների, և ոչ գետնի առակ՝ ջրերի մէջ եղածների նմանութեամբ. մի երկրպագիր նոցաւ և մի պաշտիր. կամ թէ աշխարհի մէջ եղած ոչ մի բան իրեւ Աստուած մի պաշտիր, կռապաշտութիւն մի անիր, Հոգուդ Հակառակ ըան մի անիր ոչ փողի Համար, ոչ ուրիշն Հաճոյանալու Համար. մի արքենար և որկրամոլ մի լինիր:

3, Ո՞ի առնուցուս զանոն Աստուծոյ քո ՚ի վերայ մնատեաց:

Զուր տեղը Աստուծոյ անունը մի լիշիր: Աստուծոլ անանը լիշէ միտոն աղօթքի և խօսակցութեան մէջ մէծ լարգանքով: Պէտք չեղած տեղը երգում մի անիր: Սուտ մի խօսիր. մանաւանդ սուտ երգում մի անիր:

4, Յիշեա սրբել զօր շարաթու, զվեց օր զործեսջիր և արասջիր զամենայն զործու քո, իսկ զեօթներորդ օրն շարաթ նուիրեա Տեառն քում:

Մտքումդ պահէ, որ շարաթ և տօն օրերը պէտք է

սուրբ զործեր անել և ոչ թէ անզործութեամբ անցկացնել վեց օրուայ մէջ քո բոլոր զործքերդ արա, իսկ եօթներորդ վեց օրը բոլոր Աստուծուն նուիրէ՝ այն օրը աշխատիր Աստուծոլ և աղքատների համար:

5, Պատուեա զձայր քո և զմոյր քո, զի բարի լինիցիք քեզ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի:

Պատուիր քո ծնողներիդ և նոցա՝ սրոնք ծնողաց տեղ են բռնում, ալսինքն մեծերիդ, ուսուցիչներիդ և բարերարներիդ: Այն ժամանակ քեզ համար լուր կը լինի և երկար կապրիս աշխարհիս մէջ: Նրանց լարգիր, նոցա կարօտաւթեան ժամանակ օդնիր:

6, Ո՞ի սպանաներ:

Մի սպանիր. ոչ գործով, ոչ խօսքով ոչ ոքին չարհամարհեա, ոչ ոք և ոչ ալլոց առողջութեանը վնաս մի տար. կարօտեալ մարդկանց օգնիր:

7, Ո՞ի շնար:

Շնութիւն մի անիր, քո և ալլոց հոգու մաքրութիւնը մի առականիր անվայել զործերով, խօսքերով և հայեցուածքով:

8, Ո՞ի զողանար:


Քո և ալլոց ստացուածքին վնաս մի տար, զողութիւն մի անիր, զտած բանդ մի պահիր, տբիշ ունեցածը մի լափշտակիր, մշակի փարձը մի կտըիր, կաշառք մի առնիր:

9, Ո՞ի սուտ վկայեր զընկերէ քում մէ:

Ուրիշի բարի անուանը մի վնասիր, զրպարտութիւն մի անիր, լրտեսութիւն մի անիր, ուրիշների զործերը և խօսքերը ՚ի փառն մի մեկնիր, բամբասանք մի անիր, անձիդ վերալ չաներ մի մտածիր, բամբասանքի և զրպարտութիւնների մի լոիր:

10. Աի ցանկանար տան ընկերի քո և
մի ամենայնի, որ ինչ ընկերի քո իցէ:

Նախանձու աչքով մի նալիր ուրիշի բաղդառութեան
վերալ և զոհ եղիր քո ունեցածով:



Երբ ձախը դադորեց, Մովսէս լերան դլուխը բարձրացաւ
և արտեղ Աստուծուց տուաւ երկու քարեղէն տախտակներ,
որոնց վերալ գրուած էին Աստուծոյ տասն պատուիրանները,
նոյնակն և ուրիշ պատուերներ տուաւ թէ ինչպէս ոլետք է

կտատրել Աստուածապաշտութեան ծէսերը և սրբութեամբ
տպրիլ: Ժողովուրդը այն օրէնքները լսելով՝ երդուեցաւ որ
սրբութեամբ կը կատարէ ամէնը: Այն ժամանակ Աստուած
լալանեց թէ Խարակէլացւոց մէջ մի մեծ Մարգարէ պիտի գտր,
որ կը բացատրէ նոցա Աստուծոյ կամքը:

Օրէնքի տախտակները զբուեցան տապանակի մէջ, որ
ազնիւ փայտից շինուած մէկ արկղ էր, և ոսկով ծեփած: Այն
տապանակը Մովսէս դրաւ առոնձին վրանի մէջ, որ խորան
կոչուեցաւ: Խորանի առջև շինուած էր սեղան կամ գոհարան:
Հրէալք ալնտեղ գնում էին Աստուծուն աղօթելու և զոհ
մատուցանելու համար: Մովսէս Աստուծոյ Հրամանով իւր
Ահարոն եղբօրք քահանալապետ կարգեց, իսկ նորա որդոցը
քահանաւ գրաւ:

Մովսէս բոլոր օրէնքները մէկ գրքի մէջ գրեց: Այս կեր-
պով ձևացաւ Սուրբ Գիրքը: Հրէալք Աստուծուց իրենց տուած
օրէնքների լիշտակն անմոռանալի պահելու համար, ամե-
նայն տարի սկսան տօնել Յիսուսց վերջի օրը, որ է Պենտե-
կոստէն: Այն տօնը Յիսոներորդաց տօն էր կոչվում այն պատ-
ճառով, որ կատարվում էր Զատկից լիսուն օր յետոր: Այն օրը
Հրէալք սովորութիւն ունէին իւրեանց տները զարդարել
ծաղիկներով և ծառերով:

22. ԽՄԱՅԷԼԱՅԻՈՅ ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ ԱՐԱԾ ՃԱՆԱՊԱՐ-
ՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵԿ ՔԱՆԱՆԱՅԻՈՅ ԵՐԿԻՐԸ

Խարակէլացիք՝ Աստուծոյ օրէնքներն առնելուց իւտոյ,
քառասուն տարի ևս Արաբիալի անապատներում թափառե-
ցան: Այս ժամանակ Աստուծու զթութեամբ ինսումում էր և
Խստութեամբ պլատում նոցու, որ խոսվութիւն շնանեն և
չորսնչան: Մի անգամ Կորիս Հրէալն Ահարոն քահանալա-

պետի և այլ քահանալից դէմ ելաւ սոելով թէ «բոլօր ժողովուրդը սուրբ է, գուք ինչու Համար ձեզ միայն վերէք դատում Աստուծու ժաղավրդից»։ Նորա Հետամիար տնեցան նոեւ 250 ծերեր։ Այն ժամանակ Մովուս ասաց նոցա։ «Աստում ցոյց կըտալ, թէ ինքը որին է ընտրում», և Հրամալից ծերերին որ բուրգուները առած խորանը դան։ Բայց բոլոր ծերերը Մովուսի այս Հրամանը չկատարեցին։ Նոցանից եր-



կուսը՝ Գաղան և Արիստ պատասխանեցին, թէ՝ բաւական է, որ Մովուսը մեզ Հարուստ աշխարհից հանեց։ Նա գեռ մեզ որթեր չէ տուել, այլ ուզում է մեր վերալ իշխել, մենք չենք երթալ»։ Աստում այս ապատամբներին պատճեց։ Կորխի, Գաղանի և Արիստի վրանները նոցա ծառաներավ և ստացուածքով մէկ տեղ գետնի տակ անցան, իսկ խորանի առաջ Հաւաքուած ծերերը ալրուեցան այն կրակով, որ խորանի մի-

ջից դուրս եկաւ, և շատ ժողովուրդ ևս ժանտախտով մեռան։ Այս կերպով Աստում լայտնեց թէ նա Մովուսին իշխանէ կարգել, իսկ Աշարոնին քահանալապետ։ Մէկ անգում ևս Խորալ լացիք միս չունենալու Համար սկսուն տրտնջալ Մովուսի դէմ, որովհետեւ ասում էին թէ զգուել են ամենայն օր մանանալ ուտելուց։ Աստում նրանց պատժելու Համար նոցա վերալ օձեր ուղարկեց, որ խածուում ու մեռցնում էին նորանց։ Խորալ լացիք զղացին իրանց որածների վերալ։ Այն ժամանակ Մովուս Աստումով Հրամանով փալտէ միւնի վերալից մի պղընձէ օձ կախեց և ասաց. «ով որ Հաւասով այս օձին կընալի, չի մեռնիլ»։ Այն Խորալ լացիք, որոնք Մովուսի խօսքին հետևեցան, կենդանի մնացին։ Քանանացւոց երկիր սահմաններին մօտ՝ մեռաւ Մովուսը, և Աստում նորա փոխանակ Խորալ լացւոց առաջնորդ նշանակեց Յեսու Նաւելալին։

23. ՅԵՍՈՒ ՆԱԽԵՍՅ ԵՒ ԳԱՏԱԿՈՐՆԵՐ

Յեսու Նաւեան Խորալ լացւոց Աստումով խոստացած երկիրը Հասցրեց։ Աստում այն ժամանակ օգնում էր Խորալ լացւոց։ Նոքա Յարդանան գետի միջից պիտի անցնէին։ Աստումով Հրամանով գետի ջրերը բաժանուեցան և յետ քաշուեցան ալնպէս, որ նոքա գետի ցամաք լատակի վերալով անցան։ Պէտք էր նաև վեր առնել նրիքով քաղաքը, որ շրջապատած էր ամուր պարիսպներով և ամբացած։ Քահանալը ուխտի տապանակը առած նորա չորս կողմը շրջեցան, ամուր պարիսպները իրենք իրենց կործանուեցան։ Վեց տարուան մէջ Խորալ լացիք Քանանացւոց բոլոր երկրին տիրեցին և վիճակով իւրեանց տասն և երկու ցեղերի մէջ բաժանեցին։

Յեսուալ մահից յետով Խորալ լացիք ծերակուտով էին

կառավարվում: Այն ժամանակներում շատ նեղութիւններ կրեցին: Նոքա, որովհետեւ Աստուծոյ հրամանը չէին կատարում: Խորայէլացւոց ցեղերը փոխանակ Աստուծոյ հրամանները կատարելու և բարեկամական սիրով վարուելու, կրվում էին միմեանց հետ և իւրաքանչիւր հրէալ իւր խելքի կտրածն էր անում: Բացի սորանից նոքա հեթանոսների հետ բարեկամութիւն արին և նոցանից կռասլաշտութիւն սովորեցան, որ Աստուած արգելել էր: Այս պատճառով Աստուած իւր ողորմութիւնը կտրեց նոցանից, և մերձակալ հեթանոս ազգերը սկսան նրանց նեղել: Սակայն Խորայէլացիք զզջում էին իրանց մեղքերը և այն ժամանակ Աստուած սկսում էր նորից օգնել նոցաւագատիչներ ուղարկել, որոնք ժողովուրդին կառավարելով՝ թշնամեաց ձեռքերից ազատում էին նրանց: Այս ազատարարները զատաւոր էին կոչվում: Օրինակի համար, Խորայէլացիք իւրեանց մեղքի համար մէկ վայրենի ժողովրդի իշխանութեան տակ ընկան, որ կողովուտում էր նոցա երկիրը: Երբոր Խորայէլացիք իւրեանց մեղքերի վերայ զզջացին, Աստուծոյ հրեշտակը երեսցու Կէդէօնին և ասաց, ես քեզ կուզարկեմ որ ձեր թշնամիներին մի ժարդունան կոտորեմ: Այն ժամանակ Կէդէօն կուռքերի գոհարանը կործանեց և ճշմարիտ Աստուծուն զոհ մատուց, և վերատին երեք հարիւր մարդով յարձակուեցաւ թշնամի զօրքի վերայ: Աստուած ալնալէս շփոթութիւն ձգեց թշնամիների մէջ, որ սկսան միմեանց կոտորել և այնպէս փախան - ցրուեցան:

Վերջին դատաւորն եղաւ Աստուէլ մարդարէն, որ Աստուծոյ օգնութեամբ Խորայէլացիներին թշնամիների ձեռքից ազատեց և ոլտաելազմից լիտով երկոր ժամանակ կառավարեց նրանց:

24. ԹԱԳԱԽՈՐՆԵՐ

Նրբ Խորայէլացիք կամեցան խրեանց զրացի ազգերի նման թագաւոր ունենալ, Ասմուէլ մարգարէն Աստուծոյ հրամանով Սաւուղին նոցա թագաւոր օծեց: Այն ժամանակից սկսած Խորայէլացիք թագաւորներով էին կառավարվում: Հրէից թագաւորների մէջ երեելի էին Յուգալի ցեղից Դաւիթը և նորա որդին Սոզոմոնը: Աստուած Դաւիթի խոնարհութիւնը տեսնելով, օգնեց նորան: Նորա անունը Հոչակուեցաւ երիտասարդութեան մէջ յաղթեց Հոկայ Դապիհամին: Սաւուղի մաշից լիտով Խորայէլացիք թագաւոր ընտրեցին Դաւիթին: Դաւիթը սահմանակից ազգերին նուածեց և Հրէից թագաւորութիւնն ընդարձակեց ու զօրացրեց: Աստուած սիրեց Դաւիթին նորա բարեսպառութեան և հնազանդութեան համար և ամէն բանի մէջ օգնում էր նորան: Այս թագաւորը Սազմաներ՝ արինքն ուորք երգեր շարադրեց, որոնք սազմուարանի մէջ են զտնվում: Այն սազմուների մէջ շատ մարդարէութիւններ կան Փրկչի վերայ: Դաւիթը զուշակեց, թէ Փրկչը պիտի լինի Աստուծոյ որդին, որ երկրիս վերայ պիտի չարջարաւի, մարդիկ նորա ձեռքերն ու ոտքերը պիտի կապեն, վերան պիտի ծիծաղեն, հանգերձը վիճակով պիտի բաժանեն, թէ նա բարութիւն պիտի առնի և իրեն համար լաւիտենական թաղուորութիւն պիտի հաստատէ:

Սազմունը թագաւորների մէջ ամենից իմաստունն և հարսանի էր: Նշմարիտ Աստուծոյ անունով մի փառ աւոր տաճար շինեց Երաւաղէմի մէջ, որ իւր տերութեան մագարքաղին էր: Ասզմոնի մահից լիտով Հրէից թագաւորութիւնը երկու մտան բաժանուեցաւ Յուգալի թագաւորութիւն և Խորայէլի թագաւորութիւն: Խորայէլացւոց մէջ երկուառակաւ-

թիւն ընկաւ: Ական մոռանալ Աստուծուն և կուռքերին երկրպագութիւն անել: Այս պատճառով Աստուծած գերութեամբ պատժեց նորանց: Խորայէլացիք Ասորեստանցւոց ձեռքը գերի ընկան և ցիրուցան եղան միջին Ասիայում, ուր մինչև վերջը մնացին, իսկ Յուդայի ցեղը գերի բնկաւ Բարելացւոց Նարուգոդոսոր թագաւորի ձեռքը:

25. ՄԱՐԳԱՐԵՔ

Թէև Խորայէլացիք ստէպ ստէպ մոռանում էին Աստուծուն, բայց ողբարձուն Աստուծած անխնամ չէր թողնում նրանց, այլ ուղարկում էր մարդարէները: Մարդարէները Աստուծոյ անունով՝ ամէնքին ճշմարտութիւն էին քարոզում: Գուշակում էին Աստուծոյ տալու պատիժները չոր մարդկանց, և իւրեանց Աստուծոց ուղարկուած լինիլը հաստատելու համար՝ Հրաշքներ էին գործում: Չար մարդիկ՝ մարդարէներին չէին սիրում, նոցա վերալ ծիծաղում էին, Հող և քար էին արձակում նոցա վերալ, երբեմն ևս ոպանում էին նրանց: Խորայէլացւոց կոտալաշտութիւն անելու համար նրանց խիստ լանդիմանողն էր Եղիա մարդարէն: Նա գուշակեց, թէ Աստուծած Խորայէլացիներին կոտալաշտութեան համար պիտի պատէ, որ երեք տարի անձրեւ չգալ, և երկրի մէջ սովընկի: Նորա այս գուշակութիւնը կատարուեցաւ, և ժողովուրդը ալօթքով դէսլի Աստուծած զիմեց՝ ներողութիւն խընդիրով: Այս ժամանակ մարդարէն կամենալով ժողովրդեան հաստատապէս ցոյց տալ, թէ կալ միայն մի Աստուծած, և ուրիշ աստուծներ չկան, խնդրեց Աստուծուց, որ երկնքից կրակ թափէ զոհի վերալ: Եղիա մարդարէն չմեռաւ, այլ կենդանի հրեղէն կառքով երկինք վերացաւ: Այս բանը տեսաւ նորա աշակերտ Եղիսէն: Եղիսէ մարդարէն Աստուծոյ ողբը

մութիւնն էր քարոզում և շատ հրաշքներ էր գործում: Օրինակի համար, նա յարութիւն տուաւ մէկ պատանու և Նէլման Ասորու բարատութիւնը բժշկեց: Եղիսէն իւր մահից յետով ևս հրաշք գործեց: Մէկ անգամ մի ննջեցեալ դըին այն քարանձաւը, ուր թաղուած էր Եղիսէն. ննջեցեալը երբ նզիսէի ոսկորներին դիմաւ, իսկոյն յարութիւն տուաւ: Բայց մարդարէը միմիայն գալու գժուարութիւնները չէին քարոզում, այլև բարեպաշտ մարդկանց մխիթարելու համար խոստացեալ փրկչի վերալ ևս շատ բաներ էին խօսում: Փրկչի վերայ ամէնից աւելի բացալաւ խօսողը Սուալի մարդարէն էր: Նա գուշակեց, թէ փրկիչը Աստուծամարդ պիտի լինի և կոլսից պիտի ծնուի. թէ նա Առարքը Հոգու շնորհը առատապէս կ'ունենալ. այսինքն Քրիստոս կամ Մեսիայ կըլինի, որ կընշանակէ Օծեալ, և շատ հրաշտագործութիւններ կ'անէ. զորօրինակ՝ Նորա Հրամանով կազերը պիտի մանգան, կոլրերը պիտի տեսնեն, մեռեալները յարութիւն պիտի տաննն. թէ նրան զառան պէս պատժելու պիտի տանեն չարտործների հետ, բայց նա իւր չարտորանքավ պիտի փրկէ մարդկանց, արդարութեան և խողաղութեան ժագաւոր պիտի լինի և նորա թագաւորութիւնը վերջ պիտի չտնենայ: Մի ուրիշ մարդարէ ևս, Միքիա անունով, գուշակեց թէ փրկիչը Բեթդէհէմի մէջ պիտի ծնուի:

26. ԿԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԵՔ: ՅԱՒԴՈՅՑԻ ԹԱԳԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐԱԿԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅՑ

Հրէալք Բաբէլոնի մէջ 70 տարի գերի մնացին, և այս գերութիւնը զառն էր նոցա համար: Բայց այն վիշտը օգտակար ևս եղաւ նոցա, որովհետեւ նրանով հեռաւ մնացին կռապաշտութիւնից: Այս գերութիւնը օգտակար եղաւ հեթանոսներին ևս. վասն զի տեսան նոքա ճշմարիտ Աստուծոյ

փառքը և շատերը հաւատացին նրանք Գերութեան ժամանակ Աստուած Հրէից ուղարկեց Դանիէլ մեծ մարգարէին: Դանիէլ մանկական հասակի մէջ գերի տարուեցաւ և իւր ընկերների հետ Նաբուգոդոնոսոր թագաւորի պալատում կրթութիւն առաւ: Այն երիտասարդները թէպէտ հեթանունների մէջ էին կենում, սուկալն իւրեանց հաւատի օրէնքները ճշուի էին կատարում, զորօրինակ՝ նոքա չէին ուտում այն կերակուրները, որ արգելուած էին իրանց օրէնքով, և ինդրում էին որ թող տան իրանց միայն հաց և բանջարեղէն ուտելու: Ուսումն աւարտելուց յետոյ՝ արքունի ծառայութեան մէջ մտան: Թագաւորը Դանիէլի ընկերներին բորբոքեալ հնոցի մէջ ձգել տուաւ, որովհետև նոքա չօժարեցան նորա կանդնած արձանին երկրագութիւն անել: Աստուած Հրաշալի կերպով նրանց մահից ազատեց: Նոյն Դանիէլին դուքի մէջ՝ քաղցած առիւծների առաջ ձգեցին, որովհետև նա իւր օրէնքին համեմատ էր աղօթում դէպի Աստուած. բայց առիւծները Աստուծոյ Հրամանով չմօտեցան մարգարէին: Դանիէլը գուշակեց, որ Քրիստոս աշխարհ պիտի գոյ Հրէից ազատութեան Հրաման տրուելուց 490 տարի յետոյ:

Երբ գերութեան 70 տարին լրացաւ, Բարեկացւոց թագաւորութեանը տիրեց Պարսիկ Կիւրոս թագաւորը, որ Հրաման տուաւ Հրէից նրուսաղէմ դառնալու:

Հրէալք իւրեանց նրուսաղէմը վերտանգնեցին և նոր տաճար շինեցին: Ակզբումը նոցա համար գժուար էր աւերած երկրի մէջ բնակուիլ: Բայց ողորմած Աստուածը ուղարկեց նորանց մօտ Անգէոս, Զաքարիա և Մաղաքիս մարգարէներին, որոնք քաջալերում և մխիթարում էին նրանց: Անգէոսը գուշակեց, թէ Քրիստոսը այն նոր տաճարը պիտի երթար: Զաքարիան նկարագրեց Քրիստոսի աւանակի վերայ հեծած հանդիսաւոր կերպով նրուսաղէմ մտնիլը, իսկ Մաղաքիան տաց՝ թէ Քրիստոսի առաջեկեց պիտի զնալ նորա կարապետը:

Ակզբում Հրէալք Պարսիկ թագաւորների իշխանութեան տակ էին, յետոյ ընկան Յունաց իշխանութեան տակ, որոնք տիրապետեցին Պարսիկ թագաւորութեանը:


Այն միջոցին Սուրբ գիրքը Եբրայեցւոց լեզուից Յունարէն թարգմանուեցաւ, որ ամէն լեզուներից աւելի գործածականն էր այն ժամանակ: Հրէալք Յունաց իշխանութեան տակ եղած ժամանակ մի մեծ վատանգի հանդիպեցան, որովհետև Յոյները ստիպում էին նրանց, որ կուապաշտութիւն ընդունեն, բայց նոքա հաստատ կացած իւրեանց հաւատքի վերայ՝ շատ տանջանքներ կրեցին և վերջապէս ազատուեցան Յունաց իշխանութիւնից: Բայց նոցա բարեկաղդութիւնը երկար չտևեց: Հռոմայեցիք տիրեցին նոցա և թագաւոր դրին օտարազգի Հերովդէսին, որ խստաբարոյ և կասկածոտ մարդ էր:

27. ՓՐԿՉԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Երբ Հռոմայեցիք Հրէաստանին տիրեցին, բոլոր Հրէալք անհամբերութեամբ սպասում էին խոստացած Փրկչի գալստեանը: Հին ուխտի ժամանակը վերջացաւ, և սկսաւ նոր ուխտի ժամանակը, երբ Փրկչն աշխարհ պիտի գար: Բայց Հրէաներից շատերը թիւր հասկացողութիւն ունեին Փրկչի վերաբ: Կարծում էին թէ նա երկրաւոր փառքով պիտի գայ, որ նրանց Հռոմայեցւոց իշխանութիւնից ազատէ: Այլ և հպարտանում էին իւրեանց սրբութեամբ, իրանք իրանց արդար էին համարում, և կարծում էին թէ Քրիստոսը ոչ թէ նրանց մեղքերից ազատելու է գալիս, ինչպէս խոստացել էր Աստուած, այլ գալիս է իւրեանց բարեգործութիւնների փոխարէն երկրաւոր բարեգաղդութեամբ նրանց վարձատրելու:

28. ՍՈՒԲԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ, ԸՆԺԱՅՈՒՄԸ ԵՒ
ԱԻԵՏՈՒՄԸ

Երբ Հրէալք սպասում էին Քրիստոսի գալուն, Հրէաս-
տանի մէջ երկու բարեպաշտ անձինք կային՝ Յովակիմ և Նորա
կին Աննան: Նոքա զաւակ չունէին, և այս բանիս վերալ շատ




էին արտօնում: Աստուած նոցա աղօթքը լսեց և մի գուստը
պարզեց, որի անունը Մարիամ դրին (^(*)) և երբ նա երեք
տարեկան եղաւ, տաճարը տարան Աստուծուն ընծալելու:

(*) Մարիամի ծնունդը մենք տօնում ենք միշտ Ահաբեկի 8-ին:

Քահանարարեալ տաճարի գրան առաջ Աստուծոյ նուիրեալ-
ներին ընդունում էր և օրհնում. ուստի Սուրբ Կուսին ևս
ընդունեց ու տաճարը տարաւ ընծալեց Աստուծուն: (*)

Մարիամը տաճարի մէջ մեծանում էր և Աստուծոյ շը-
նորհքով ազատ մնաց տմենայն տրատից ու մեղքից, և եղաւ
ամենատարբ կոլու: Նորա տաճարում եղած ժամանակ ծնողքը



վախճանեցան. իսկ երբ 14 տարեկան եղաւ՝ գտատիտրուկները
կամբան նրան ամուսնացնել: Բայց նա առայ, թէ՝ աւխտել է
Աստուծոյ՝ որ միշտ կոյս մնայ: Ոյն ժամանակ քահանակը
նրան նշանեցին իւր տղղական ծերունի Յովուէֆի Հետ, որին
յայտնեցին նաև Մարիամի ուխտը: Յովուէֆի Գալիլիակի Նո-

(*) Մարիամի ընծալումն յի տաճարն տօնում ենք Կոյիմբերի 21-ին:

զարեթ քաղաքի մէջ էր բնակվում և հիւսնութեամբ էր պարագում: Մարիամը նորա տունը գնաց բնակուեցաւ:

Մէկ անգամ՝ երբ նա աղօթք էր անում, Գարբիէլ հրեշտակապետը երևեցաւ նրան և ասաց. «ուրախացիք, բերկրեալդ, Տէրը քեզ հետ է. օրհնուած ես դու կանանց մէջ. Հոգին Սուրբը կը գալ քոյ վերայ և բարձրելու զօրութիւնը հոգանի կը լինի քեզ՝ մի որդի կը ծնանիս և անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը լինի և Բարձրեալի Որդի կը կոչուի և Տէր Աստուած կը առաջ նրան նորա հօր Դաւթի աթոռը և նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ»: Մարիամը խոնարհութեամբ ընդունեց այս աւետիքը: (*)

Կոյս Մարիամը արժանացաւ մեծ պատուի—լինիլ մայր Փրկչի, Աստուծոյ Որդու: Ուստի մենք նորան անուանում ենք Աստուածածին, դասելով Սերովբէներից և Քերովբէներից վեր, որը և յարտնում ենք՝ ի պատիւ նորա յօրինուած երգաբանութեանց մէջ:

Ուրախ լեր, բերկրեալդ Մարիամ, Տէրընդ Քեզ, օրհնեալ ես Դու ՚ի կանայս և օրհնեալէ պատուղ որովայնի Քո: Արդ՝ բարեխօս լեր առ Տէր վամն մեր:

Ուրախացիք, շնորհալիդ Մարիամ, Տէրը Քեզ հետ է. օրհնուած ես Դու կանանց մէջ և օրհնուած է Քո որովայնի պատուղը. Արդ՝ բարեխօսութիւն արա Տիրոջդ առաջ մեզ համար:

(*) Աւետման տօնը կատարում ենք միշտ Ապրելի 7-ին:

29. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Դ. 1-21.

Մօտեցաւ այն ժամանակը, երբ Գարբիէլ հրեշտակապետի խօսքի համեմատ Քրիստոս պիտի ծնուէր: Այն միջոցին Հռովմայեցոց կալսրը հրամայեց աշխարհակիր անել, և այս պատճառով իւրաքանչիւր Հրէի հրամայուած էր իւր հայրենի քաղաքը երթալ: Յովսէփ և Մարիամ Դաւթիթ թագաւորի ցեղիցն էին, այս պատճառով նազարէթից գուրս եկան և ինթեղէհմ գնացին, որ Դաւթի քաղաքն էր, և մարզարէների գուշակութեան համեմատ Քրիստոս այնտեղ պիտի ծնուէր: Քաղաքի մէջ նոքա օժեան չգտան, ուստի քաղաքի մօտ գտնուած մի ալրի մէջ մնացին, ուր Հովիւները իւրեանց ոչխարներն էին պահում: Այն ալրի մէջ գիշեր ժամանակ Մարիամ Սուրբ Կոյսը ծնաւ իւր Միածին Որդին, որ ոչ միայն մարդ էր, այլ միանգաման Աստուած: Սուրբ Կոյս Մարիամը Աստուածորդուն խանձարուով սպատեց և մսուրի մէջ գրաւ: Հրէից սովորութեան համեմատ ծննդեան ութերորդ օրը թըլփատեցին նրան և Յիսուս անուանեցին, որ Փրկիչ կը նշանակէ:

Յունգարի վեցին Հայտատանեալց եկեղեցին կատարում է Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօները՝ ի միտսին, իսկ Յունգարի Հնդին, երեկոյեան, մատուցանվում է սուրբ պատարագ և ճրագալուց է լինում: Ծննդեան օրը, պատարագից լիտոյ, կատարվում է Զրօրհնէքի շքեղ հանդէսը: Դասք հոգեարտիկում կատարուած զգեստաւորուած—խաչերով, խաչուառներով և վառուծ կերոններով գուրս են զալիս եկեղեցուց, գնում են գետը և այնտեղ խաչով, սուրբ աւետարանով և սուրբ մեռնով

օրհնում են ջուրը՝ ի լիշտակ Քրիստոսի մկրտութեան Յորդանանում։ Նոյն օրը քահանալք գալիս են մեր աները օրհնելու (տնօրհնէք), շնորհաւորում են մեզ Քրիստոսի ծնունդը և լալտնութիւնը—տւետարան կարդալով և այս շտրականը երգելով։

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմաւոր յայտնեցաւ՝ հռվիր երգեն ընդ հըրեշտակս, տան աւետիս աշխարհի։ Ճնանոր արքայ՝ ի Ծեմողէջէմ քաղաքի, որդիք մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ։

Եյն Խորհուրդը, որ այսօր յայտնի եղաւ—մեծ է և չփանալի։ Հովիւները երգում են հրեշտակների չետ և աւետիս են տալիս աշխարհին։ Ծեմողէջէմ քաղաքում ճնուեցաւ նոր թագաւոր, ուրեմն մարզոց որդիք, օրհնեցէք Վարան, որովհետեւ մեզ համար մարմնն առաւ։

Աստուծոյ Միածին Որդին, որ ճշմարիտ և լաւիտենական Աստուած է, և էակից Հօր, մարմնացաւ և մարդացաւ, աշսինքն՝ Սուրբ Առլու Մարիամից Հոգով որբով մարդկալին մարմին և հոգի առաւ բաց՝ ի մեղքից, և այս կերպով եղաւ մարդ կատարեալ և Աստուած կատարեալ։ Որդին Աստուծոյ մարմնացաւ մեզ համար, որ մեզ ազատէ սատանալի ձեռքից, Չնջէ մեր մեղքերը, հաշտեցնէ մեզ Աստուծոյ Հետ, ճշմարտութիւն և սէր քարոզէ մեզ, և իւր աշակերտներով մի թա-

դաւորութիւն կամ մի ընտանիք կազմէ, որի մէջ Աստուած Հայր լինի, իսկ մարդիկ Նորա որդիքը, և միմեանց եղբարք։


Մէր բնորդ Աստուծոյ Որդին և բնորդ նորա մարդացութիւնն ունեցած հաւատով յայդնում էնք այսպէս։

Հաւատամք և՝ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Կոտուծոյ, ճնեալն յԱստուծոյ, Հօրէ միածին, այսինքն յԵւթենէ Հօր։ Կոտուած յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Կոտուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ—ճնունդ և ոչ արարած։ Կոյն ինքն՝ ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և՝ ի վերոյ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իշեալ յերկինեց մարմնացաւ, մարդացաւ, ճնակատարելապէս՝ ի Վարիամայ սրբոյ կուտէն Հոգւովն Արով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտու և զամենայն, որ ինչ է՝ ի մարդ—ճշմարտապէս և ոչ կարծեօք։

30. ԲԵԹԱԿՀԵՄԻ ՀՈՎՔԻՆԵՐԻ ՓՐԿՉԻՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԱՆԵԼ ԵՒ ՆՈՐԱ ՔԱՌԱՍԽՈՐԵԱՅ ԳՈԼՈՒՏԸԸ
ՏԱՃԱՐԸ


Դաւ. Բ. 8—38.

Ամենից առաջ ԲԵԹԱԿՀԵԿԵմի Հովիւները իմացան Փրկչի ծնունդը: Քրիստոսի ծննդեան զիշերը նոքա իւրեանց ոչխարների հետ զաշտի մէջ էին: Յանկարծ մէկ անսովոր լոյս տեսան, Աստուծով Հրեշտակը նոցա երևեցաւ և ասաց. «Մի վա-



իւնաք, ևս մէջ ուրուխութիւն եմ աւետում ձեզ: Դաւիժի քաղաքի մէջ Փրկչի ծնու ձեզ, որ է Օծեալ Տէր: Եւ աշա ձեզ նշան. զուք կը դանեք մանկանը խանձարուով պղուած:

և մսուղի մէջ գրուած»: Այն միջոցին երկնքից բաղմաթիւ Հրեշտակներ երևեցան, որոնք երգելով փառաբանում էին Աստուծուն: Երբոր Հրեշտակները անլայտացան, Հովիւները ալլը գնացին, և գտան որ մանուկը խանձարուով փաթաթուած և մսուրի մէջ գրուած էր: Երկրպագութիւն արին նրան, իբրև Աստուծոյ, և Մարիամին ու Յովակին պատմեցին իւրեանց լսածն ու տեսածը, լետոյ այն Համբաւը իւրեանց զիւզի մէջ ևս տարածեցին:



Յովիսաւիան օրենքավ ամենայն տրու անդրանիկ զաւակ նորս ծննդւան քառառներորդ օրը տաճարն էին տանում և այնունզ նորս Համեար զահ մասաւցանում: Հարուստները մի որիթ կամ ոչխար էին զահաւմ, իսկ ողքատները մի զազ աղուն ձաւ: Սուզը Կովսն Մարիամ իւր որդուն տաճար տախու-

և մի զոյգ աղաւնի հետն առաւ: Այն ժամանակ Երուսաղէմի
մէջ էր Սիմէօն ծերունին, որին Հոգին սուրբը լույսնել էր
թէ պիտի չմեռնի, մինչև չտեսնէ Քրիստոսին: Սիմէօն տա-
ճարի մէջ տեսաւ Յիսուս մանկանը, դիրկն առաւ և նրան
անուանեց լոյս Հեթանոսաց և փառք Խորացէի: Տաճարի մէջն
էր նաև Աննայ մարգարէուհին, որ ութսուն և չորս տարե-
կան ալրի էր: Նա ևս սկսաւ փառաբանել Աստուծուն և
ամէնքին առում էր, թէ այն մանուկը՝ խոստացեալ Փրկիչն է:

31. ՄՈՒԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ: ՄԱՐԻԱՄԻ ԵՒ ՅՈՎՈՒ-
ՓԻ ԵԳԻՎՏՈՍ ՓԱԼԽՉԻԾ ԵՒ ԱՅՆՏԵՂԻՑ ԴԱՌՆԱԼԸ

(Մար. Բ. 1—2).

Այն միջոցին Հրէստանի արևելեան երկիրներից քանի
մի մոգեր, արսինքն իմաստուն մարդիկ, Երուսաղէմ եկան, և
Հարցնում էին թէ. «Ուր է Հրէից Նորածին թագաւորը.
մենք նորա աստղը տեսանք արևելեան կողմը և եկանք նրան
երկրագութիւն անելու:» Հերովդէս թագաւորը մոգերի ալս
Հարցմունքը լսելով՝ շփոթուեցաւ և Հրէից գպիրներին Հար-
ցրեց թէ՝ «Ուր պիտի ծնուի Քրիստոս:» Պալիրները պատաս-
խանեցին թէ՝ «Տեմդղէհէմ քաղաքի մէջ»: Այն ժամանակ
թագաւորը լայտնեց այն մոգերին և խնդրեց նոյցանից՝ ասե-
լով, թէ երբ կը գտնէք մանկանը, ինձ լայտնեցէք, որ ես ևս
գնամ և երկրագութիւն անեմ նրան:» Մոգերը Տեմդղէհէմ
գնացին, և տեսան այն գերենական աստղը մէկ տան վերաբ:
Այն տաւնը մտան և մտնկանը գտան իւր մօր Հետ, երկր-
ուղագութիւն արին նրան, իւրեւ Աստուծոյ և մատուցին իւ-
րեանց ընծաները: Յետոյ ուզում էին նրուսաղէմ վերագառ-
նալ և մանկան համար Հերովդէսին պատմել, բայց միւս գի-

շերը Աստուծուց Հրաման առան, որ Հերովդէսի մօտ չդա-
նան, ուստի ուրիշ ճանապարհով գնացին իւրեանց երկիրը:

Հերովդէս՝ երբ իմացաւ թէ մոգերը իւրեանց երկիրն են
գնացել, հրամալեց, որ Տեմդղէհէմի մէջ եղած երկու տարե-
կանից ցած բալոր տղայոցը կոտորեն: Յոր ուներ, որ նոցա
Հետ Յիսուս ևս կրսպանուի: Յայց Յովսէփը և Մարիամը Աս-
տուծոյ Հրամանով իւրեանց որդու Հետ նգիպտոս փախան
Հերովդէսի անգութի Հրամանը կատարուեցաւ. նորա գինուար-
ները Տեմդղէհէմի մէջ 14000 մանուկ կոտորեցին:

Այնուհետև շատ ժամանակ չանցած՝ Հերովդէս մեռաւ.
Այն ժամանակ Յովսէփ Հրէստան գարձաւ և Գալիլիայ Կո-
ղարէթ քաղաքում բնակուեցաւ: Այնտեղ Քրիստոս մինչեւ
երեսնամեայ Հասակը անծանօթ մնաց մարդիկներից. երեսուն
տարեկան եղաւ, աճեցաւ և լցուեցաւ իմաստութեամբ և սի-
րով գետի Աստուծած և գետի մարդիկ: Աւանդութիւն կայ՝
թէ Յովսէփ Աստուծահօրն օգնում էր Հիւսնութեամբ:

32. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

Դուկ. Ա. 5—25 և 57—80. Մատ. Գ. 1—12. Դուկ. Գ. 2—18.

Քրիստոսի ծննդեան ժամանակ Հրէստանի մէջ երկու-
արդար և բարեկարշա տնհմինք կալին՝ Զաքարիա քահանույն
և նորա կին Եղիսաբէթը: Նոքան երկար ժամանակ անգաւուկ
էին, որի վերոն տրտմելով՝ Աստուծուց խնդրում էին, որ զո-
ւակ տայ իրենց: Աստուծած լսեց նոյցա ազօթքը: Մէկ անգամ
Քարքիէլ Հրէշտակապետը տաճարի մէջ երեկուեցաւ Զաքարիալին
և յարտնեց թէ նա Յովհաննէս անունով մէկ որդի պիտի
ունենաւ, որ Հոգւով Սրբով պիտի լցուի և ժողովուրդը պիտի
սրտաբառէ Փրկչին ընդունելու Համար: Հրէշտակի ասածը

կատարուեցաւ: Յիսուսի ծնունդից վեց ամիս առաջ Զաքարիան մէկ որդի ունեցաւ Յովհաննէս անունով, որ տղայութեան հասակից անապատի մէջ էր բնակվում և ապրում էր մարախ և մեղք ուտելով: Նորա հազուստը ուղտի բրդից էր և գոտին մաշկեղէն: Եթէ երեսուն տարեկան եղաւ, սկսաւ Յորդանան գետի եղերքների մօտ քարոզել Քրիստոսի յայտնութեան վերալ: Ամէն կողմերից ժողովուրդը հաւաքվում էր նորա քարոզութիւնը լսելու Յովհաննէսը իւր մօտ եկողներին ասում էր. «ապաշխարեցէք, երկնքի արքայութիւնը մօտեցել է». և այս ասելով իւրաքանչիւրին տալիս էր հարկաւոր խըրատները: Կերծաւոր Փարիսեցիք, որ իւրեանց արտաքին աստուածապաշտութեամբ հսկարտանում էին և ծերերի աւանդութիւնները խստիւ կատարում՝ հարցրեցին. «Մենք ի՞նչ պէտք է անենք»: Յովհաննէսը քարոզում էր նոցա թէ՝ «ով որ երկու հանդերձ ունի, թող մէկը չունեցողին տալ. կերակուր ունեցողն ևս թող նոյնպէս անէ»: Մաքսաւորները Փարիսեցոց պէս հարցրեցին, և Յովհաննէս նոցա պատասխանեց. «Մի պահանջէք ժողովրդից ալն, ինչ որ օրէնքը չէ հրամանած»: Յետոյ գինուորները հարցրեցին. «Մենք ի՞նչ պէտք է անենք»: Յովհաննէս պատասխանեց թէ. «Դուք ո՛չ ոքին չզրկէք, ո՛չ ոքին չզրպարտէք և ձեր ուռճիկովը բաւոկանացէք»: Այն քարոզութիւնից յետոյ Յովհաննէս Յօրդանան գետի մէջ մկրտում էր իւրեանց մեղքերը զզջացողներին:

Շատերը կարծում էին թէ մարգարէներից գուշակած Մեսիան կամ Քրիստոսը Յովհաննէսն է: Բայց նա ինքն ասում էր թէ. «Ես Քրիստոս չեմ, այլ Աստուած ինձ ուղարկեց նորա առաջնե, որ Նորա ճանապարհը որատրաստեմ»: Այս պատճառով Յովհաննէսը կոչվում է Տիրոջ Կորապէտ:

ՅՅ. ՏԻՐՈՋ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԱՏԱՆԱՅԻՑ ՓՈՐՉՈՒԹԻՒԾ

Մուս. Գ. 13—17:

Մէկ անգամ Քրիստոս ուրիշ մարդկանց պէս Յովհաննէսի մօտ եկաւ և նրանից մկրտուեցաւ Յորդանան գետի մէջ: Մկրտուելուց յետոյ երկինքը բացուեցաւ, և Հոգին սուրբ աղաւնու կերպարանքով Քրիստոսի վերալ իջաւ և երկնքեց



ձայն լսուեցաւ, թէ՝ «Դա է իմ սիրելի Որդին, որին հաւանեցայ»: Այն ժամանակ Յովհաննէսը խմացու, թէ Քրիստոսը Աստուծոյ Որդին է և աշխարհին փրկիչը:

Քրիստոս մկրտուելուց յետոյ անապատ գնաց, ուր քառասուն օր և քառասուն զիշեր ծոմ պահեց և աղօթքով

անցկացրեց: Վառասներորդ օրը նու զգոց մի այնպիսի քաղց, որը շատ անդամ մարդուն մեղանչել է տալիս: Սատանան ուղեց օգուած քաղել այս փորձանքից և Քրիստոսին գալթոկղեցնել զեզ ՚ի չար զգացմունքը և զործերը՝ բարց չլաջողեցաւ նորան այդ: Յիսուս Քրիստոս մերժեց իրանից սատանալին և այն ժամանակ եկան հրեշտակներն ու սկսան պաշտել նորան:

Եւ մի տաճիր զմեղ ՚ի փորձոթիւն, այլ փրկեա՞ ՚ի չարէն:

34. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱՅ ՏՈՒԱՌ
ԱԿԱՑՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԱ

Յով. Ա. 19—40, Գ. 22—30, Մատ. ԹԳ. 3—11

Քրիստո՞ անապատի մէջ փորձուելուց յետոյ Յորդանուն գետի եղերքն եկաւ, ուր Յովհաննէսը մկրտում էր: Յովհաննէսը նրան տեսնելով ասաց ժողովրդին. «Ահա զառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի:» ալսինքն՝ աշաւտիկ նա, որ իւր կեանքը բոլոր աշխարհին մեղքի համար պիտի զոհէ: Յովհաննէսի աշակերտներից մի քանիսը Քրիստոսի լեռնեց զնոցին:

Քիչ ժամանակից յետոյ Յովհաննէս տօիպուեցաւ իւր քարոզութիւնները վերջացնել, որովհետեւ Պալիլիացւոց Հերովդէս թագաւորին յանդիմանում էր այն պատճառավ, որ նո իւր եղբօր կենդանութեան ժամանակը նորա կնոջ Հերովդիագովի հետ ամուսնացաւ: Այս լուսդիմանութեան համար չար Հերովդիագան շատ բարկացաւ և Հերովդէսին յօրդորեց, որ Յովհաննէսին բանտարկէ, յետոյ ինդրեց նուև, որ Յովհաննէս Մկրտչի գլուխը կտրել տալ:

ՅՅ. ՅԻՍՈՒՍԻ ԳԵՂԱԲ ԴԱԼԻԼԻՑԻ ԿԱՆԱՅ ՔԱՂԱՔԸ
ՀԱՐԱՍՆՈՐԲԻՆ

Յովհ. Յ. 1—11.

Յիսուսը, Յովհաննէսի իւր վերայ վկալութիւն տալուց յետոյ, Պալիլիա զնոց: Այնտեղ Աստուծամօրը, նորան և նորա աշակերտներին Կանոյ քաղաքի մէջ հարսանիքի հրաւերեցին: Հարսանիաց ինչուրի ժամանակ զինին պակասեցաւ: Աստուծամայլը՝ տեսնելով տաճնիբուջ շփոթութիւնը, տաց Յիսուսին զինի չտնին: Յիսուս պատասխան տուաւ նրան թէ՝ գեռ իմ ժամանակու չէ հասել, ապինքն զեռ ժամանակը չէ, որ ցայց տամ իմ Աստուծամին փառքը: Բայց Մարիամ հաստատ զիտէր, թէ իւր ողորմած որդին կօպնէ կարօտեալներին, վասն որպէս տաց ծառաներին: Ինչ որ ձեզ հրամալէ, կատարեցէք: Անեսակի մէջ եօթը մեծ քարեզմն ջրի ամաններ էին զրաւած: Յիսուս հրամալեց որ նրանց ջրով լցնեն, յետոյ այն ջուրը հիւրերին բաժանեն: Ծաւանները նորա հրամանը կատարեցին և տնասն որ ամանների միջի ջուրը լուս զինի է դարձել: Այս կերպով Յիսուս առաջին հրաշքը զործեց և աշտեցաները հաւասարցին իրեն:

Այդ առիթով Աստուծամայլը օգնութիւն ցոյց տուաւ գէպի մարդիկ և եղաւ նոցա համար իւր որդուն բարեկեօս: Այս պատճառավ մենք գէպի նաև գիմում ենք աղօթքներով իբրեւ գէպի մեր պաշտպանը և բարեխօսը, որ ամենան ժամանակ օգնէ մեզ:

Հակնումիմք առաջի
քո, Յուրը Ըստուա-
ծածին, և աղաշնմք

Հակնում եսք քո
առաջ, Յուրը Ըս-
տուածածին, որ կոյսդ

զանարատ զկոյսդ՝ բարեխօսեան վասն անձանց մերոց և աղուչնա զմիածին Արդիոց՝ վիրկել զմեզ՝ ի փորձութենէ և յամենային լատանդից մերոց:

և անարատ, բարեխօսութիւն արա մեզ համար և խնդրիր Քո միածին Արդուց, որ աղատէ մեզ փորձանքից և ամեն տեղ վարոզում էր թէ. «աալաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը, հաւատացէք աւետարանին ալսինքն վրկութեան աւետիքին.» յետոյ կանչում էր իւր մօտ բոլոր դժբաղպներին, և խոստանում էր նրանց հանգստացնել:

36. ՅԻՍՈՒՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ԹԵ ԻՆՔՆ Է ՔՐԻՍՏՈՍԸ

Առաջ. Ա. 14—15.

Քրիստոսը իւր քարոզութիւնը Գալիլեալի մէջ սկսաւ: Մէկ անգամ գնաց Նաղարէթ քաղաքը, ուր մեծացել էր: Այն օրը շաբաթ էր: Նաբաթ օրերը բոլոր Հրեայք ժողովարան էին գնում: Ժողովարան ասվում էին այն տները՝ ուր նոքա հաւաքվում էին աղօթք տնելու, Սաղմու երգելու և Սուրբ Դիրք կարգալու: Համար: Քրիստոս ժողովարանը մտաւ, Եսալի մարդարէի դիրքը տռաւ: և կարգաց այն տեղը, ուր Քրիստոսի գործերի վերալ խօսում էր մարդարէն, և ասաց թէ՝ այս խօսքերը իմ վերալ կատարուեցան, որովհետեւ ևս եմ Քրիստոսը, այսինքն՝ Աստուծոյ օծեալը: Նաղարէթի բնակիչները կասկածուքով լսում էին նորա խօսքերը: Այն ժամանակ Քրիստոս ասաց նոցա: «Ճշմարիտն եմ ասում ձեզ, թէ ոչ մի մարդարէ իւր դաւառի մէջ չի ընդունվում,» և լիշեցրեց նոցա թէ ինչպէս երբեմն Աստուծու Հեթանոսներին էր օգնում, իսկ Խորակէլացիներին իւր օդնութիւնից զբկում: Լատզները զարդացան Քրիստոսի վերալ այն քարոզութեան պատճառով: Բոնեցին նորան, քաղաքից դուրս հանեցին և ուզում էին

մէկ ժակուից վայր ձգել, բայց նա նոցա միջից անցաւ գնաց:

Այնուհետեւ Յիսուս որ և իցէ մշտակալ բնակարան չունէր, ուր կարողանար հանգիստ զնել իւր գլուխը. այլ հայրենի աշխարհի գիւղերում և քաղաքներում շրջում էր և ամենալին տեղ քարոզում էր թէ. «աալաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը, հաւատացէք աւետարանին ալսինքն վրկութեան աւետիքին.» յետոյ կանչում էր իւր մօտ բոլոր դժբաղպներին, և խոստանում էր նրանց հանգստացնել:

Քրիստոս ալսպէս սկսաւ մարդկանց վրկութեան համար ծառայել, իւր օրինակով մեզ ապրելու կերպ ցոյց տուաւ, իւր քարոզութեամբը մեզ վրկութեան ճանապարհն էր ցուցանում և չարչարուելով մարդկանց մեզքի համար՝ ինքն իրան զահ էր մատուցանում: Մարգարէների խօսքերը կատարուեցան, որովհետեւ մարդկանց մէջ երևեցաւ Աստուծոյ մարդարէն և գտուն Աստուծոյ որ իւր վերալ առաւ մարդկանց մեզքերը:

37. ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՎԱՐԾՈՒԹԻՒՆԵՐԸ

Քիչ ժամանակում Քրիստոսի գործած հրաշագործութիւնների լուրը տարածուեցաւ: Հրէաստանի մէջ, և ժողովուրդը խուռն բազմութեամբ զնում էր նորա յետեւից: Նա իւր մէկ խօսքով սաստիկ փոթորիկը դադարեցրեց, ջրի վերալով իւրեկետնի վերալ ման եկաւ, հինգ հացով և երկու ձկնով հինգ հազար մարդ կերակրեց, և միայն հրամայելով մեռած մարդկանց յարութիւն տուաւ:

Դժբաղգ մարդիկ մեծ ուրախութեամբ Քրիստոսին մօտենում էին, և ոչ մէկը առանց օդնութիւն և միսիթարութիւն առնելու մօտից չէր հեռանում. Կոլերին լուսաւորում էր, խուլերին լսողութիւն էր տալիս, անգամալոյներին

բժշկում էր, բորոտներին սրբում էր, դիւահարներին ազատում: Ամէն մարդու ընդունում էր իւր մօտ, ուրիշներից առելի եղած մեղաւոր և հեթանոս մարդիկ նրանից օգնութիւն էին գտնում: Մարդիկներից նա միայն այս էր պահանջում, որ իրեն հաւատան: Բժշկուածներին արձակում էր այս խրատը տալով թէ՝ «ալ ևս մի մեղանչիր, որ առելի վատ չինի քեզ:»



Այս գործերով Քրիստոս արիապէս ցոլց էր տալիս, որ երկրիս վերալ Աստուծոյ արքալութիւնը սկսուել է: Ծողովուրդներից շատերը հաւատում էին Քրիստոսի գործած հըրաշքները տեսնելով, և ամէն կողմից ասում էին թէ՝ մեծ մարդարէն երեացն է մեր մէջ, Աստուած իւր ժողովրդեան այցելութիւն է ալել:

Յ8. ՔՐԻՍՏՈՍ ՇՈՎԵԼԻ ՎԵՐԱՅ ՓՈԹՈՐԻԿԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ
Է ԵՒ ԶՐԻ ՎԵՐԱՅ ՄԱՆ Է ԴԱԼԻՄ

Դ.Ա. թ. 22—25. Յով. 9. 18—21.

Մէկ անգամ Քրիստոս իւր աշակերտների հետ նուով մի ծովակի վերալից պիտի անցնէր: Խնքը նաւի լեռեի կողմը քնել էր: Աստոտիկ հողմ բարձրացաւ և ալիքներ վերկացան, ալինպէս որ նուր լքուելու վերալ էր: Աշակերտները վախեցած գորթեցրին Քրիստոսին, տաելով. «Տէր, ահա մենք կորչաւմ ենք, ազտոտիր մեզ»: Քրիստոս նոցա պատասխանեց. «Ի՞նչու ալգոլէս վախկոտ էք, թէ երահաւատներ»: Յետոյ վերկացաւ և փոթորիկին ու ալէկոծութեանը սասաեց, խալոյն հանգարատութիւն տիրեց: Ամէնքը դոդի մէջ ընկած հիանում էին և ասում. «ով է սա, որ հողմին և ջրին հրաման է տալիս և իրեն բռում են»:

Մէկ անգամ Քրիստոսի աշակերտները նուով գնում էին ծովակի վերալ, աստոտիկ փոթորիկ վերկացաւ, և նոքա շատ վախեցան, որովհետեւ Յիսուս նոցա հետ չէր: Յանկարծ տեսան, որ մէկը ջրի վերալ մանգալով իրենց մօան է գալիս, և չճանաչելով թէ Քրիստոսն է, աստոտիկ վախեցած աղաղուկեցին, թէ՝ «այս երեսլթ է»: Քրիստոս նոցա տհսնելով, ասաց. «մի վախենուք, ես եմ»: Յետոյ նորա աշակերտներից մէկը, Պէտրոս, ասաց. «Հրաման տնւր, որ քեզ մօտ գտմ ջրի վերալից» Քրիստոս խատասխանեց. «եկ» և Պէտրոս նաւից գուրս զալով՝ ջրի վերալ կանգնեցաւ և սկսաւ երթալ, բայց ծովակի ալէկոծութիւնը տեսնելով՝ վախեցաւ և քիչ մնաց, որ խեղդուէր, ուստի աղաղակեց. «Տէր, փրկիր ինձ»: Քրիստոս մօտեցաւ նորան, ձեռքից բանեց և ասաց. «Ի՞նչու երկմտեցար, թէ երահաւատա»: Յետոյ երկուսն էլ նուր մտան, և խալոյն հողմը հանգարատուեցաւ:

39. Հինգ ՀԱՅՈՒ, Հինգ ՀԱՅՈՒ ՄԱՐԴՈՑ ԿԵՐԱԿՐԵԱԸ

Յովհ. 2. 11—7.

Մէկ անգամ Քրիստոս ժողովրդին քարոզում էր և քարոզութիւնը մինչեւ երեկոյ տեսեց: Այս տեսնելով՝ աշակերտներն ասացին. «Տէր, ալսուեղ անապատ տեղ է և ժամանակը անցել է. ժողովրդին արձակիր, որ գիւղը երթան և խրեանց համար կերակուր գնեն»: Քրիստոս հարցըց նոցա. «Նայեցէք, տեսէք՝ քանի հաց ունիք»: Աշակերտները պատասխանեցին թէ. «ալսուեղ մէկ տղայ կայ, որ հինգ հաց և երկու ձուկն ունի, բայց այն բնչպիս պիտի բաւականանալ այս բազմութեանը»: Քրիստոս հրամայեց որ այն հացերը և ձկները ըերեն. առաւ հացը և ձուկը, օրհնեց, կտրեց և խը աշակերտներին տուաւ, և նոքա կտոր կտոր բաժանեցին ժողովրդեան: Ամէնքը կերան և կշտացան, լետոյ հացի կտորները հաւաքեցին, որով տասներկու գաճըւղ լցուեցաւ: Խոկ ժողովրդը հինգ հազար հոգու չափ էին, բայց ՚ի կանանց և տղայոց: Նոքա այս հրաշքը տեսնելով, ուզում էին նորոն խրեանց աշխարհի վերալ թագաւոր գնել, բայց նա թողեց նրանց ու գնաց:

Սղօթը ճաշից տուած:

Աչք ամենեցուն ՚ի
Քեզ, Տէր, յուսան և
Դու տաս կերակուր
նոցա ՚ի ժամու: Բա-
նաս զձեան Քո և

Սմենքի աչքերը
դէպի Քեզ են նո-
յում, Տէր Սոսուած
մեր, և ՚Իու ես տալիս
նրանց կերակուր ժա-

լցուցանես զամենե-
սեան քաղցրութեամբ
կամօք քովք:

մանակին: Բաց ես
անում Քո ձեռքը և
լիացնում ես ամէն
արարածներիդ Քո
ողօրմութեամբ:

Սղօթը ճաշից յետոյ:

Տէր Յիսուս, լցար
՚ի բարութեանց քոց:
Տացուք զոչութիւն
Տեսոն Սոտուծոյ մե-
րոյ ձօր և Օրգոյ և
ձոգոյն սրբոյ: Լիու-
թիւն սեղանոյս ան-
շատ և աննոտաղ ա-
րացոյէ: Քրիստոս Սո-
տուած մեր, որ ըզ-
մեզ կերակրեաց, Կը-
մու փառը յուիտեանս
ամեն:

Տէր Յիսուս, լիա-
ցանը Քո բարութիւ-
նով: Ուրեմն շնորհա-
կալ լինենք մեր Տէր
Սոտուծոց՝ Ձօրից,
Օրգոց և սուրբ ձո-
գոց: Քրիստոս մեր
Սոտուածը, որ մեզ
այս կերակուրը տուեց,
թող անպակաս անէ
այս սեղանի լիու-
թիւնը: Կրան է վա-
յելում փառը յա-
փականս ամեն:

40 ՔՐԻՍՏՈՍ ԱՅՐԻ ԿԱՌԱ ՈՐԳՈՒՆ ՅԱՐՈՒԹՓԻՆ Է ՏՈԼՔՈ

Յովհ. 3. 12—17.

Մէկ անգամ Քրիստոս նախին քաղաքն էր մտնում. քա-
ղաքի դրան մօտ տեսաւ, որ մէկ երիտասարդ տանում էին

թաղելու. մեռեալը մի այրի կնոջ միամօր որդի էր: Խղճաց գժբազգ մօր վերայ և ասաց մեռեալին. «Մանուկ դու, քեզ եմ հրամալում, վեր կաց:» Ննջեցեալը վերկացաւ, նստեց և սկսաւ խօսիլ: Ժողովուրդը փառք էր տալիս Աստուծուն և ամէն կողմից տուում էին. «մեր մէջ մի մեծ մարդարէ լայտնուել է, Աստուծ ալցելութիւն արաւ իւր ժողովրդեան»:

41. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԱՆԳԱՄԱԼՅՈՒԹԻՒՆ

Առաջ. Բ. Յ. Դուկ. Ա. 18.

Մէկ անգամ Քրիստոս Կափառնաւմ քաղաքը գնաց և մէկ տուն մտաւ, ուր նորա մօտ այնքան ժողովուրդ հաւաքուեցան, որ զբան մօտն անգամ տեղ չկար: Քրիստոս Աստուծալին փարտավետութեամբ քարոզում էր ժողովրդեան: Այն ժամանակ նորա մօտ բերում էին մէկ անգամալոյծ, որին չոլա մարդ վերցրել էր, բայց ժողովրդի բազմութեան սրատնառով անհնար լինելով տուն մայնել, տան կտուրը բարձրացան, և առաստաղը քանդելով անգամալոյծը մահճի մէջ գրուած Քրիստոսի առաջ իջուցին: Քրիստոս տեսնելով նոցա հաւատքը, ասաց անդամալուծին. «Ներուած լինին մեղքերդ»: Դալիները մտածում էին իրենք իրենց մէջ և տուում. «Ոա ինչու է հայշոյում. Աստուծուց զատ ով կարող է մեղքերի թողութիւն տալ»: Քրիստոս իմանալով նոցա միտքը, հարցրեց նոցա թէ. «Աս երկու խօսքերից ո՞րը աւելի հեշտ է ասելը՝ ներուած լինին մեղքերդ ասելը, թէ վեր կաց և գնա: Բայց որպէս զի իմանաք, թէ մարդու Որդին իրաւունք ունի աշխարհիս մէջ մեղքերին թողութիւն տալու՛ քեզ եմ տուում (անգամալուծին), վեր կաց, անկողինդ առ և տունդ գնա»: Հիւանդն իսկոն վեր կացաւ, առաւ անկողինը և գնաց: Ամէնքն աղաղակում էին. «ալսողիս հրաշտի բան երբէք չենք տեսել»:

42. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԴԻՖԱՆՑԱՐՆԵՐԻՆ

Դուկ. Բ. 26—39.

Մէկ անգամ Քրիստոս իւր աշակերտների հետ Դերգետացւոց երկիրը գնաց, որի մօտերը զերեզմանի շատ այրեր (մաղարաններ) կալին: Այն այրերի մէջ բնակում էր մէկ զիւշար, որ ամէնքի որափ մէջ ահ ու երկիւղ էր ձգել: Նատանգամ փորձել էին որ նրան կատեն, բայց նա դիւահարութեան կատաղութեան ժամանակ կոտրատում էր շղմաները, բաշվամ էր այրի մուլթ տեղերը, գիշեր ցերեկ աղաղակում էր և քարէ քար խփուելով ինքն իրան վիրաւորում էր: Քրիստոս՝ երբ այնտեղ հասաւ, դիւահարը նորա դիմացը դուրս եկաւ աղաղակելով. «Քրիստոս Որդի Աստուծոյ, դու ինձ հետ ինչ գործ ունիս, աղաջում եմ քեզ՝ ինձ մի չարչարիր»: Քրիստոս հրամայեց չոր հոգուն, որ նորա միջից գուրս զայ և հարցրեց. «անունդ ի՞նչ է»: Սատանան դիւահարի բերանով պատասխանեց. «անունս լիգեուն է, որովհետեւ մենք շատ ենք:» Եւ զեկերը սկսան խնդրել Քրիստոսից, որ հրաման տալ իրենց խոզերի երամակի մէջ մտնելու: Քրիստոս թոյլ տուանոցա, և խօսին բոլոր խոզերը ծավը թափուեցան ու խեղդուեցան: Հովիները ահ ու զազով քաղաք փախան, իսկ զիւահարը իւր առաղջանալը զգալով, Քրիստոսի առաջ նատու և նորա քարոզութիւնները լսում էր:

Մի օր ևս մէկ մարդ բերաւ իւր սրբուն Քրիստոսի մօտ, որ դիւահարութիւնից ազատէ. Յիսուսին չզտնելով, նորա աշակերտներին խնդրեց, որ այն հիւանդին տուողջացնեն: Աշակերտները չկարողացան դեխն հալածել: Այն միջոցին Քրիստոս եկաւ: Դիւահարը հայրը տեսնելով նորան, ոտքի տակն ընկաւ և ասաց. «Տէր, օգնիր իմ որդուս, որ լուսնոտութիւն

ունի և սաստիկ հիւանդանում է, երբեմն կրակի մէջ է ընկնում և երբեմն ջրի մէջ։ Ալսպէս ահա՝ ի ծնէ հիւանդ է։ Ես նորան քո աշակերտների մօտ բերի, բայց նոքա չկարողացան առողջացնել»։ Քրիստոսի մօտ բերին հիւանդին, որ յանկարծ փրփրելով սկսաւ գետին խփուիլ և թաւալիլ. իսկ հայրը աղաղակում էր. «Տէր, խղճա և օգնիր մեզ»։ Քրիստոս գթալով նորա վերալ, ասաց. եթէ հաւատում ես, որ կարող եմ բժշկել, որդիդ կրթշշկուի»։ Խեղճ հայրը արտասուալից աչքերով ասաց, «Տէր, հաւատում եմ, օգնիր անհաւատութեանս»։ Այն ժամանակ Քրիստոս ասաց. «չար և խուլ ոգի, քեզ հրամայում եմ, որ դուքս գաս և այսուհետեւ դորա մէջ չմտնես», և մէկէն չար ոգին մանկան միջից դուքս եկաւ։ Քրիստոսի առանձին եղած ժամանակը, աշակերտները հարցրեցին թէ՝ «մենք ի՞նչու չկարողացանք դեկին հանել»։ Քրիստոս նոցա պատասխանեց թէ՝ «ձեր չկարողանալու պատճառը ձեր անհաւատութիւնն է, որովհետեւ այդ տեսակ դեերը միայն աղօթքով և պահքով են հալածվում։

43. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Ե Ի ԾՆԷ ԿՈՒՐԻՆ

Յով. Թ. 1—17.

Քրիստոս Նրուսաղէմի մէջ մէկ անգամ ՚ի ծնէ կոյր մարդու պատահեցաւ, որ ողորմութիւն էր խնդրում։ Հրէալք այնպիսի կարծիք ունէին թէ՝ մարդուս պատահած ամենայն դժբաղդութիւնքը իւր մեղքի պատիմ են։ Իսկ եթէ փոքր տղայոց պատահէր դժբաղդութիւնը, կարծում էին թէ նորա ծնողաց մեղքի պատիմն է։ Քրիստոսի աշակերտներն ես ոյն մտքին էին, և տեսնելով ՚ի ծնէ կոյր մարդուն, հարցըցին Քրիստոսին. «Սա իւր, թէ ծնողաց մեղքի համար կոյր ծնուած-

է»։ Քրիստոս պատասխանեց. «Ոչ իւր մեղքի և ոչ իւր ծնողաց մեղքի համար է, բայց այն պատճառով կոյր է ծնուել, որ Աստուծով հրաշալի գործերը լալոնուին»։ Այս ասելով՝ գետնի վերալ թքեց, կաւ շինեց և կոյրի աշքերին քսելով, հրամայեց որ երթալ Սելովամ աւագանի մէջ լուանայ։ Կոյրը կատարեց այս հրամանը և աշքերը բացուած, յետ գարձաւ ախտեղից։

44. ՏԱՄՆ ԲՈՐՈՑՆԵՐԻ ԲԺՇԿՈՒՄԻՆ

Դ. ա. Փ. 11—19.

Քրիստոս մի գիւղ մտնելով, տասն բորոտների պատահեցաւ (որ վոխագրական և անբուժելի ցաւ ունէին)։ Նոցանից ինն հոգի Հրէալ էին, իսկ մինը Սամարացի։ Երբ Հեռուեց տեսան Քրիստոսին, աղաղակեցին. «Վարդապետ, օգնիր մեզ»։ Քրիստոս տեսնելով նոցա հաւատքը, ասաց «Գնացէք, ցոյց տուէք ձեր անձը քահանալին»։ Այս բանս ասաց այն պատառով, որ Հրէից մէջ օրէնք կար, որ բորոտութիւնից առողջացող մարդը պէտք է յալտնուելը քահանալին և շնորհակալութեան գոհ մատուցանէր։ Այս պատճառով բորոտի քահանալի մօտ երթալը առողջանալու նշան էր։ Բորոտները գնացին և ճանապարհին առողջացան։ Բոյց ինն Հրէալք մոռացան այն բարերարութիւն անողին, և միայն Սամարացին եկաւ Քրիստոսին շնորհակալութիւն մատուցանելու։ Քրիստոս իւր աշակերտների առաջև ցոյց տաւաւ։ Սամարացուն և ասաց. «այս Սամարացին, որ աղանդաւոր է հոմարփում, աւելի լաւ է Հրէաներից, որ իւրեանց արդարութեան վերայ պարծենում են»։ Եւ ազա Սամարացաւն գտուալով, ասաց. «չո՞ որ տասն հոգի առողջացան, արդք իննը հոգին ուր են. ինչու նոքա չինըագարձան վառք տալու Աստուծուն»։ Եւ ապա ասաց նորան. «Գնա, հաւատքը փրկեց քեզ»։

45. ՔՐԻՍՏՈՍԻ ԱԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԻՒՆԸ

Քրիստոս ժողովրդեան մէջ քարոզած ժամանակ տուում էր, թէ Աստուած այն ողորմած Հայրն է, որ երկրի վերալ հաստատեց իւր արքայութիւնը և իւր մօտ ընդունում է բոլոր ապաշխարող մեղաւորներին: Նուև քարոզում էր, թէ ինչպէս կարելի է մտնել երկնքի արքայութիւնը, թէ ինչպէս պէտքէ կատարել Աստուծոյ կամքը, և թէ ո՞րչափ պէտք է հոգս անել աշխարհիս բարիքների վերալ: Իրեն համար տուում էր, թէ Աստուծոյ որդին է, և թէ պիտի չարչարուի մարդկանց համար, թէ իւր փոխանակ պիտի ուղարկէ միսիթարիչ ուուրբ Հոգին, և թէ կրկին փառքափ պիտի գոյ կենդանի և մեռած մարդիկներին գատելու:


Քրիստոս ամենայն տեղ քարոզում էր՝ թէ ծագի եզերքին, թէ գաշտի մէջ, թէ լեռների ստորոտների մօտ, թէ մասնաւոր տներում ու ժողովարաններում և նոյն իսկ տաճարի մէջ: Երբեմն բացալայտ կերպով էր քարոզում և երբեմն առակներով կամ ալլարանաւթիւններով: Քրիստոս առակներով այն նպատակով էր խօսում, որ ուսում շոնեցող ժողովուրդը լաւ հասկանար: Ժողովուրդը Քրիստոսի քարոզութիւնները լսելով, զարմանում էին և նորա համար տուում էին թէ՝ «ո՞չ մի մարդ ուրա նման իմաստութեամբ. խօսած չէ:»

46. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹՅԻՒՆԸ ԱՍՏՈՒՇՈՅ ՈՂԱՐՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Մատ. Թ. 10—13. Ղոկ. Ժ. 11—32.

Քրիստոս քարոզում էր, թէ՝ Հայրն Աստուած Աղորմած է, և ուրախութեամբ ընդունում է իրեն դիմող ամենայն ապաշխարող մարդիկներին:

ՄԵկ անգամ փարիսեցիք հարցընցին Քրիստոսի աշակերտներին թէ՝ «ի՞նչու ձեր փարդապեար մեղաւոր մարդկանց հետ ուսում է և խմում»: Քրիստոս նորանց պատասխանեց թէ՝ «առողջներին բժիշկ Հարկուօք չէ, այլ հիւանդներին: Ես եկել եմ ոչ թէ արդարներին դէպի ապաշխարութիւն կոչելու, այլ մեղաւորներին»: Քրիստոս ուզելով որ իւր փարդապեատութիւնը ժողովուրդը լաւ հսկանար, անառակ սրգու տռակը թիւ կատարեալ որդու տռակը



որպաննց նացա, թէ՝ «մի մարդ երկու որդի ուներ, փոքր որդին իւր հօրիցը խնդրեց Հայրակուն ուսացուածքից իրեն ընկած բուժինը, և հօր առանիցը հեռանալով, հեռու աշխարհ զնաց: Այսունզ վատանեց իւր բոլոր ունեցածք և բոլորովին աղքատութեան մէջ ընկաւ: Այն աշխարհքը սով ընկաւ և անառակ որդին իւր աղքատութեան ովատճառով մէկի մօտ

ծառայութեան մտաւ, որ նորա խոզերը արածացնէ: Սաստիկ
կարօտութեան ժամանակ լիշեց Հօր տունը, և միտքը դրաւ
որ երթայ և իւր Հօր մօտ մշակութիւն անէ: Հայրը մեծ ու-
րախութեամբ ընդունեց նրան իբրև որդի, և այդ պատճա-
ռով մեծ խնջուք արաւ: Այս միջոցին նորա մեծ որդին
դաշտից դարձաւ և երգերի ձախն լսելով տան մէջ, հարցրեց
թէ՝ «այս ի՞նչ ուրախութիւն է»: Պատասխանեցին թէ՝ «եղ-
բարդ եկաւ և հայրդ նորան ողջ և առողջ տեսնելու համար
մեծ խնջուք է պատրաստել»: Մեծ որդին նեղացաւ և չէր
ուզում տուն մտնել: Հայրը գոււը եկաւ, որ նրան ներս կանչէ.
բայց նա պատասխանեց. «Դու երեէք մի ուլ գոնէ ինձ չտուիր,
որ բարեկամներիս հետ ուրախանալի, իսկ այդ որդուդ համար
մորթեցիր պարարտ եղը, որ ըոլոր ունեցածդ անսուակու-
թեամբ վատնեց:» Հայրը պատասխանեց նրան. «որդեակ, դու
միշտ մօտս ես, և բոլոր ունեցածս քոնն է. իսկ այս եղբարդ
որ մեռած էր, կենդանացաւ, ի՞նչպէս չուրախանամ սորա
վերայ»:

Հայր ասելով՝ Աստուած պիտի իմանանք, փոքր որդին
մեղաւոր մարդն է, մեծ որդին օրինալահն է, որ իւր բարի
գործերով պարձենում է:

Քրիստոս մեզ իրաւունք տուաւ Աստուծուն մեզ Հայր անուաննելու. այս պատճառով մենք Աստուծուն աղօթք անելու ժամանակ նրան երկնաւոր Հայր ենք կոչում, և նրանով յայտնում ենք, թէ նորս Հայրական խնամքին ապահնած ենք, և ցանկանում ենք նորս կամքը կատարել այնպէս, ինչպէս որ երկնքում Հրեշտակները կատարում են:

“*Myrra* *Myrra*, “*Myrra* *Myrra*”

47. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԹԵ ՄԱՐԹՈՒԿ Ի՞ՆՉՊԵՍ
ՊԻՏԻ ՎԱՐՈՒԹԻՆ ԱՐԱՐԺԱՆԻ ԼԻՆՄ ԱՍՏՈՒՆԾՈՅ ՈՐԴԻՔ
ԱԽՈՉՈՒԵԼՈՒ, ՔՐԻՍՏՈՍ ՕՐՀՆՈՒՄ Ե ՄԱՆԱԿԿՆԵՐԻՆ
Առաջնական բանալիք դաստիարակութեան մասին առաջնական
պատ. և. 2—16, 48. Դակ. գ. 20—26, 36, Դակ. մը. 15—17.
Առաջնական բանալիք առաջնական առաջնական պատ.
Քրիստոս ասաց իւր աշակերտներին թէ՝ «ողբրմած և
կատարեալ եղէք ձեր Երկնաւոր Հօր նման»:
Իւր կեանքի մէջ մի օրինակ տուաւ, որին մարդիկ պիտի
հետեւն, և երանելի (բարեխազդ, Աստուծոյ արքայութեան
արքանի) անուանեց այն մարդկանց, որոնք նարա օրինակին
են հետեւում: Նա հեզ էր և սրտով խանարհ և մարդկանց
մեղքի վերալ արտասովում էր: Արդար ու ողբրմած էր, և
սրտով ալնապէս մաքուր էր, որ ամեներին մեղք չունէր: Ոչ
մէկի գէմ թշնամութիւն չունէր: Կալին մարդիք, որ նրան
ատում էին և հալածում և մինչեւ իսկ զրպարտում էին,
բայց նու համբերում էր բոլոր զրպարտութիւններին և ազօ-
թում էր թշնամիների համար: Քրիստոս ասաց. «Երանի
հոգով աղքատներին (ալսինքն՝ նոցա, որ իւրեանց պակասու-
թիւնները ճանաչում են և իրենք իրենց մեղաւոր են համա-
րում), որովհետեւ երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժա-
ռանգեն: Երանի սգաւորներին, (որ լաց են լինում և ցաւում
են իւրեանց մեղքի համար,) որովհետեւ նոքա պիտի միսիթա-
րուին: Երանի հեզ մարդկանց (որ ոչ իրենք են բարկանում
և ոչ ուրիշներին բարկանալու պատճառ են լինում), որովհե-
տեւ նոքա պիտի ժառանգեն երկիրը: Երանի նորանց, որոնք
արքայութեան համար քաղցած ու ծարաւ են (որ արդարու-
թիւնը այնպէս են սիրում, ինչպէս քաղցած մարդք կերա-
կուրը), որովհետեւ նոքա պիտի կշանան: Երանի սգաւորու-
թիւն տուազ մարդկանց, որովհետեւ նոքա ևս ողբրմածութիւն

պիտի գտնեն: Երանի մաքուր սիրտ ունեցողներին, որովհետեւ նոքա Աստուծուն պիտի տեսնեն: Երանի խաղաղաբար մարդկանց (որ իրենք չեն կովում, և աշխատում են ուրիշներին հաշտեցնել), որովհետեւ նոքա Աստուծոյ որդիք պիտի կոչուին: Երանի արդարութեան համար հալածուող մարդկանց, որովհետեւ երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժառանգեն: Երանի ձեզ, երբ իմ պատճառով ձեր վերայ ամեն տեսակ բամբասանք կ'անեն. խնդացէք, ուրախացէք, որովհետեւ երկնքում ձեր վարձքը շատ կըլինի: Դուք էք աշխարհիս լոյսը, ուրեմն, թող ձեր լոյսը այնպէս լուսաւորէ (արախնքն՝ այնպէս կեանք անցկացըէք) մարդկանց տռաջեւ, որ նոքա տեսնեն ձեր բարի գործերը և փառք տան Ներ երկնաւոր Հօրը: Քրիստոս ուրիշ մի օրինակ ևս ցոյց տուաւ, որին մենք պիտի հետեւնք երկնքի արքայութեանը հանելու համար: Նորա մօտ մի անդամ բերին շատ մանուկներ, որ ձեռք գնէ նոցա վերայ և օրհնէ: Քրիստոսի աշակերտները, կարծելով թէ աղայքը անսարժան են նորա օրհնութեանը, և որպէս զի նոքա խրեանց վարդապետին նեղութիւն շտան՝ չեին թողնում, որ աղայքը Քրիստոսին մօտենան: Քրիստոս այս տեսնելով՝ բարկացաւ և ասաց իւր աշակերտներին. «Թողէք ալդ մանուկներին և մի արգելէք դոցա ինձ մօտ գալ, որովհետեւ դոցա նմաններինն է երկնքի արքայութիւնը: Եշմարիտն եմ տռում ձեզ, որ ով որ տղալի պէս չի ընդունի երկնքի արքայութիւնը, կարող չէ նորա մէջ մտնել»: Յետոյ մանուկներին դիրկն առաւ, ձեռքը դրաւ նոցա վերայ և օրհնեց նրանց:

Մենք ինչպէս Աստուծոյ որդիք, պէտքէ աշխատենք Աստուծոյ անունը փառաւորել, բայց շատ անզամ չար գործերով Աստուծոյ անունը անպատճում ենք անհաւատ մարդկանց պառաջ։ Այս պատճառով օգնութիւն ենք խնդրում Աստուծուց սրբութեամբ ապրելու համար, այնպէս որ ուրիշ մարդիք ևս, տեսնելով մեր բարի գործերը, փառք տան մեր

Երկնաւոր Հօրբ, սրբ Համար էլ ասում ենք ազօթելով. «Սարբ
եղինի անուն քոյ»:

48. ՔՐԻՍՏՈՆԵ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԻՒԹ ԱՇԽԱՐՀԱՅ ՎԵՐԱՑ
ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԹԱԳԱԿՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՆ

and. And you. **U**ncle. 3-9. 4-9. 19-32. 36-43.

Քրիստոս քարոզում էր, թէ իւր թագաւորութիւնը (այսինքն՝ իրեն հաւատացող ժողովուրդը) պիտի տարածուի բոլոր ազգերի մէջ, և մինչև վերջին դատաստանի օրը այն թագաւորութեան մէջ արդար և մեղաւոր մարդկակ միասին պէտք է լինին: Քրիստոս թագաւորի հարսանիքի համար պատրաստուած խնջուքի առակով սովորեցրեց, թէ իւր արքայութիւնը Հրեաներից գուտ հեթանոսներն ևս պիտի ժառանգեն և արսագիս ասաց. «Թագաւորի մէկը խնջուք պատրաստեց իւր որդու հարսանիքի համար և շատ մարդկէ հրաւիրեց: Երբ ամեն բան պատրաստ էր, ուղարկեց իւր ծառաներին, որ Հրաւիրեալներին կանչեն. բայց նորա չկամեցան գալ, և թագաւորի ծառաներից ոմանց ծեծեցին: Թագաւորը բարկանալով՝ նոցա գէմ զօրք աւզարկեց, իւր ծառաների սպանողներին կոտորեց, ալբեր տալով նոցա քաղաքները, և Հրամայեց՝ որ խնջուքի Հրաւիրեն լոլոր այն մարդկանց, որոնց կրոգտնեն քաղաքից գուրս և ճանապարհի վերալ:

Թագաւորն է Աստուած, թագաւորի որդին է Յիսուս
Քրիստոս, քաղաքն է Հրեհց թագաւորութիւնը, Հարսանիքի
Հրաւիրեալներն են Արքահամի սերունդ՝ Հրեհաները, թագաւորի
ծառաներն են քահանաները, մարդարէները, քաղաքից
զուրս և ճանապարհների վերալ եղածներն են Հեթանոսները,
որ մոլորուած էին կռապաշտութեան և մեղքի մէջ։ Այս

առակից Համկանում ենք, թէ Աստուածա Հրեից փոխանակ իւր արքալութեան մէջ ընդունեց Հեթանոսներին, որոնք իրեն չէին հաւատում:

Սովորեցրեց թէ Աստուածոյ արքալութեան մէջ մինչև զեր-
ջին կատամատանի օրը մեղաւերներ ևս պիտի ապրին արդարների
հետ: Քրիստոս ցորենի Առ որոմի առակով՝ այսպէս ասաց.
«Երկնքի արքալութիւնը նմանում է այն մարդուն, որ արտի
մէջ լաւ սերմ սերմանեց, բայց յետու նորա մէջ ցորենի հետ
որոմն ևս բուսաւ: Ծառալք իւրեանց տիրոջ մօտ եկան և
ասացին. «Տէր, գույլաւսերմն ցանեցիր, որոմը որտեղից
բուսաւ:» Տէրը պատասխանեց. «Թշնամի մարդու արածք բան
է ալդ:» Ծառալքն ասացին. «Կուզեմ գնանք որոմը քաղենք:»
Բայց Տէրը պատասխանեց. «Ո՛չ, զինի թէ որոմի հետացո-
րենն ևս քաղեք, ժողեք ցորենի հետ որոմն ևս աճի մեծա-
նալ մինչև Հնձի ժամանակը: Հնձի ժամանակ Հնձողները
ցորենը շահմարանի մէջ կըհաւաքեն, իսկ որոմը կ'ալրեն:»
Քրիստոս այս առակը իւր աշակերտներին ալսպէս բացարեց.
«Բարի սերմն ցանողը — Մարդոյ Որդին է: (Քրիստոսինքն
իրեն անուանում էր որդի մարդոյ). գաշտը — աշխարհս է.
բարի սերմը արքալութեան որդիքն են, որոմը ցանող թշնա-
մին — սատանան է: Հունձը — աշխարհիս վերջն է. իսկ Հնձող-
ները — Հրեշտակներն են: Ինչպէս որ Հնձից յետոյ որոմը
կ'ալրեն, այնպէս ևս աշխարհիս վերջը պիտի լինի: Մարդոյ
Որդին իւր հրեշտակներին կուզարկէ, որ կըհաւաքեն նորա
արքալութեան միջից այն բոլոր մարդկանց, որոնք անօրէնու-
թիւն են գործել նրանց գեհենի կրակի մէջ կըձգեն, ուր
նորա պիտի լան և ատամները կըճան: Իսկ արդարները
արեգակի նման երկնքի արքալութեան մէջ պիտի փայլին»:
Քրիստոս բոլոր իրեն հաւատացողներին ընդունեց իւր
երկրիս վերալ հաստատուած արքալութեան մէջ. բայց մենք
շատ անդամ մեր չար գործերի պատճառով այն արքալու-

թիւնից գուրս ենք գալիս, սատանայի ծառայ ենք գառնում
և զրկվում ենք Քրիստոսի արքալութիւնից: Այս պատճառով
խնդրում ենք Աստուածուց, որ օգնէ մեզ նորա արքալութեան
մէջ մնալու և թագաւորի նման մեր վերալ իշխէ, և ազ-
թելով ասում ենք. «Եկեւյն արքայութիւն չ»:

49. Քրիստոսի ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ, թէ ԻՆՉՊԵՍ ՀԱՐ-
ԿԱԽՈՅ ԵՆ ՀԱԻԱՏՔ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

Մաս. ԺԳ. 4—9. 19—32. 36—43.

Քրիստոսը ուսուցանում էր, թէ այն մարդը միայն փըր-
կութիւն կըգտնէ, ով որ բոլոր սրտով կ'ընդունի իւր քարո-
զութիւնը և կըկատարէ, այսինքն՝ նա միայն կըփրկուի, ով
որ իրեն կըհաւատայ և իւր հաւատը ցոյց կըտայ բարի գոր-
ծերով: Այս բանը Քրիստոս բացատրեց սերմանացանի և քարի
վերալ տուն շինողի առակներով: Ասելով թէ՝ «Աշա սերմա-
նացանը գուրս եկաւ սերմերից ոմանք ճանա-
պարհի վերալ ընկան և պտուղ չըերին, որովհետև անցնող
գործողներից ոտնակոխ եղան ու թռչունները նրանց կերան:
Ոմանք քարտ տեղ ընկան, և արմատ բռնեցին, բայց որով-
հետև արմատը ամրանալու տեղ չունէր, չորացան: Ոմանք
փշերի մէջ ընկան, ծլեցան, բուսան և փշերից խեղդուեցան:
Ոմանք ևս լաւ հողի վերալ ընկան և առատ պտուղ տուին»:
Սերմանացանը Քրիստոսն է. սերմը — նորա քարոզութիւնն է.
Հողը — մարդու հոգին է: Ոտքի տակ ընկնող սերմերը — կը-
նշանակին անհոգ և անուշադիր մարդկանց հոգիքը. քարու
հողը — կը նշանակէ թեթեամիտ մարդկանց հոգիքը, որ ու-
րախութեամբ ընդունում են նորա քարոզութիւնը, բայց
վտանգ և նեղութիւն հասնելուն պէս մէկն թողնում են
նորան: Փշերով շրջապատուած հողը օրինակ է այն մարդուն,

որ զբաղուած է կենսական հօգսերօվ, որթի նօրտ միջի քարի գարծերը խեղդվում են: Բարի Հողն է ուշադիր մարդու հոգին, որ ազատ և հեռու է աւայնութիւններից: Նու Աստուծոյ խօսքը կ'ընդունէ և իւր բարի գարծերին պատուզներ կրթերէ:

«Ամէն մարդ, որ ինձ կոչում է Տէր, Տէր, կարող չէ երկնքի արքալութիւնը մտնել. բայց նու միայն արքալութեան արժանի կը լինի, ով որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ: Այն մարդը, որ իմ խօսքերս լսում է և չէ կատարում, նման է այն անմիտ մարդուն, որ իւր տունը շինեց աւազի վերայ. (այսինքն՝ տուանց ամուգ Հիմքի): Անձրև եկաւ, գեաերը գուրաւ եկան ափերից, քամին փշեց և տունը քանդուեցաւ: Իսկ այն մարդը, որ իմ խօսքերս լսում է և կատարում, նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վերալ շինեց, և ոչ քամին և ոչ ջաւրը չկարողացան նորան կործանել»:

Աստուծոյ երկրաւոր արքալութեան մէջ տալրելու և մեռնելուց յետոյ նորաւ երկնաւոր արքալութիւնը մտնելու համար պէտք է հնագանգուինք Աստուծոյ կամքին: Այս պատճառով խնդրում ենք Աստուծուց, որ օգնէ մեզ կատարել իւր սուրբ կամքը այնպէս, ինչպէս որ հրեշտակները կատարում են երկնքում, և ասում ենք. «Եշիցին իմա՞ս ո՞ւ, որպէս յերիշու և յերիրէ»:

50. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԳԼԵԱԽՈՌ ՊԱՏՈՒԻՒՆՆԵՐԻ ՄՍ.ՄՒՆ

Մատ. Իբ. 35—40. Է. 12.

Օրէնսգէտ մտրդու մէկը հարցըց Քրիստոսին թէ՝ «Օրէնքի մէջ ամենամեծ պատուիրանը ո՞րն է»: Քրիստոս պատաս-

խանեց. «Սիրիր քս! Տէր Աստուծուն բոլոր հօգովդ, բոլոր սրտովդ և բոլոր մտքովդ: Ահա սա է մեծ և առաջին պատուիրանը: Երկրօրդն եւս նորա նման է. Սիրիր ընկերոջդ քո անձիդ պէս: Այս երկու պատուիրանքին վերայ հաստատուած են բոլոր օրէնքները և մարդարէութիւնները:» (Հրէալք օրէնք էին անուանում Մովսիսի գրքերը, իսկ մարդարէութիւն անուանում էին միւս մարդարէների գրուածքները):

Տէկ անգամ ես ասաց. «Ննչպէս որ ուզում էք, որ մարդովի ձեզ հետ վարուին, այնպէս և դուք նոցա հետ վարուեցէք, որովհետեւ այս իսկ են օրէնքները և մարդարէութիւնները»: Արեմն Աստուծուն և ընկերներին սիրելու մէջ պարունակվում են բոլոր օրէնքները:

51. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԹԷ ՈՎ. Է. ՄԵՐ ԻՆ ՇՈՒՏԱ ՎՈՏՈՒՅԵԴԵՆԻ ԲԱՐԵԿԱՄԸ

Դակ. Փ. 29—37. Մատ. Ա. 43—48.

Օրէնսգէտ մտրդու մէկը հարցըց Քրիստոսին թէ՝ «Ո՞ւ է իմ ընկերս»: Քրիստոս այն խօսքին պատասխանելով, ողորմած Սամարացու առակը պատմեց. «Մարդու մէկը գընում էր երուսալեմից Երիքով. ճանապարհին նորա վերայ ուղազիներ լորձակուեցան, ծեծեցին նորան, կողոպտեցին և կիսամեռ ձգեցին գնացին: Պատահեցաւ որ այն ճանապարհի մօտով անցկացու մի քահանալ, նա թէև տեսաւ այն դրժագդ մարդուն, բայց առանց նրան օգնելու անցկացաւ զնաց: Նոյն ճանապարհով անցկացաւ մի Ղետացի. նա ևս նոյն կերպով վարուեցաւ: Յետոյ անցնում էր մի Սամարացի: Սա տեսնելով այն վիրաւորեալ մարդուն, նորա վերքերը փաթաթեց, իւր իշի վերալ դրաւ, պանդոկը տարաւ, և պանդոկից

ԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ
ԻՆ ՇՈՒՏԱ
ՎՈՏՈՒՅԵԴԵՆԻ
Ակադեմիա Նայ:
С С С Р

Հեռանալուց ժամանակ՝ պանդոկապետին փող տուեց ու խնդրեց որ հոգն ունենայ Ահիւանդիս վերայ, և ասաց. «Եթէ աւելի ծախք յանես, թե զառնալուստ ժամանակակը վրդաբեմ ոքեզ» Ռոբերտնախն երեք մարդկանց ռամիջից շվիրաւորեալու մարդու վնկերն ով էր, Հարցրեց Քրիստոս. Օրէնսդէտը պատասխանեց. «Ի հարկէնա, որ օգնեց նրան»։ Քրիստոս ասաց. «ուրեմն զնա, և դու էլ այնպէս արա»։ (այսինքն՝ օգնիր ամենայն կարուեալներին, և մի որոշիր թէ նա քո ընկերն է, թէ ոտար) Այսպիսի Քրիստոս առվորեցնելով թէ՛ ինչպէս պէտք է վարուինք մեր թշնամիների հետ, որ մեզ չար են կամենում, ասաց. «Սիրեցէք ձեր թշնամիներին, բարի արէք ձեզ ատողներին և աղօթք արէք նոցա համար, որ ձեզ նեղացնում են և հալածում, տիս կերպով ձեր Երկնաւոր Հօր որդի կը լինիք, որովհետեւ նա իւր արեգակը ծագում է արդարների և մեղաւորների վերայ և անձրեւ ուղարկում է չար և բարի մարդկանց համար։

52. ՔՐԻՍՏՈՍԻ ՔՄՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՐԴՄԱՆ ՎԵՐԱՅ

Առաջին մասունքը անդունք է մի արքայի առկանութեան գործ Արքանահասաւոր Մատ. Ա. 33—37. առաջին առաջին առ և այս պահու արքայի բանակը պատասխանական ծովագույն Օրէնսդէտները ուղղութեամբ քարոզում էին, թէ երգում պէտք է կատարել։ Բայց ասում էին թէ երգումը երկու տեսակ է. մէկը գլխաւոր, և միւսը՝ աննշան. կարծում էին, թէ աննշան երգումը և կարելի է զանց առնել առանց մեղքի մէջ ընկնելու։ Քրիստոս քարոզում էր. «Հին ժամանակուայ մարդկանց պատուիրած էր թէ սուտ երգումն մի անիր, այլ ակատարիր երգումդ. Աստուծոյ առաջ. Բայց ես ասում եմ ձեզ. առմենեւին երգումն մի անէք, ոչ երկնքով, որովհետեւ Աստուծոյ առելու է. ոչ երկուվ, որովհետեւ Աստուծոյ ոտքի պա-

տուանդանն է. ոչ Երուսաղէմով, որովհետեւ մեծ թագաւորի քաղաքէ է, Ահանցախիսկամպլիսովդ, ուսումնակացնել կամ նսեացնել; Բայց ձեր խօսքն թոն լինիւալոն — այնուեւ ոչն — ոչ որ սորանից աւելին չարիցն է (Ալմինքն պովիլական խօսակցութեան մէջ երգումըն մի անէք, այլ միայն խիստ հարկաւոր եղած տեղը):» այս այլ առաջին առ առաջն է մայութ ու առ Ամազու վեց Առաջն առ առաջըն է ու հարցուց առ ուսումնակացնել մի մաս է. ՔՐԻՍՏՈՍԻ ՔՄՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՄԱՅՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՅ Առաջն առ ՍՈՒԹԻ ՊԱՀԵԼ, ԵԱԲԱԹԻ ԵՒ ՏՕՆ ՕՐԵԲԲԱՆ այս մասունքը այսպիս առաջըն առաջն մասունքն է այս և յանձն համար առ ԱՄ Մատ. Գ. 1—5. Մատ. Ժ. 1—8. Ամազու վեց ԱՄ մասունքը այսպիս է առաջըն առաջն մասունքն է այս և յանձն համար առ ԱՄ Առաջն առ պահել է բարեգործութիւն անել: Այս Զատկի տօնին Երուսաղէմ եկաւ. Այնտեղ տաճարի մօտ մէկ աւագան կար, ուր տանում էին զոհի կենդանիները լուանալու համար. Աստուծոյ հրեշտակը ժամանակ անդամանը իջնելով ջուրը խառնում էր. և ով որ առաջին անդամ խառնուած ջրի մէջ էր մտնում, առաջանում էր իւր Հիւանդութիւնից: Այս պատճառավ աւագանի մօտ միշտ շատ հիւանդներ կային պարկած, և նոցա համար հինգ սրահ կար շինուած: Քրիստոս մի շաբաթի օր ախտեղ մտաւ, անդամալուծ մարդուն մօտեցաւ, որ Յջ տարի հիւանդ էր և հարցրեց նրան. «կամենում ես առողջանալ»։ Հիւանդը պատասխանեց. «ալն, Տէր, Երաց մարդ չունիմ, որ ջուրը խառնուած ժամանակը ինձ աւագանի մէջ գեռ չմօտեցած» ուրիշը ինձանից առաջ ջուրն է մտնում», Քրիստոս ասաց. «վեր կաց, անկողինդ առ և զնա»։ Հիւանդն իսկոյն վերկացաւ, անկողինդն առաւ և Աստուծուն փառք տալով զնաց: Այս բանը մի շաբաթ օր պատահեցաւ. ուստի Տըէից ծերերը

Հալածում էին Քրիստոսին, և մինչև անգամ կամենպամ էին նորան սպանել, այն պատճառով, որ նա ջարաբթ օրերը հրաշքներ էր դարձում: Այն միջոցին Քրիստոս առաջարկութեաց, առողջացած մորդուն պատահեցաւ և ասաց: «ահա դու առողջացար, զնա՞ այլ ևս մի ձեզանցիք, որ նորէն չ'Հիւնդանաս»: Ճարդ ու ամիսը ը առօտ մինչեւ առ առ ան անձն

Մէկ շաբաթ օր էլ կրկին Քրիստոս ժողովարանումն էր. այն տեղ տեսաւ ձեռքը շրջոցոծ մի մարդու և ասաց նորան: «դուքս որի, մէջ տեղը կանդնիր»: Բազմութեան միջից մէկը հարցրեց: «միթէ կարելի է շաբաթ օրը թժկութիւն անել»: Այն ժամանակ Ցիսուս զարձաւ Հարցընց ժողովրդեան թէ: «շաբաթ օրը բարի գործ պէտք է անել, թէ չար գործ. կեանք ազատել պէտք է, թէ կորցնել»: Ամէնքը լոեցին: Քրիստոս շարունակեց, տաելով: «եթէ ձեզանից մէկի ոչխարը փոսի մէջ լինկած լինի, միթէ չի տպատիլ նարան: Խսկ մարդը ոչխարից որքան տևելի գերազանց է: Ուրեմն, շաբաթ օրը կարելի է բարի գործ անել»:

Ուրիշ անգամ ևս զարձեալ շաբաթ օրը Քրիստոս իւր աշակերտներավ արտի միջից անց էր կենում: Աշակերտները ճանապարհին ցորենի հասկեր էին քաղում, ափերի մէջ շփում էին և ուտում: Փարիսեցիք Քրիստոսին ասացին: «տես, աշակերտներդ շաբաթ օրը արգելուած բան են անում»: Քրիստոս պատասխանեց նոցա: «ապա ի՞նչու քահանաները շաբաթը խանգարում են տաճարի մէջ զոհ մատուցաներու ժամանակ: Շաբաթը ստեղծուած է մարդու համար և ոչ թէ մարդը շաբաթի համար»: Ուրեմն տօն օրերին ևս կարելի է հասարակ օրերի գործն անել, եթէ շատ հարկաւոր լինի:


54. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ, ԱՅՍԻՆՔՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ, ՊԱՀՔԻ ԱՂՋԹՔԻ ԵՒԼՈՒԱՑ-

ՄԱՆ ՎԵՐԱՅ

Մատ. 9: 1—7. Կոկ. մէ. 9—14.

Հրէից օրէնսդէտները ստուիթեամբ պահանջում էին սղորմութիւն, պահք, ազօթք և լուացումն: Բայց այս ամէն բանը անում էին միայն ի ցուցու մարգկան, որպէս զի ուրիշները տեսնեն նոցա արածները և իրենց փառաւորեն: Քրիստոս որ քարոզում էր, թէ բարեկործութիւնը այն ժամանակ միայն Աստուծուն ընդունելի և փրկարաբ է, երբ այն կատարում ենք ոչ թէ մարգեկներից փարձ ստունալու լուսով, այլ Աստուծուն և ընկերոջ սիրելու մտքով, տոսց թէ՝ «Եթէ սղորմութիւն ես անում, յայտնի կերպով մի տնիր, ինչպէս որ կեղծաւորներն անում են այն նպատակով, որ մարդիկներից փառաւորուին: Խսկ դու երբ որ սղորմութիւն ես տալիս, թնգ ձախ ձեռքդ չմասնալիք, թէ տջդ ի՞նչ է տնում, որ քո սղորմութիւնը ծածուկ լինի. և Հայրդ, երբ կրտեսնէ քո ծածուկ սղորմութիւնը, քեզ յայտնապէս կը հատուցանէ: Նմանապէս երբ պահք էք պահում, կեղծաւորների պէս տրտմած մի լինիք, որ երեսները տիսրեցնում են, որպէս զի մարդիկներին երեխն իբրև պահեցող: Խսկ դու, երբ պահք ես պահում, օծիր գլուխդ և երեսդ լուս, որ մարգեկ շտեսնեն քո պահքելը, այլ քո երկնաւոր Հայրդ միայն գիտենալ: Եւ աղօթք անելու ժամանակդ կեղծաւորի պէս մի լինիր, որ ժողովարանների մէջ և փողոցների անկիւններումը սիրում են աղօթք տնելի, որպէս զի մարդկանց երեխն Խսկ դու աղօթք անելու ժամանակդ սենեակդ մտիր, դուռդ փակիք և աղօթք արտ Հօրդ. և Հայրդ տեսնելով քո ծածուկ աղօթքը, զի կը հա-

տուցանէ լալտնապէս: Աղօթք անելու ժամանակ հեթանոս-ների պէս շատախօսութիւն միանէք, որովհետեւնոքաջնա-պէս են. Համարում, թէ շատախօսութեամբ լսելի կը լինին իւրեանց աղօթքները»: Քրիստոս տօւմ էր նաև, թէ աղօթքը այն ժամանակ զօրաւոր կը լինի, երբ խոնարհութեամբ և Հաստատ լուսով էլ լինում: Այս բանս բացատրեց նա անիրաւ-



դաստարի և պատրի ու առաջ մեջ առաջ մեջ առաջ առաջ դաստարի և մաքսաւորի ու փարիսեցաւառակներով: Նախ ասացաւթէ: «Խնդրեցէք և կտոնէք, գուռը բաղխեցէք և կը բացուի»: Յևոս ասաց. «Մէկ քաղաքի մէջ մի գտաւաւոր կար, որ ոչ Աստուծուց էր վախենում և ոչ մարդիկներից էր կար, որ ոչ Աստուծուց էր վախենում և ոչ մարդիկներից էր ամաչում: Խոյն քաղաքի մէջ բնակվում էր մի խեղճ ալրի կին ևս, որաշատ անդամ իւր գործի Համար գնում էր դա-տաւորի մօտ: Վերջապէս դաստաւորը մտածեց ինքն իրեն և

ասաց. «այս կինը ինձ հանգստութիւն չէ տալիս, ազատեմ սորան, որ այլ ևս չգալի և ինձ չանձբացնէ:» Կտումովքարդ գեօք թէ ինչ է ասում այն անիրաւ գտաւաւորը: Դաւատացէք որ Աստուծուած աւելի շուտով ձեզ կ'օգնէ: Խօսքը առաջ տանելով, ասաց. «Մէկ անգամ մի փարիսեցի և մի մաքսաւոր տաճարը մտան աղօթք անելու: Փարիսեցին Հպարտութեամբ ասում էր. «Ճնորհակալ եմ քեզանից, Աստուծուածիմ, որ ես ուրիշ մարդկանց նման չեմ, և կամ այս մաքսաւորի նման: Ճարաթը երկու օր պահէ եմ պահում, և իմ աշխատանքի տասներորդ մասը քեզ եմ ընծալում»: Այն միջացին մաքսաւորը գեռու կանգնած, չէր համարձակվում աչքերը գէպի երկինքը բարձրացնել, այլ անդադար իւր կուրծքը ծեծելով, ասում էր. «Տէր Աստուծու, ողորմիր ինձ մեղաւորիս»: Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ մաքսաւորը արդարացած իւր տունը գնաց, իսկ միւսը՝ ոչ»:

Հրէից օրէնսդէաները խստիւ պահանջում էին լուացումն. ով որ չէր կատարում, մեղաւոր էր Համարվում և Աստուծոյ արքայութիւնը մտնելու անարժան: Քրիստոս այս աւանդութեան ծուռ լինելը տեսնելով, հերքում էր այն, ասելով. «Լսեցէք և հասկացէք, բերանը մտած բանը մարդուն չէ պըզծում, այլ բերանից դուրս եկած բաները, արմինքն՝ շար մըտքերը, սպանութիւնները, շնութիւնները, սուս վկայութիւնները և հայհոյութիւններն են, որ պղծում են մարդուն: Իսկ անլուալ ձեռքով հաց ուտելը երբէք չի պղծիլ մարդուն:»

55. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐԱԶԱԹԵՒՄՆԻ ԸՆԿԱՐՆԱՑԻ ԹԷՄ ԳԱՐԾՈՒՅՆ ԱՆԳԱՄ ՄԱՍԻՆ

Առա. է. 21-28. Ժ. 6-7. է. 1-5.

Քրիստոս քարազում էր, թէ որ և իցէ ծանր խօսքով վեցերորդ պատուիրանին հակառակ կը գործուի: Հին ժամա-

Նակը ասուեցաւ, թէ «մի սպանիր. ով որ սպանութիւն անէ, դատաստանին պարտական կը լինի»։ Եսկ ես կ'ասեմ ձեզ, թէ ով որ զուր տեղբայր եղբօր վերալ կը բարկանայ, նու ես դատաստանին պարտական կը մնալ։ Ով որ իւր եղբօրը մորոս (ալսինքն՝ անխելք) կ'ասէ, նա եւս դատաստանին պարտական կը մնայ, և ով որ եղբօրը լիմոր կ'ասէ, կը դատապարտուի գեհենի կրակին։

Քրիստոս քարոզում էր, թէ ուրիշի տան վերալ աչք ունենալը հակառակ է եօթներորդ պատութիւնին։ «Դուք լսել էք, որ հին ժամանակն ասուեցաւ թ՛շոր, իսկ ես կ'ասեմ ձեզ, թէ ով զատ մտքով մէկի վերալ կը նայի, նա արդէն շնութիւն գործած կը լինի իւր սրտի մէջ»։

Աւրիշներին գալիքակղեցնողների համար ասոց Քրիստոս. «Ով որ ինձ հաւատացող այս փոքրերից մէկին (ալսինքն՝ մանուկներին, տկարամիտաներին և առհասարակ տգէտ մարդկանց) կը մոլորեցնէ, նորա համար ուելի լաւ է, եթէ ջրաղցի քարը վիզը կապէին և ծովը ձգէին։ Վան այն մարդուն, որի ձեռքով աշխարհի մէջ մոլորութիւն է մտնում։» Քրիստոս ուրիշներին դատելու մասին ասաց՝ «Ոչ ոքին մի դատէք, որ գուք ես չգտառուիք, որովհետեւ ինչպէս որ գուք ուրիշներին դատում էք, նոքա ևս նոյն ձեռվ ձեզ կը դատեն, և ինչ չափով որ ուրիշների համար չափում էք, նոյն չափով ևս նոքա ձեզ կը վերադարձնեն։ Ի՞նչպէս եղբօրդ աչքի մէջ եղած շիւղը նկատում ես, և չես զգում, թէ քո ոչքիդ մէջ գերան կայ։ Կամ ի՞նչպէս կը համարձակուիս տօել եղբօրդ։ Եղբայր, թնդ աչքիդ միջի շիւղը հանեմ», երբ քո աչքիդ մէջ գերան կոյր։ Կեղծաւոր, առաջ քո աչքիդ միջից գերանը հանիր, յետով աշխատիր եղբօրդ աչքի միջից շիւղը հանել։

ՏՅ. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԷ ՄԱՐԴ ՈՐԻՑԱՆ ՀՈԳՍ ՊԻՏԻ ՔԱՇԵ ԿԵՐԱԿՐԻ ԵՒ ՀԱԳՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Պատ. Զ. 25—34.

Քրիստոս քարոզում էր. «Մի հոգալք՝ թէ ինչ պիտի ուտէք, կոմ ինչ պիտի խմէք։ Նալեցէք երկնքի թռչուններին։ Խոքա ոչ ցանում են, ոչ հնձում են և ոչ հստաքում շտեմարանների մէջ, և ձեր Հայրը կերակրում է նրանց։ Միթէ զուք նոցնից գերազանց չէք։ Հագուստի համար ևս ի՞նչու էք հսկո քաշում։ Նալեցէք գաշտի շաշանին, թէ ի՞նչպէս տճում է, որ ոչ աշխատում է և ոչ մանում։ Հաւատացնում եմ ձեզ, որ Ասզումոնն անգում իւր բոլոր փառքի մէջ չհագուստ այն խոտերից մինի նման։ Առաջ Աստուծոյ արքայութիւնը և նորա արդարաւթիւնը խնդրեցէք, և այն ամենայն տռաւելութեամբ կը արտուի ձեզ. (ալսինքն աշխատեցէք լինի արգար և սպորմած. այն ժամանակ Աստուծոյ ձեզ առատապէս կը տալ ձեր կենուական պիտույքը)։ Ալսպէս ևս հսկո մի քաշէք վարուան համար (ալսինքն՝ ալուրուան անելու գործերդ վազուոն մի ձգէք, ալսօր իսկ արեք և բոլորովին նորա վերալ հոգացէք, վազուան համար մտածութեան մէջ շընկնելով)։ Եւրաքանչիւր օրուալ համար բաւական է այն օրուալ տռաւապանքը։»

Քրիստոս քարոզում էր, թէ ողորմածն Աստուծոյ մեր կետնքը պահպանելու ամէն պիտից համար հսկո է քաշում և մեր ամենօրուան հացը տալիս է մեզ։ Այս պատճառով մէնք զիմում ենք դէպի Աստուծոյ այս խնդրուածքով. «Զհոյ մեր հանողապարագ տար մեղ այսօր»։

57. ՔՐԻՍՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ, ԹԵ ԽՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ
ՀԱՐՄԱՆԻԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Դոկ. 15—21. ԺԶ. 13. Մատու ԺԹ. 16—24. Մարտ. 4. 17—27.

Քրիստոս Աստուածալին բերանովը ուսուցանում էր, թէ՝ մարդ հարուստ լինելով բաղդատոր չի լինի, և թէ հարստութեան սէր ունենալը արգելք է լինում երկնքի արքայութիւն մտնելու:

Քրիստոս ասում էր. «Անկարելի է երկու տիրոջ ծառայել՝ այսինքն Աստուծոյ և մամնալի (փողի): Զգուշացէք ազահութիւնից, որովհետև մարդը շատ ստացուածք ունենալովը չէ առլում աշխարհիս վերաբ: Եւ այս առակս ասաց. «Մարդու մէկին արտերը լաւ բերք տուին: Ինքն իրեն մտածում էր, թէ ի՞նչ անեմ, տեղ չունիմ ցորեններս հաւաքելու համար. կըքանդեմ շաեմարտաններս և նոր ու առելի մեծերը կը շինեմ, այնտեղ կըհաւաքեմ ցորեններս և ամենայն բարիքս և ես կ'ասեմ ինձ.—շատ տարիների համար բարիք ունիս հաւաքած, այժմ հանգիստ եղիր, կ'եր, խմիլ և ուրախացիր:— Աստուած տեսնելով նորա ամբարտաւանութիւնը, ասաց. «անմիտ, այս զիշեր հոգիդ կ'առնեն, ում պիտի մնալ բոլոր պատրաստածներդ»:

Այս պատճի տակ ընկնում է այն մարդը, որ գանձ է հաւաքում միայն իւր անձի համար, և չէ հարստանում Աստուծով (այսինքն՝ չէ ժողովում այն բանը, որ Աստուծոյ առաջ հարստութիւն է համարվում):

Մէկ անգամ Քրիստոսին մօտեցաւ Հրէից իշխաններից մէկը և հարցրեց. «վարդապետ բարի, ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:» Քրիստոս պատասխան նեց նրան. «Եթէ կամենում ես յաւիտենական կեանքը ժա-

ռանգել, պատուիրանները պահիր: Երիտասարդը հարցրեց. «մի պատուիրանները»: Քրիստոս պատասխանեց, «մի սպանիր, մի շնար, մի գողանար, մի սուտ վկալիր, պատուիր քո հօրդ ու մօրդ, և սիրիր ընկերոջդ, ինչպէս քո անձգ ես սիրում»: Երիտասարդն ասաց. «Տէր, արդ բոլորը կրամաբել եմ մանկութեան ժամանակիցս, այլ ես ի՞նչ պակաս է ինձ»: Քրիստոս ասաց. «մի բան պակաս է քեզ. գնա, ինչ որ ունիս ծախիր և աղքատներին բաժաննիր, երկնքումը զանձ կ'ունենաս»: Երիտասարդը տրտմեցաւ և գնաց, որովհետեւ չը կամենում հարստութիւնից զրկաւիլ: Յետոյ ասաց Քրիստոս իւր մօտ եղաղներին. «Ո՞րքան գժուար է հարստութեան վերալ յուր գնողների համար երկնքի արքայութիւնը մտնել: Ուղարկն աւելի հեշտ է անցիենալ տոեզի ծակիցը, քան թէ հարստա մարդուն Աստուծոյ արքայութիւնը մտնել:»

58. ՔՐԻՍՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԱԲ ԱՇԽԱՐ-ՀԱՅԻՆ ՊԱՏԻՔՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մէկ անգամ Քրիստոսի սիրելի աշակերտների՝ Յակովիք և Յովհաննէսի մայր Սալոմոնէն եկաւ և խնդրեց նրանից, որ իւր թագաւորաթեան առաջին տեղումը կարգէ նրանց. որովհետեւ կարծում էր, թէ Քրիստոս աշխարհի թագաւոր պիտի լինի և իւր աշակերտներին աշխարհաբին պատիւներ պիտի տալ: Բայց Քրիստոս իւր մօտ կանչեց Յակովիքին և Յովհաննէսին և ասաց. «Ճեր միջից ով որ կամենում է մեծ լինել, ամենին ծառայ պիտի լինի, որովհետեւ ես ես եկել եմ ոչ թէ արիշներին ինձ ծառալեցնելու, այլ ուրիշներին ծառալելու և կեանքու տուլու մարդկանց ազատութեան համար»: Աւրիշ անգամ ես ասաց. «ում որ շատ ընդունակութիւն է տուած, նրանից շատ արդիւնք կըպահանջուի:»

59. ՔԾԻՍՑՈՄ ՔԱՐՈՉՈՒԹԵՒՆԸ ՀԱՐԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջ. Խթ. 15—21, Թէ. 24—27.

Քրիստոս քարոզում էր թէ, պէտք է՝ ժագաւորական հարկերը և եկեղեցական տուրքերը վճարել: Մէկ անգամ փառական կամ համեմատով խօսքով բանել Քրիստոսին, կամել և ըխուցիք կամենալով խօսքով բանել Քրիստոսին: «Հարկաւոր դատաստանի մատնել, Հարցրեցին նորանից թէ՝ «Հարկաւոր է կայսեր տուրք տալ, թէ ոչ»: Այս ժամանակ Հրեանունին ու կայսեր տուրք տալ, թէ ոչ»: Այս ժամանակ Հրեանունին տիրապետում էին Հռոմայից թագաւորները, որ կայսր էին կոչվում: Փարիսեցիք մտածում էին թէ՛ եթէ, ոս պատեհին կոչվում: Փարիսեցիք մտածում էին թէ՛ եթէ, ոս պատեհամատէ թէ՛ Հարկ տալ պէտք է, ժողովուրդը որպան Քրիստոսին տեղ չի բնուածի, որպէսուհե կայսեր Հարկ տալը օրէնքի Հակոսակ կը համարուի: իոկ եթէ տու թէ՛ Հարկ տալ պէտք չէ, այն ժամանակ նորան, իրեւ ժողովուրդեան մոլորեցնող, կայսերը կը մատնենք: Քրիստոս պատասխաննեց նոցա: «ովկ կեղծաւորներ, ի՞նչու էք ինձ փորձում, ցոյց տուէք ինձ այն դաշեկանը, որով Հատուցանում էք Հարկը»: Տուին մի դաշեկան: Քրիստոս Հարցրեց: «ոորոս մերայինը որի պատմութեանը կերն է կամ զիլը»: Փարիսեցիք պատասխաննեցին: «կայսեր»: Քրիստոս այն ժամանակ ասաց: «ուրիմն գնոցէք, կայսեր Քրիստոս այն ժամանակ ասաց: «ուրիմն գնոցէք, կայսեր Հարկը կայսերը տուէք, և Աստուծոյ պատիւր Աստուծուն: Հարկից պարզապէս երևում է, թէ ամենայն մարդ պարագաներին և Աստուծուն:

Օրէնքի Համեմատ իւրաքանչիւր Հրէատ պարտաւոր էր ամէն տարի տաճարին մի մի մնաս (43 կոպէկ) տուրք տալ: Մէկ անգամ Պետրոսին մօտեցաւ այն Հարկը Հաւաքող մարդը և ասաց: «Ճեր վարդապետը չի տալ արդեօք երկդրամեան Հարկը»: Պետրոս պատասխաննեց թէ՛ կրտար: Նրբ տուն մտան, Հարկը»:

Քրիստոս Հարցրեց Պետրոսին: «գու ի՞նչպէս եռ կարծում, աշխարհիս թագաւորներն ումից են Հարկ առնում, իւրեանց որդիկերանցից, թէ օտարներից»: Պետրոս պատասխանեց: «օտարներից»: Աւրեան որդիքն ազատ են, ասաց Քրիստոս: (այսինքն ևս իրեւ Որդի Աստուծոյ, ազատ եմ այդ Հարկից): Բայց որպէս զի ժողովուրդը չգալթակդուի, զնոս ծովը, կարթ ձգիր, և տատջին բռնած ձկան բերանը բաց արա և մի սատակը (86 կոպէկ) կրգունես, այն առ և տուր իմ և քո փոխանակ: Այսպէս ահա Քրիստոս, որ Հարկ չտալու իրաւունք ուներ, տուեց այն՝ մարդկանց օրինակ տալու Համար:

Աղօթք վասն թագաւորի:

Տէր Աստուած մեր,
կեցո զամենաբարեա-
պաշտ թագաւորն և
զ Կայսրն ամենայն
Ռուսաց զԵԼԵՔ-
ԱԾՆԴԻ ԱԼԵՔ-
ԱԾՆԴԻՌԱՎ. ԵԶԱ-
զօրացո՞ զՆա, օգնեա
զաւակաց և զօրաց
Կորա՝ պահելով զա-
մենեսին՝ ի խաղաղու-
թեան:

Թագաւոր յուսա-
ցաւ՝ ՚ի Տէր, յողոր-

Տէր Աստուած մեր,
կեանք տուր ամենա-
բարեպաշտ թագաւոր-
ին և Կայսրին ա-
մենայն Ռուսաց—Ա-
ԼԵՔԱԾՆԴԻ Ա-
ԼԵՔԱԾՆԴԻՌԱՎ. Ե-
ԶԱ: Զօրացրու
Նորան, օգնիր Կորա
զաւակներին և զօր-
քերին և նոցա—ա-
մենքին էլ խաղաղու-
թեան մէջ պահպանիր:
Թագաւորը, որ իւր

մութեսէ բարձրելոյն
նա մի սասանեսցի.
ամէն:

յոյսը զնում է Առ-
տուծոյ վերայ, երբէք
չի զօկուիլ Նորա ո-
ղորմութիւնից. ամէն:

60. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ՄԵԴՅԲԻ ԹԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մատ. Զ. 14—15. Խ. 21—86.

Քրիստոս մեղքի թողութիւն խոստացաւ միտին այն մարդ-
կանց, որոնք իրանք ևս ներում են իւրեանց ընկերոջը: Ար-
պէս ասաց. «Եթէ գուք ներէք մարդկանց իւրեանց մեղքերը,
ձեր Երկնաւոր Հայրն ևս ձեզ կըներէ. իսկ եթէ գուք չէք
ներիլ մարդկանց իւրեանց մեղքերը, ձեր Հայրն ևս չի ներիլ
ձեր մեղքերը»:

Պետքու այս լսելով, հարցըց. «Տէր, եթէ եղբայրո իմ
դէմ մեղանչէ, քանի անդամ պէտք է ներել նրան: Կարելի՞ է
մինչեւ եօթն անգամ ներել»:

Քրիստոս ասաց «ոչ թէ եօթն անգամ միտին, այլ հօ-
թանառուն անգամ եօթն»: Այս խօսքի վերայ երկու պարտա-
պանների առակը պատմեց թէ. «Մէկ թագաւորի մօտ բերին
մի մարդ, որ նրան պարտական էր 10,000 քանչար: Արոշ-
հետեւ պարտապանը չէր կարող այն տհագին պարտքը վճա-
րել, թագաւորը խօսիւ հրամանից, որ ծախսեն նրան իւր ըն-
տանիքով և բոլոր ստացուածքովը: Պարտապանը ոտքն ընկու-
և պաշելով ասաց. «Տէր, համբերիր, ժամանակ տնը ինձ,
բոլոր պարտքը կը հաստուցանեմ: Թագաւորը իսկամաց վերան և
բոլոր պարտքը ներեց: Պարտապանը թագաւորի մօտից գարս
գալով, ընկելնելով մէկին պատահեցաւ, որ իրեն 100 դահե-
կան պարտական էր, բռնեց նրան և պահանջում էր, որ շու-

տով հատուցանէ: Պարտապանը ոտքն ընկաւ, աղաչում էր,
ասելով. «Փոքր ինչ համբերիր, բոլոր պաշտքս կը հատուցա-
նեմ»: Տայց նա նորա աղաչանքին չլսեց, և բանտարկել տուաւ:
Ընկերներն այս պատահմունքը տեսնելով, գնացին պատմեցին
թագաւորին: Այս ժամանակ թագաւորը նրան իւր մօտ կան-
չեց և ասաց. «ո՛վ չար ծառալ, ես քո աղաչանքիդ զիջանե-
լով, բոլոր պարտքդ ներեցի, պէտք չէր, որ դու ևս ընկերոջդ
ներէիր»: Այս ասելով՝ թագաւորը դահիճներին կանչեց և
հրամայեց, որ այն պարտապանին բանտ դնէին, մինչեւ որ
բոլոր պարտքը հատուցանէ: Ալսպէս ևս իմ երկնաւոր Հայրս
կը վարուի ձեզ հետ, եթէ ձեզանից իւրաքանչիւրը սրտանց
չներէ իւր եղքօր մեղքերը»:

**Թա՛ մեղ զպարտիս մեր, որպէս և մեր թո-
ղումք մերոց պարտապանաց:**

61. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՅԹՔ

Մակ. ԺԱ. 1—4. Մատ. Զ. 7—13.

Մէկ անգամ Քրիստոսի աշակերտներն եկան նորա մօտ և
աղաչելով ասացին. «Տէր, սովորեցըն մեզ աղօթք անելը»:
Քրիստոս ասաց. «Հայ այսուհետեւ այսպէս աղօթք արէք. Հայր
մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ ար-
քալութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ ալսօր. և թող մեզ զպար-
տիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ
մի տանիք զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ՚ի չարէ:
Զի քո է արքակութիւն և գօրութիւն և փառք լավիտեանս
ամէն: — Ո՛վ Հայր՝ որ յեկէնչունն ես, սուրբ լինի չո անունը, չո

Համբար շինք երիբո մերայ՝ ինչպես որ լինում է երինքումը։ Աեր ամենու բաւան հայցը պարզ մեղ այսօր։ և լորդ մեղ մեր պարտերը՝ ինչպես որ մենք ևս մեղ պարտ ունեցաներին լազնում էնք։ Փայշանքի մէջ ևս մէջ չգիր ժշկ այլ ամէն շար բանից դրիբ մեղ։ Վասն ուի լագաւուրութեան, ոյժ, փառու, ամենն ևս ուն լու յաւիրեան։ ամէն»։ Այս աղօթքը Տէրունական է ասվում, որովհետեւ մեզ սովորեցրեց Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Որդին։

Այս աղօթքի մէջ Աստուծուն մենք անուանում ենք Հայր մեր Երինաւոր, որովհետեւ նա իւր ողորմութիւնով մեզ՝ քրիստոնեաներիս - իւր որդիք անուանեց, սիրում է մեզ Հօր պէս և պատրաստ է ամէն բանում մեզ օգնելու։ Դէպի Աստուծուն ուղղած ասացին խնդրուածքն է «Սուրբ եղիցի անուն քո»։ ալսինքն թող քո անունը սուրբ լինի։ Այս խօսքերակ մենք խնդրում ենք, որ Աստուծած մեզ, նորա սրդւցոց, օգնէ սրբութեամբ ապրել և բարի գործերով մարդոց մէջ տարածել նորա անուսն փառքը։ Երիրդու խնդրուածք։ «Եկեացէ արքայութիւն քո»։ ալսինքն թող գայ մեզ համար քո արքայութիւնը։ Այս խօսքերով խնդրում ենք Աստուծուց, որ նա օգնէ մեզ՝ լինել ճշմարիտ հպատակներ նորա արքայութեանը ալս երկրիս վերալ, — լինել քրիստոնեաներ ոչ միայն խօսքով, ալլ և գործով։ Երրրորդ խնդրուածք։ «Եղիցին կամք քո, որպէս լերկինս և լերկրի» — Այս խօսքերով խնդրում ենք, որ նա օգնէ մեզ՝ նորա կամքը կատարել ալս երկրիս վերաձայնակես, ինչպէս երկնքում կատարում են նորա սուրբ հրեշտակաները, և լայտնում ենք միանգամայն, որ պատրաստ ենք ընդունիլ նորանից այն ամէնը, ինչ որ նա կը բարեհաճի մեզ տալու։ Զարրրորդ խնդրուածք։ «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուծած տայ մեզ ամենօրուալ համար հարկաւոր եղած տարրուստը։ Հինգերրորդ խնդրուածք։ «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Այստեղ պարտքերը իբրև

մեզք պէտք է ընդունենք, որովհետեւ մենք պարտաւոր ենք Աստուծոյ օրէնքը կատարել, և երբ մեզանչում ենք, ասել է թէ պարտական ենք մեզում Աստուծոյ տուած։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուծած ներէ մեզ մեր մեղքերը։ Այս խնդրուածքի հետ աւելացնում ենք. ներիր մեր մեղքերը, ինչպէս մենք ևս ներում ենք մեր պարտապաններին՝ ալսինքն այն մարդոց, որոնք մեղաւոր են մեր դէմ. ըստ որում Աստուծած խօսացու մեզ ներել մեղքերը այն դէպքում միայն, երբ մենք ևս մեր կողմից կը ներենք մեր դէմ մեղանչող ներին։ Վեցերրորդ խնդրուածք. «Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն»։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուծած հետացնէ մեզանից փորձանքները, ալսինքն կեանքի ալսպիսի դէպքերը, որոնք կարող են մեզ դէպի մեզք տանել, (ինչպէս կարօտութիւն, վտանգ), իսկ եթէ կամենում է փորձանքներով անդրդուելի պահել մեզ բարութեան մէջ, այն ժամանակ խնդրում ենք, որ օգնէ մեզ այն փորձանքներին լաղթելու։ Նևեներրորդ խնդրուածք։ «Այլ փրկեա զմեզ ՚ի չարէն,» Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուծած ազատ պահէ մեզ խորամանկութիւնից, և պաշտպանէ մեզ խորամանկ ստուանալի դէմ, որը միշտ զայթակղեցնում է մեզ դէպի չարը։ Մեր խնդրուածքները վերջացնում ենք Աստուծոյ փառաբանութեամբ, որով յայտնում ենք նաև մեր շնորհակալութիւնը և լուսը այն մասին, թէ Աստուծ կը տայ մեզ մեր խնդրածը։ «Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս»։ ալսինքն Տէր, մենք այս ամենայն բարեհքը նորա համար ենք խնդրում Քեզանից, որ Քեզ է պատկանում արքայութիւնը, ասել է, թէ Քո արքայական իշխանութեան ներքոյ է գտնվում այն ամէնը ինչ որ մենք խնդրում ենք. դու ունիս ոլժ մեր խնդրածը մեզ տալու և Քեզ է պատկանում յաւիտեանական փառքը։

62. ՔՐԻՍՏՈՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԹԵ ԻՆՔՆ Է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԹՅՈՅ
ԿՈՐԻՑ ՀՕՐ

Մատ. ԺԶ, 13—17. Յով. Ժ. 22—39.

Քրիստոս իւր չարչարուելուց վեց ամիս առաջ տօնի օրերը Երուսաղէմ եկաւ: Այնտեղ նորա մօտ եկան Հրէալք և ասացին. «Ճինչև Երբ պիտի մտածմանց մէջ թողնես մեզ, Եթէ Քրիստոսն ես, ասա մեզ Համարձակ: Քրիստոս պատասխանեց նոցա. «այն գործերը, որ ես գործում եմ Հօրս անուխանեց նոցա. «այն գործերը, որ ես գործում եմ Հօրս անուխանեց նոցա վկալ են ինձ Համար: Ես և Հալրս մի ենք»: Նով Հրէալք քարեր առին և կամենում էին քարուել նորան: Բայց Հրէալք քարեր առին և կամենում էին քարուել նորան: Բայց Քրիստոս ասաց. «Հօրս անունով շատ բարի գործեր արի, Քրիստոս ասաց. «Հօրս անունով շատ բարի գործերը եմ Հօրծ գործում ինձ Համար կամենում էք ինձ քարկոծել»: Մենք չենք չենք քարկոծում բարի գործքերիդ Համար, այլ Աստուծուն ՀայՀոյելուդ Համար. որովհետև դու մեզ նման մարդ ես, և քեզ Աստուծ ես անուանում: Այս խօսքի վերայ Քրիստոս պատասխանեց. Եթէ Հօրս գործերը չեմ գործում, ինձ մի Հաւատաք, իսկ եթէ այնպիսի գործեր եմ գործում, որոնք պարզպէս յոլց են տալիս, թէ Հալրը ինձնում է և ես նըսպարզպէս պարզ Հաւատացէք այն գործերին»: Հրէալք սաստիկ կստաղեցան և կրկին քարեր առին նրան քարկոծելու Համար, բայց նա նոցանից հեռացաւ:

63. ՔՐԻՍՏՈՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԹԵ ԻՆՔԸ ՊԻՏԻ ՉԱՐՉԱՐՈՒԻ
ՄԱՐԴԿԱՆՑ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԱՌԵՒ

Յով. Բ. 13—23. Գ. 1—2. 14—15. Մատ. Բ. 17—19. Դուէ. ԺԸ,
31—33.

Քրիստոս Զատկի տօնին Երուսաղէմ դնաց և տաճարը մտնելով, այնտեղ շատ անկարգութիւններ տեսաւ: Տաճարի

կառավարիչները թողել էին որ վաճառականները զոհի անառուններ վաճառեն, առևտուր անեն տաճարի մէջ, որ Աստուծուն աղօթք անելու տեղն էր: Քրիստոս բարկանալով՝ վաճառատկաններին արտաքսեց և ասաց. «վերցրէք այստեղից այն բոլորը և հօրս տունը առուտուրի տուն մի շինէք»: Այն ժամանակ տաճարի կառավարիչներն եկան Քրիստոսի մօտ և բարկանալով հարցրին նրանից. «ի՞նչով ես հստատում, թէ դու իշխանութիւն ունիս այդպէս փարուելու»: Քրիստոս մարդկարէացաւ, որ Հրէից իշխաններն իրեն պիտի նախատեն և սպանեն. ուստի այսպէս պատասխանեց. «այս տաճարը քանդեցէք և ես երեք օրուայ մէջ կըշինեմ»: (այսինքն՝ երր դուք իմ մարմինս կրապանէք, որ նման է Աստուծոյ տաճարին, ես երրորդ օրը յարութիւն կ'առնեմ. այն ժամանակ գուք կըտեսնէք որ ես իրաւունք ունիս այսպէս փարուելու): Փոքը ինչ յետոյ մօտն եկաւ նիկողիմոս Փարիսեցին, որ իմանալ թէ՝ նա ինչպէս պիտի մարդկանց ազատէ. Քրիստոս ասաց. «ի՞նչպէս որ Խոփոչոք անապատի մէջ օձ բարձրացրեց, այնպէս ես պիտի բարձրանալ Մարդոյ Որդին, որպէս զի նորա Հաւատացողները չկորչին, այլ յաւիտենական կեանք ունենան»:

Քրիստոս իւր մահուանից փոքը ինչ առաջ իւր աշակերտներին ուզգակի ասաց. «ահա մենք զնում ենք Երուսաղէմ և Մարգար Որդու վերայ մարգարէների զրուածները պիտի կատարաւին: Մարդոյ Որդին պիտի մատնուի քահանայապետների և գպիրների ձեռքը, որոնք նորան ՚ի մահ պիտի դատավարանեն. Հեթոնաների ձեռքը պիտի մատնեն ՀայՀոյելու, ծեծելու և խաչելու Համար.—իրեն կրսպանեն և նա երրորդ օրը յարութիւն կ'առնաւ»:

ՀՅՈՒՍՑՈՒՄ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ՄԵՌԵՎՆԵՐԻ ՑԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՅԱՒՖՏԻՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՑ

Պատ. ԽԸ, 23—33. Յոդ. Ա, 28—29.

Հըեկց մէջ Սագուկեցի անունով ազանդաւորներ կալին, սրոնք մեռելների յարութեան և յաւիտենական կեանքին չէին հաւատում, ասելով թէ՝ Մովսէս սորա վերալ նշինչ չէ առել. Քրիստոս ասաց նոցա. «Դուք գըրուածքները չհասկանալով մոլորդում էք: Այս կեանքի մէջ կին են առնում և մարդու են գնում, իսկ այն կեանքի մէջ ոչ կին կ'առնուն և ոչ մարդու կ'երթան և ոչ իսկ մեռնել կարող են, այլ կ'ապրին այնպէս, ինչպէս որ երկնքումը ապրում են Աստուծոյ հրեշտակները: Իսկ գոլով մեռելների յարութեանը, միթէ չէք կարդացել Մովսէսի զրքի մէջ, թէ ինչպէս Աստուած խօսեց մորենու միջից և ասաց նորան. «Ես եմ Աբրահամու, Իսահակի և Յակովայ Աստուածը»: Աստուած մեռելների Աստուած չէ, այլ կենդանիների, որովհետեւ նորա մօտ ամէնքը կենդանի են. (արսինքն՝ եթէ Աբրահամ, Իսահակ և Յակովը յաւիտեանս մեռած լինեին, այն ժամանակ Աստուած ինքն իրան նոցա Աստուած չէր անուանիլ):

Մեռելների յարութիւնն այն է, որ ըոլոր մեռած մարդոց հոգիքը կը միանան իւրեանց մարմնի Հետ և անապական ու անմահ կը լինին: Իսկ այն մարդիկ, որոնք մինչև մեռելների յարութիւնը կ'ապրին, նոցա ապականացու մարմինները իսկոյն անապական կը դառնան. մեռելների յարութիւն առնելուն պէս ըոլոր աշխարհն ևս կը փոխուի. նոր երկինք և

նոր երկիր կը լինի: Եւ յարութիւնից յետոյ եղած կեանքը յաւիտենական կեանք կը կոչուի:

Մէսէների յարութեանը և յաւիտենական ինանչի վերայ ունեցած հուսուրը մէնք յայգնում ենք այսպէս:

Հաւատուամք ՚ի յարութիւն մեռելոց և ՚ի կեանսն յաւիտենականս:

65. ՔԲԻՍՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ ԻՒԹ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼԱՑՈՒՆ ԵՒ
ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱԱՍԽԵ ՎԱՐԱՑ

Պատ. ԽԸ, 31—46.

Մէկ անգամ Քրիստոփ աշակերտները հարցրեցին նրանից. «Վարդապետ, ասա մեզ, երբ պիտի լինի քո գալուստը և աշխարհին վերջը»: Քրիստոս սրտատիւննեց նոցա. «Են օրը և ժամը ոչ ոք չգիտէ և ոչ իսկ հրեշտակները, միայն Հայրո դիտէ: Զգոլու կացէք, որ ձեր սրտերը չծանրանան որկրտամոլութեամք, արքեցութեամք և աշխարհալին հոգսներով, և նալեցէք, որ այն օրը յանկարծ չհասնի ձեր վերայ: Այն ժամանակ երկնքի արքայութիւնը լինմանի տասն կուսանաց, որ յապտերներով փեսացին և հարոին ընդ առաջ եկան: Նոցանից հինգը իմաստուն էին, իսկ հինգը լիմար: Ցիմարները հետաները ձէժժ չտուան: Փեսալի գալստեանն սպասելով, կուտանքը ննջեցին: Կէս գիշերին յանկարծ ձայն լսուեցաւ. «ահա փեսան գալիս է, եկէք նորա առաջը»: Կուտանքը վերկացան և իւրեանց լսապտերները պատրաստեցին: Այն ժամանակ լիմար կուտանքն առացին իմաստուններին. «ձեր իւղիցը փոքը ինչ մեզ տուէք, որովհետեւ մեր լապտերները հանգչելու վրայ

Քիստոս իւր երկրորդ գալուստը և գատաստանը ալսովէն կարագրեց. «Երբոր Մարգոյ Որդին իւր փառքով և Հրեշտակներով կը գայ, փառքի ամֆոսի վերայ կը նստի, և նորա առաջեւ կը ժողովուին բոլոր ազգերը, իրարից կը բաժանէ նըրանց ալնպէս, ինչպէս Հովհիւր ոչխարներին ալծերից է բաժանում. ոչխարներին իւր աշ կողմը կը կանգնայնէ, իսկ ածերին ձախ կողմը: Եւ թագաւորը կ'ասէ իւր աջակողմը եղողներին. «Եկէք, իմ հօրիցս օրհնուածներ, և ժառանգեցք աշխարհիս սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը: Որովհետեւ ես քաղցած և ծարաւ էի, և դուք ինձ կերակրեցիք և ջուր տուիք: Օտար էի և դուք ընդունեցիք ինձ, մերկ էի և դուք հաղցընիք ինձ, հիւանդ և բանտի մէջ էի և ինձ այցելութեան եկաք»: Արդարները ոլիսի ասեն նուան. — «Տէ՛ր, է՛րք տեսանք քեզ քաղցած և կերակրեցինք, կամ ծարաւի և ջուր տուինք: Ե՞րբ տեսանք քեզ օտար և ընդունեցինք, կամ մերկ և հաղցընք: Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ մանակ թագաւորը ալիսի ասէ, «Հշմարիտն եմ ասում ձեզ որովհետեւ իմ փոքր եղբարիցս մէկին արիք, ինձ արած

եղագ»: Յետոյ ձախակողմեաններին կ'ասէ. «Հեռացէք ինձանից, անիծեալներ, և գնացէք յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանալի և նորա հետեւողների համար։ Որովհետեւ քաղցած էի և ինձ չկերակրեցիք, ծարաւ էի՝ ջուր շտուիք. օտար էի՝ ինձ ըընդունեցիք. մերկ էի՝ չհագցրիք, հիւանդ և բանտարկեալ էի, դուք ինձ այցելութեան չեկագ»։ Նոքա սկիտի պատասխաննեն, լժէ, — Տէք, Երբ տեսանք քեզ քաղցած կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ և կամ ըանտարկեալ, և չծառալեցինք քեզ։ — Աւ Քրիստոս պիտի պատասխանէ նոցա. «Որովհետեւ իմ փոքր եղբայրներիցո մէկին չարիք, ինձ ևս չարած եղագ»։ Նոքա կ'երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները յաւիտենական կեանքը։

Այնտեղ, ուր կը հաւաքուին արգարների հոգիքը, գրախտ և երկնքի արքալութիւն կը կոչուի. իսկ մեղաւորների՝ չարշարատքի տեղը՝ դժուք:

Մեր Հաւատը այն մտաին, թէ Քրիստոս վերստին գալու է փառքով, գատելու է բողոք մարդիկներին և հաստատելու է իւր յաւիտենական թագաւորութիւնը, մենք յախտնում ենք ալսպիս:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր
՚ի դատել զինողանիս և զմեռեալս, որոյ թա-
գաւորութեանն ոչ պոյ փախծան:

66. ՔՐԻՍՏՈՒ ՔԱՐՁՈՒԹԵՒՆԵ ՀԱՅԱՆ ՄՐԲՈՑ ՎԵՐԱԾ

Sup. Dr.

Քրիստոս իւր չարչարանքից առաջ աշակերտների հետ խօսելով իւր մահուան մասին, խոստացաւ նոյն ուղարկել իւր


աեղը միտթարիչ Հոգին սուրբ և այս խօսքերսվ հրաժարական ողջոյն տուռու նոցա. «Նո ձեզ որբ չեմ թողնիլ, այլ կ'առ զաշեմ իմ Հօրո, որ ուրիշ միտթարիչ առյ ձեզ, որ յուրիամ ձեզ հետ լինի, այն է՝ Հոգին ճշմարտութեան, որ Հօրիցն է բղխում: Նո ձեզ կըսովորեցնէ ամէն բոն, և ձեր միտթը կըձգէ այն ամէն բաները, ինչ որ խօսել եմ ձեզ հետ: Ուրիշ շատ բաներ ունիմ ձեզ հետ խօսելու, բայց արժու գուք չէք կարող բոլոր ասածներս հասկանալ, երբոր կրզալ Հոգին ճշմարտութեան, նո ձեզ կ'ուսուցանէ ամենալին ճշմարտութիւն»: Քրիստոս նաև յարոնեց, թէ մարդ նոր կեանք կըստանոյ միայն Հոգւոյն Սրբոյ օգնութեամբ՝ ասելով, թէ՝ «ո՞վ որ չի ճնուիլ ջրից և Հոգուց, չէ կարող մանել երկնքի որքարութիւնը»:

67. ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՉԱՄԱՐԿԱՆԻՐՊՈՒԹԻՒՆԻ.

Մատ. Ֆէ, 1—8. Ղոկ. Թ. 28—36.

Քրիստոսի աշակերտները գժուարութեամբ էին հառատում, թէ իրենց վարդապետը, Աստուծոյ Յրդին, պիտի չարշարուի: Այս պատճառով Քրիստոս կամենալով ուելի հաստատ պահել նոցա հաւատքը, իւր աստուծալին փառքը ցոյց տուաւ նոցա: Զարչարանքի մտին աշակերտների հետ խօսելոց փոքրինչ ժամանակ յետոյ, իւր աշակերտներից Պետրոսին, Յակովին և Յովհաննէսին տուաւ թափօր լետուր բարձրացաւ և ոկաւ ազօթք անել: Եւ ահա յանկարծ աշակերտները տեսան իւրեանց վարդապետը շըջապատուած է գերբնական լուսով, հանդերձը սպիտակացել էր ձիւնի նման և երեսը լուսաւորուել էր արեգակի նման: Մովսէս և Նղիան հետը խօսում էին նորա Յրուսաղէմի մէջ կըելու չարչարանքի և մտաւան վերայ: Պետրոս հիանալով ազագակեց: «Արդարեաւ,

լաւ է որ այստեղ մնանք: Այստեղ երեք վրան կը շինենք. մէկը քեզ, մէկը Մովսէսի և մէկը Եղիայի Համար»: Այն ժամանակ մի լուսաւոր ամալ իջաւ աշակերտների վերայ և նոքա երկնքից մի ձայն լսեցին. «Դա է իմ սիրելի որդին, որին հաւանեցայ, Պորան լսեցէք»: Աշակերտները սարսափեցան և




երեսի վրայ գետին ընկան: Քրիստոս կանգնացրեց նրանց և ասաց. «ոտքի կանգնեցէք, մի վախենաք»: Նոքա իւրեանց գլուխը վերցրին և տեսան որ Քրիստոս կանգնած էր նոցա առաջ իւր սովորական կերպարանքով:

68. ՔՐԻՍՏՈՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՊԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յոկ. չԱ. 17—57.

Հպարտ փարիսեցիք Քրիստոսի քարոզութեանը չէին հաւատում. այս պատճառով ատում էին նորան և արհամարհելով մեղաւորների բարեկամ էին անուանում և ատում էին թէ՝ նա Աստուծուց ուղարկուած չէ, որովհետեւ շաբաթ օրը



սուրբ չէ պահում: Խոկ նորա հրաշալի գործերի համար առաւմ էին՝ իբր թէ սատանալի գորութեամբ է անում. բայց ժողովուրդը նոյտ չարախոսութիւններին չլսելով՝ բաղմութեամբ Քրիստոսին հետեւում էր: Այն ժամանակ փարիսեցիք խորհուրդ արին, որ Քրիստոսին սպանեն:


Զատկի տօնից քանի մի օր առաջ՝ Քրիստոս Երուսաղեմի մօտ գտնուած Տեթանիա գիւղը գնաց, ուր բնակում էր նորա բարեկամ Ղազարոսը իւր Մարթա և Մարիամ երկու քոյլերի հետ: Ղազարոսը մեռած և չորս օրից առաջ թագուած էր, երբ Քրիստոս Տեթանիա գիւղը եկաւ: Քրիստոս նորա գերեզմանը գնաց, հրամալեց, որ քարը վերցնեն և բարձր ձայնով գոչեց. «Ղազարէ, արի, եկ արտաքս»: Մեռեալը իսկոյն դուրս եկաւ գերեզմանից: Այս հրաշքի վերալ ժողովուրդը զարմացաւ և նոյտանից շատերը Քրիստոսին հաւատացին: Երբոք Հրէից ծերերը նրաւազէմի մէջ լսեցին այս բանս, իսկոյն հաւաքուեցան, և սկսան մտածել թէ՝ ինչ անեն Քրիստոսին, և ատենի մէջ ասում էին. Այս մարդը շատ հրաշքներ է գործում, եթէ թողնենք, ամէնքը կըհաւատան նորան. Հոռվամայեցիք ևս կըդան և մեզ կըջնջեն: Դատարանի նախագահն էր Կալիխափայ քահանայալետը, որ խորհուրդ տուաւ թէ՝ «աւելի՛ լաւ է, որ մէկ մարդ մեռնի ժողովրդեան համար, քան թէ ամբողջ ազգը կորչի»: Նորա այս խորհրդին լսեցին և վճռեցին սպանել Քրիստոսին: Խոկոյն հրաման հանեցին թէ՝ «ով որ իմանայ Քրիստոսի ուր լինելը, թնդ մեզ յախնէ, որ սպանենք նրան»: Քրիստոս հեռաւոր անապատը քաշուեցաւ:

~~~~~  
69. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՅԱՅ ԵՐՈՒՍԱԼԵՄ

Մատ. ԻԱ. 1—11.

Զատկից վեց օր առաջ՝ Քրիստոս Տեթանիա եկաւ և այնտեղից գէպի Երուսաղեմ ճանապարհ ընկաւ: Խոր յետեկց գնում էր ժողովրդեան խուռան բազմութիւն: Քրիստոս երբ Զիթենեաց լեռու հասաւ, հրամալեց աշակերտներին, որ մերձակալ գիւղից մի աւանակ բերեն: Աշակերտներն աւանակին

ծածկեցին իւրնանց հազուսով և Քրիստոսին նորա վերայ նստեցրին: Նատերը հաւատացին, որ Քրիստոս Դաւթի ցեղից խոստացեալ փրկիչն է և սկսան պատուել նրան: Ոմանք արմաւենու ճիւղեր էին կտրում և ճանապարհի վերալ ձգում, ոմանք ևս իւրեանց հազուսաներն ոււանակի ոտքերի տակն էին տարածում և այս փառարանական երգը երգում: «Ովսաննա (փրկութիւն) Որդւոյ Դաւթի. Օրհնեալ եկեալ յանուն



Տեառն. Ովսաննա՝ ի բարձունու: Քաղաք մտնելու ժամանակ ժողովրդեան նոր բազմութիւն ևս Քրիստոսի ոռուջ դուրս եկաւ. և ով որ նորան չէր տեսած, հարցնում էր թէ՝ ով է սա: Ժողովուրդը Ասպարոսի հրաշոլի յարութիւնը պատճելով, պատասխանում էր. «Ան է Գալիիալի Նազարէթ քաղաքից եկած մարդարէն Յիսուս»: Փարիսեցիք կտմենում էին նրան քոնել, բայց ժողովրդից վախենում էին:

70. ՅՈՒԹԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԵՒՆԸ

Մատ. ԻԶ. 3—5, 16. Ալ. 3—5.

Քրիստոսի թշնամիները չկարողացան նրան բռնել ոչ երկուշարժի և ոչ երեքշարժի օրերը, որպէսկետե նա միշտ շրջապատուած էր լինում ժողովրդեան բազմութեամբ. այս պատճառով փարիսեցիք և դպիրները վճռեցին, որ տօնից լետոյ բռնեն նրան. Երբոր ժողովուրդը Երաւաղէմից Հեռանում էր, Քրիստոսի աշակերտներից մէկը՝ Յուդա Իսկարիովտացի, Հրէից իշխանների մօտ գնաց, և խոստացաւ, որ երեսուն արծաթով (25 մանէթ 50 կոպէկ) նոցա ձեռքը կըմտանէ իւր վարդապետին: Յուդան՝ արծաթուիրութեամբ կուրացած, այն ամօթալի գործը յանձն առաւ, բայց չհարստացաւ: Երբ Քրիստոսին ՚ի մահ դատապարտեցին, խղճմտանքն սկսաւ տանջել նրան, որ այն արդար մարդուն մատնեց: Նա գնաց քահանայապետների մօտ, ձգեց արծաթը նոցա առաջ, և յուստահատութիւնից ինքն իրան կախեց:


71. ՅԻՍՈՒՄԻ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԳԻԾԵՐԸ

Յով. ԺՂ. 21—30. Մատ. ԻԶ. 17—30. Մար. ԺՂ. 12—26.

Հինգշարժի երեկոյին Քրիստոս տասներկու աշակերտների հետ Երաւաղէմ գնաց, ուր մէկ տան մէջ նորա համար մի վերնատուն էր պատրաստուած Զատկի տօնը կատարելու:

Քրիստոս այն վերնատունը մտաւ, աշակերտների ոտքերը լոււաց, լետոյ նոցա հետ սեղան նստաւ զատկական գառը ուտելու, որով աշակերտների հետ խը վերջին ընթրիքը արաւ: Խօսակցութեան ժամանակ Քրիստոս առաց նոցա. ճշմարիտն եմ ասում ձեզ, որ տասներկուսիցդ մէկը, որ իւր պատառը իմ

ամանիս մէջ թաժախում է, ինձ պիտի մատնէ»։ Աշակերտները սարսափած մէկը միւսի յետևից ասում էին. «միթէ ես եմ»։ — «Այն, գու ես», ասաց Քրիստոս Յուդային, բայց այնպէս կամաց, որ ոչ ոք չլսեց. յետոյ մի պատառ ամանի մէջ թաժախելով նորան տուաւ. Այն պատառի հետ սատանան մտաւ. Յուդայի սրտի մէջ, որով նորա խղճանքը նեղվում էր և չէր թողնում, որ սուրբ աշակերտների հետ մնալ. Քրիստոս



ասաց նրան. «Ինչ անելու ես, գնա՞ շուտով արմ»։ Յուդան խկոյն գուրս եկաւ, իմացաւ թէ Քրիստոս ուր պիտի անցկացնէր այն գիշերը, և գնաց խոստացեալ արծաթն ստանալու. Յուդայի գուրս գոլու վերալ աշակերտները ուշադրութիւն չդարձրին. Որովհետեւ Յուդան գանձապետ և ծախսար էր, ուստի կարծեցին թէ կարելի է Քրիստոս Հրամայել է նորան մի բան գնել կամ ողորմութիւն բաժանել. Զատկի գառն ուտելուց յետոյ՝ Քրիստոս բաղարջ հայն առաւ, օրհ-

նեց, կտրնտեց և աշակերտներին բաժանելով ասաց. «առէք, կերէք, այս է իմ մարմինս, որ ձեր և մարդոց մեղքի թողովթեան համար բաշխվում է»։ Այսպէս աշակերտները հացի տեսակով իւրեանց ուսուցչի և Տիրոջ մարմինը ճաշակեցին. Յետոյ բաժան առաւ և աշակերտներին տալով, ասաց. «Խմեցէք այստեղից ամէնքդ, այս է իմ նոր ուխտի արիւնը, որ ձեր և շատերի մեղքի համար է թափվում»։ Աշակերտները զինու տեսակով Քրիստոսի արիւնը ճաշակեցին. Յետոյ ասաց. «Այս կատարեցէք իմ լիշտառկիս համար»։ Արագէս Քրիստոս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը. Այնուհետեւ իւր վերջին ողջոյնը տուաւ աշակերտներին և լիշեցրեց նոցա իւր գլխաւոր պատուէրը, տաելով. «սիրեցէք միմեանց այնպէս, ինչպէս ես ձեզ սիրեցի. Եթէ գուք միմեանց սիրէք, ամէնքը կ'իմանան, թէ գուք իմ աշակերտներս էք»։ Ընթրիքը վերջանալուց յետոյ՝ Զիթենեաց լերան Գեթսեմանի պարտէզը զնաց:

Աւագ հինգշաբթի օրը, երեկոյեան ժամին, Հայաստանեաց եկեղեցին կատարում է ոտնալուալի կարգը. Նպիսկոպոսը կամ պատուաւոր քահանաներից մէկը զգեստաւորուելով վերցնում է զենջակը (փէշամալ) և ծունկ իջեալ (չոքած) լուանում է ամենքի ոտները՝ մեծերից սկսեալ մինչեւ փոքրերը. Բայց երբոր զգեստաւորուած եպիսկոպոսը կամ քահանան հանդիսով գուրս է գալիս խորանից, այդ միջոցին դպիրները երգում են հետեւեալ շարականը.

**Այսօր կանգնեցաւ  
աւագան մըկրտու-  
թեան ՚ի թողովթիւն  
մեղաց մերոց:**

**Այսօր Տէրն մեր**

**Այսօր կանգնեցաւ  
(հաստատուեցաւ) լու-  
ացման աւագան մեր  
մեղքերի թողովթեան  
համար:**

լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս՝ ասելով.

Ո՞ի ոմն ՚ի ձէնջ՝ եղքարք, մատնելոց է զիս ՚ի մահ և որոշի յաշակերտացդ:

Օյն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս հարցանել թէ ով իցէ:

Իանն, զօր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զաշակերտն և խռովեցան ամենեքեան:—

Այսօր մեր Տէրը լուանումէր աշակերտների ուները և նոյնը պատուիրելով՝ ասում էր.

«Եղքարք, ձեզանից մէկը մատնելու է ինձ ՚ի մահ և նա մերժվում է աշակերտներիցրդ:»


Երբ այդ լոեց Պետրոսը, աչքով արաւ Յովհաննէսին, որ հարցնէ, թէ ո՞վ է:  
Յիսուսի ասած խօսքը տրտմեցրեց նորա աշակերտներին և նոքա ամենը շփոթուեցան:

72. ՔՐԻՍՏՈՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՀԱՆԱՑԱՊԵՏՆԵՐԻ ԱՏԵԱՆՔ  
ԳԱՏԵԼՈՒ

Մատ. իջ, 47—88. նէ, 1. Դոկ. իթ, 66. իգ, 1.

Յուգա Խսկարիովտացին գիշերը քահանալապետների ծառաներին Գեթսեմանի պարտէզը տարաւ. և այնտեղ Քրիստո-

սին մօտենալով, համբուրեց և ասաց. «Ո՞ղջ լէր, Վարդապետն. որով ցոյց տուաւ ծառաներին թէ ում պէտք է բռնեն: Երբոր ծառաները սկսան Քրիստոսին կապել, Պետրոսը կամեցաւ իւր վարդապետին պաշտպանել, հանեց սուրբ և կտրեց քահանալապետի ծառալի ականջը: Յիսուս ասաց նրան. «Թուրդ պատենի մէջ գիր, ո՞վ որ թուր վերցնէ, թրով կըմեռնի: Միթէ կարծում ես, թէ ես չեմ կարող Հօրիցս խնդրել, որ



տասներկու գնդից աւելի հրեշտակ ու զարկէ»: Յետով մօտեցաւ Մաղքոսին և առողջացրեց նորա ականջը: Ծառաները կապեցին Քրիստոսին և Կայիփափալ քահանալապետի տունը տարան: Այն տեղ ժողով կազմեցին Հրէից ծերերը, որ ըստ տեղուն և ըստ ժամանակին հակառակ էր օրինաց. (որովհետև ժողովը պիտի կազմուէր ցերեկ ժամանակ, տաճարի մէջ):

Քրիստոսի գէմ դուրս եկան շատ սուտ վկաներ, բայց նոքա չկարողացան մի այնպիսի բան ասել, որով կարելի լինէր Քրիստոսին՝ ի մահ դատապարտել։ Այն ժամանակ Կայիշափան Հարցրեց Նրան—թէ։ «Երգմնեցնում եմ քեզ կենդանի Աստուծոյ անուամբ, ասա՞ մեզ, դու ևս Աստուծոյ Որդին՝ Քրիստոսը»։ Քրիստոս պատասխանեց. «Այս, ես եմ, և ասում եմ ձեզ թէ՝ այսուհետև պիտի տեսնէք Մարդու Որդուն նստած Հօր աջ կողմը, որ պիտի զայ երկնքի ամպերի վերալից։ Կայիշափան պատառեց իւր հանդերձը և աղաղակեց. «այս ևս վկաներ ի՞նչ հարկաւոր են մեզ. արդէն լսեցինք սորա հայ-հոյութիւնը. ի՞նչ կ'ասէք»։ Ծերերի ժողովը, լի դժոխալին չարութեամբ, աղաղակեց՝ «մահու արժանի է»։ Յետոյ Կայիշափալից հեռացան, իսկ Քրիստոս դուրսը մնաց քահանայապետների ծառաների մէջ։ Ծառաներն սկսոն նրան ծաղրել, յետոյ այն ծաղրը գանահարութեան փոխեցին։ Ոմանք ապտակ էին խփում Քրիստոսին և երեսին թքում. շատերը ևս փակում էին նորա աչքերը և երեսին խփելով ասում էին. «իմացիր, Քրիստոս մարդարէ, ովք էր քեզ խփողը»։ Իսկ Քրիստոս համբերութեամբ լոռում էր։

Որ և իցէ յանցաւորին վերջնական վճիռը տալու համար, ըստ օրինի, ծերերի ժողովը երեք օրից յետոյ երկրորդ անգամ պիտի հաւաքուէր, բայց այն անգամ երեք չորս ժամ միայն սպասեցին, և առաւօտը նորից Կայիշափալի մօտ հաւաքուեցան և Քրիստոսին ևս այնտեղ բերին։ Կայիշափան Հարցրեց Նրանից. «Դու ևս Աստուծոյ Որդին»։ Քրիստոս պատասխանեց. — Այս. Այն ժամանակ Նրան մահուան արժանի դատապարտեցին, այն պատճառով միայն, որ նա ինքն իրան անուանեց Աստուծոյ Որդի։

## 73. ՔՐԻՍՏՈՍ ՊՈՆՏԱՑԻ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Յով. ԺԲ, 28—40. ԺԹ, 1—16. Մատ. Խէ, 1—13.

Քրիստոսի ժամանակ Հրէալք Հոռվմայեցւոց իշխանութեան տակն էին, և կառավարվում էին Պոնտացի Պիղատոսի ձեռքով, որ Հրէից գատաւոր էր համարվում. այս պատճառով ծերերը չեին կարող Քրիստոսին մեռցնել, այլ պարտական էին Պիղատոսի մօտ տանել նորան. Ուրբաթ օրը վաղ առաւօտեան նոքա Քրիստոսին գատաւորի մօտ տարան։ Երբ գատաւորը հարցրեց թէ՝ ի՞նչու էք գատապարտում այս մարդուն, նոքա պատասխանեցին. «Սա մոլորեցնում է ժողովրդին և արգելում է կայսեր հարկ տալ, և ինքն իրեն թագաւոր է անուանում»։ Պիղատոս առանձին հարց ու փորձ անելով Քրիստոսին, դուրս եկաւ և ասաց. «Ես այս մարդու վերալ յանցանք չեմ դժոնում»։ Ծերերը աւելի չարախօսիլ սկսան Քրիստոսի վերալ։ Պիղատոսը չգիտէր՝ թէ ի՞նչ անէ։ Հրէից մէջ սովորութիւն կար, որ Զատկի տօնին ազատում էին որ և իցէ մահապարտի։ Այս պատճառով Պիղատոս հարցրեց ժողովրդեան. «Ո՞ւմն էք կամենում, որ արձակեմ, Բարաբրալին», թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։ Բարաբրան առազակ էր։ Ժողովուրդը ծերերից դրդուած լինելով, աղաղակեց. «Արձակիր Բարաբրալին»։ Պիղատոսը հարցրեց. «Հապա ի՞նչ անեմ տիս մարդուն, որին դուք Հրէից թագաւոր էք անուանում»։ Ժողովրդեան միջից աղաղակեցին. «Իսաշ Հանիր գորան»։ Պիղատոսն ասաց. «Ես մահուան արժանի ոչինչ չեմ դանում սորանում, ծեծելով կը խրատեմ և կ'արձակեմ»։ Պիղատոսի հրամանով Քրիստոսին գանեցին։ Հոռվմայեցւոց զինուորները՝ Քրիստոսին մտրակով ծեծելուց յետոյ, սկսան ծաղրել նրան։ Ծիրանի պատճուածանը ձգեցին վերան, (կար-

մրագոյն կարճ հանգերձ), գլուխը փշեալ պատկ դրին, և թագաւորական գաւազանի տեղ ձեռքը մի եղէզ առուին. յետոյ ծունը դնելով նորա առաջեւ ասում էին. «ո՞ղջ լեր, արքալդ Հրէից»: Երեսին թքում էին և եղէզնեալ գաւազանովը զլիին խփում: Պիղատոսը այս կերպով Քրիստոսին ժողովրդի առաջ դուրս բերաւ, կարծելով թէ՛ Հրէալք կըխզճան նորա վերայ, որ անմեղ տեղը չարչարպում էր. բայց քարատիրտ ժողովուրդը կրկին աղաղակեց. «Խաչիր դորան: Խոկ եթէ թող կըտաս, կայսեր բարեկամ չես:» Պիղատոսը տեսնելով, որ ոչ մէկ բան օգուտ չունի և ժողովրդեան մէջ խովովութիւնը առաւել սաստկանում է, ջուր առաւ և ձեռքերը լուանալով, ասաց. «Ես ալդ արդար մարդու արիւնից քաւեալ եմ»: Ժողովուրդն աղաղակեց. «դորա արիւնը մեղ և մեր որդւոց վերայ թող լինի»: Այս ժամանակ Պիղատոս զիջաւ Հրէից պահանջման, և դատապարտելով Քրիստոսին, նոյց ձեռքը տուաւ, որ խաչեն:


## 74. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ՎԵՐԱՅ ԶԱՐՉԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀԻ

Մատ. Իե, 31—54. Ղոկ. 19, 26—48. Յով. Ճ. 16—30.

Զինուորները Քրիստոսին կառավելու՝ ալսինքն՝ գըլ-խատման տեղը տարան, որ Եբրայեցերէն Գողգոթալ էր աս-վում. այնտեղ խաչեցին նրան և նորա աջակողմը և ձախա-կողմը խաչեցին երկու աւազակներ: Պլսի վերեւ խաչի վերայ մի տախտակ դրին, որի վերայ դրուած էր. «Յիսուս Նազով-րեցի թագաւոր Հրէից»: Երբոր Քրիստոսին խաչում էին, նա աղօթք էր անում իւր չարչարողների համար, ասելով. «Հայր, ների՛ր սոցա, որովհետեւ չգիտեն թէ՛ ինչ են անում:»

Քրիստոսի թշնամիները խաչի վերայ անգամ հանգիստ չէին թողնում նրան, այլ ծաղրածութեամբ ասում էին. «Եթէ

Աստուծոյ Որդի ես դու, փրկի՛ր քեզ և խաչեցդ իջի՛ր, որ քեզ հաւատանք»: Զինուորներն ևս հետեւում էին նոցա: Մինչեւ անգամ խաչուած աւազակներից մէկն ևս ծաղրելով ասաց Քրիստոսին. «Եթէ դու Քրիստոսն ես, քեզ և մեզ ազատի՛ր»: Բայց միւս աւազակը պատասխանեց նրան. Աստուծուց չես



վախենում, չէ որ դու ևս նոյն պատժի մէջ ես: Մենք լի-րաւի գատաւարտուած ենք, բայց Սա ոչինչ չարութիւն չէ արել»: Այս ասելով, աղօթքով գարձաւ դէպի Քրիստոս և ասաց. «Տէր, լիշիր ինձ, երբոր գաս քո արքալութեամբ!»,—

«Ճշմարիտն եմ ասում քեզ, այսօր ինձ հետ պիտի լինիս գը-  
րախտի մէջ.» պատասխանեց Քրիստոսը:

Յերեկուան վեցերորդ (մեր հաշուով երկոտասաներորդ) ժամին երկրիս երեսը խաւար պատեց, այնպէս որ աստղեր երևեցան: Ծաղրածութիւնները դադարեցան, և շատերը վա-  
խենալով, խաչելութեան տեղից հեռացան: Քրիստոսի խաչի  
մօտ մնացին Տիրամալը, Յովհաննէս առաքեալը և քանի մի  
Քալիլիացի կանայք:

Քրիստոս տեսաւ իւր մօրը և Յովհաննէսի վերայ ցոյց  
տալով ասաց. «ահա քո որդին». յետոյ նայեց իւր սիրելի  
աշակերտին և ասաց նրան. «ահա քո մալըր»: Ինն ժամի մօտ  
(մեր հաշուով երրորդ ժամին զկնի ճաշու) Քրիստոս ազա-  
ղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս»:  
Քանի մի ըոսէից յետոյ ասաց. «Ճարաւէ եմ»: Զինուորներից  
մէկը սպունդը թաթախեց քացախի մէջ, եղէգնի ծալրն անց-  
կացրեց և Նորա բերանին մօտեցրեց: Քրիստոս քացախը ըն-  
դունելով ասաց. «ամենայն ինչ կատարեալ է. Հայր, իմ հո-  
գիս Քո ձեռքդ եմ աւանդում»: Յետոյ զլուխը խոնարհեցրեց  
և հոգին աւանդեց: Այսպէս ահա փրկիչը իւր անձը զոհելով  
մարդկանց մեղքի համար, մեզ հաշտեցրեց Աստուծոյ հետ:  
Այն ժամանակ արեգակը խաւարեցաւ, վարագովը, որով Սըր-  
բութիւն Սըրոցը բաժանվում էր տաճարի միւս մասնից, եր-  
կու կտոր պատառուեցաւ, գետինը այնպէս շարժուեցաւ, որ  
քարերը պատառուեցան, և շատ մեռեալներ լարութիւն ա-  
ռան և գերեզմաններից դուրս եկան: Այն հարիւրապետը, որ  
խաչի մօտ կանգնած էր, ասաց. «իբրաւի այս մարդը Աստու-  
ծոյ Որդի և արդար էր»: Ֆողովուրդը զարհութելով և կուրծքը  
բաղնելով՝ խաչի մօտից հեռացաւ:

Խաչի քո, Քրիստոս, Երկիրապատնեմք, և  
զսուրը խաչելութիւնդ քո մեծացուցանեմք և  
զսուրը թաղումդ քո փառաւորեմք: Եկայք,  
Հաւատացեալք, Երկրապագեացուք Քրիստոսի  
Կոտուծոյ մերոյ. վասն զի եկն 'ի ձեռն խաչին  
իւրոյ շնորհեաց պարզես աշխարի: Ուրե Կո-  
տուած, սուրը և հզօր, սուրը և անմահ, որ  
խաչեցար վասն մեր, ողորմեան մեզ:—

75. ԹԱՂՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յով. ԺԹ. 31—42. Մատ. Իէ. 57—61. Դոկ. ԲԳ. 50—56.

Որովհետեւ Զատկի տօնի Նաւակատիքը Ռւրբաթ օրն էր,  
այս պատճառով հրէից ծերերը չկամեցան խաչուածներին  
խաչի վերայ թողնել. ուստի խնդրեցին Պիղատոսից, որ հրա-  
ման տալ՝ նոյա սրունքները կոտրան, որ շուտով մեռնին:  
Պիղատոսի հրամանով զինուորները Գողգոթա եկան և կոտր-  
տեցին աւագակների սրունքները, բայց երբ եկան Քրիստոսի  
մօտ, տեսան, որ նա արդէն վախճանուած էր, այս պատճա-  
ռով նորա սրունքները չկոտրանցին: Միայն նոցանից մինը  
տէզով նորա կողը վիրաւորեց, և վէրքից արիւն և ջուր վա-  
գեց: Նոյն զիշերը Պիղատոսի մօտ գնաց ծերակուտի անդամ-  
ներից մէկը, Յովսէփ Արեմաթացին, և խնդրեց, որ Հրաման  
տալ իրեն՝ Քրիստոսի մարմինը խաչից իջեցնել և ժագել:  
Պիղատոս կատարեց նորա խնդիրը: Այն ժամանակ Յովսէփ  
թաղման պատառակալը բերաւ, և Քրիստոսի ծածուկ աշա-  
կերտ Նիկոդիմոսն ևս խունկ և հալուէ բերաւ. Քրիստոսի

մարմինը խաչից իջուցին, անուշահոտ իւղերով օծեցին, պաստակալով՝ պատեցին և Գողգոթալի մօտ եղած Յովսէփի պարտէզի մէջ մի նոր փորուած ալրի մէջ թաղեցին, որը Յովսէփ շինել էր իւր Համար, իսկ ալրի դուռը մի մեծ և ծանր քարով ծածկեցին։ Այս բանս տեսան քանի մի Գոլիլիացի կանաչը, որոնք նկատելով, թէ շտապելու պատճառով թաղման բոլոր ծէսերը չկատարուեցան, քաղաք գնացին, և անուշահոտ խուները և իւղեր պատրաստեցին, որ երթան Քրիստոսի մարմինն օծեն։

Մէր հուտառը առ այն, Աէ Քրիստոս Խչ Թշոց համար շնուրուեցաւ, նուշուեցաւ և լուսաւեցաւ, Ենիւ յոյտում Ենիւ այսուհան։

## Չարչարեալ, Խաչեալ, թաղեալ:

76. Քրիստոսի ԳՅՈՂ.Ք ԻԶՆԵՐ.

Մատ. Իէ. 62—66.

Շաբաթ առաւօտեան Քրիստոսի թշնամիները, այսինքն՝ քահանաւապետները, Պիղատոսի մօտ գնացին և ասացին «այն մոլորեցուցիչը ասում էր, թէ երեք օրից յետով յալութիւն պիտի առնու, ուստի Հրամայիլը գերեզմանը պահպատնել, որ աշակերտները չդողմանան մարմինը և ժողովրդեան չասեն թէ՝ նա յարութիւն առաւ։»

Պիղատոս Հրաման արաւ նոցա և նոքա գերեզմանի վերայ պահպատներ գրին, գերեզմանի կափարիչ մեծ քարն ևս կնքեցին։

Երբ Քրիստոսի մարմինը գերեզմանի մէջ էր, նորա մարդկան հոգին, որ Աստուածութեան հետ միաւորուած էր միշտ,

այն տեղը գնաց, ուր էին ըոլոր մեռեալ մարդոց հոգիքը։ Այդ տեղը գժոխում է կոչվում, որովհետեւ մեղաւոր մարդոց հոգիները Աստուածուց հեռացած լինելով՝ այն տեղ էին գտնում։ Գժոխքի մէջ շատ հոգիներ ևս կային, որ ապագալ Փրկչին հաւատալով՝ անհամբեր սրտով նորա գալստեանը սպասում էին, և Փրկչի գալստեան յուսով միսիթարվում էին։ Քրիստոս գժոխքը իջնելով, երբ քարոզեց իւր գալուստը, այն արդարների հոգիները իսկոյն հաւատացին նրան։ Գժոխքը քանդուեցաւ նոցա համար և նոքա ալքալութիւն մտան։ Հաւատացող աւազակի հոգին ևս արքայութիւն գնաց։


77. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ.

Մատ. ԻԷ. 1—15. Մարկ. ԺԶ. 1—8. Ղոկ. ԻՊ. 1—8. Յով. Վ. 1—2.

Շաբաթ գիշերը գերեզմանի մօտ կարգուած պահպատները յանկարծ շարժ զգացին և սպիտակ ու փալլուն հանգերձով մի հրեշտակ տեսան, որ եկաւ գերեզմանի քարը զլուրեց և վերան նստաւ։ Այս բանից զարհութելով, զողալսի, զնացին և պատմեցին քահանաւապետներին այն պատահուրը։ Քահանաւապետներին կաշառք տալով՝ իսրաւեցին նրանց, որ ասեն թէ՝ «գիշերը մէր քնած ժամանակը Քրիստոսի աշակերտներն եկան և նորա մարմինը գողացան»։ Նոյն ժամանակ Գալիլիացի կանալը՝ Մարիամ Մազդարենացի, Մարիամ Յակովլեան, Սաղովուն և ուրիշ կանալը՝ ի միասին Քրիստոսի գերեզմանն էին զնում, որ նորա մարմինը իւղով օծեն։ Նոքա տեղեակ չէին այն պատահած անցքին, և չգիտէին անգամ թէ գերեզմանի մօտ պահպատներ զրուած էին։ Ալգին մտնելով, տեսան որ քարը զլորուած էր։ Մարիամ

Մագդաղենացին քաղաք վազեց և ասաց աշակերտներին. «Տիրոջս հանել են գերեզմանից և չգիտեմ թէ ուր են դրել նորան:

Միւս Խւզաբեր կանալք ալրին մօտեցան և հրեշտակներին տեսան, որոնք նոցա ասացին. «Նազովրեցին Յիսոս յա-



րեաւ ՚ի մեռելոց»: Նոքա քաղաք դարձան աշակերտների մօտ և պատմեցին նոցա, ինչ որ տեսան, բայց աշակերտները նոցա չէին հաւատում:

Քրիստոսի յարութեան օրը մենք աւելի շքեղութեամբ ենք տօնում, քան թէ միւս օրերը, որովհետեւ Քրիստոս իւր

յարութիւնով շատ պարզ ցոյց տուեց իւր Աստուածութիւնը և հաւաստի արեց մեզ, որ մենք ևս յարութիւն կ'առնենք: Այս տօնը մենք անուանում ենք Գլուխ ամենայն քննից: Սա կոչվում է Զատիկ կամ Պասէք, որովհետեւ օրինակ է Հրէական Պասէքի: Բացի սորանից Քրիստոսի յարութեան լիշտակին մենք նուիրում ենք ամէն եօթնեակի առաջին օրը զկնի շաբաթու և ասում ենք — Կիւրուէկ:

Քրիստոսի յարութեան Հերոյ ոռնեցոծ մեր հուսարը յայտնում էնք այսպէս...

### Յերրորդ աւուր յարուցեալ:

Ի՞ւ մեր հուսարը մետեաշերի յարութեան մոսին, մենք յայտնում ենք այսպէս:

### Հաւատամք ՚ի յարութիւն մեռելոց:

~~~~~  
Յարութեան ժամանակ.

Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց, մահուամք զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարզեեաց, նմա փառք յարիտեանս ամէն:

~~~~~  
78. Երեխումն Քրիստոսի

Դոկ. իդ. 8—48 Յոլ. ի. իմ. Մատ. իդ. 16—20.

Լոյս կիւրակէ Քրիստոսը Յովսէփի պարտիզի մէջ Մարիամ Մագդաղենացւոյն երևեցաւ: Յետոյ իւր երկու աշա-

կերտներին ճանապարհորդակից եղաւ մինչև Եմմառուս գիւղը. իսկ երեկոյին Նրուսաղէմի մէջ երեեցաւ բոլոր աշակերտներին թովմասից զատ, որ ալնուել չէր: Բայց մէկ շաբաթ յետոյ, երբ Թովմաս ևս աշակերտների հետ էր, դարձեալ երեեցաւ: Զատկի տօնից յետոյ Քրիստոսի աշակերտները Նրուսաղէմից Գալիլիայ գնացին, և ալնտեղ Գալիլիացւոց ծովի եզերքի մօտ իւրեանց վարդապետին տեսան: Գալիլիայի լեռներից մէկի



վերայ հինգ հարիւրից աւելի մարդկանց երեեցաւ: Բայց ոռ-  
քանից երեեցաւ նաև Պետրոսին և Յակովոսին:

Այսպէս աշակերտն օրուայ մէջ աշակերտները քանի  
մի անգամ տեսան յարուցեալ Քրիստոսին: Այն ժամանակ  
Քրիստոս Հաւատացրեց նոցա, թէ ինքն խօսակէս յարութիւն  
առաւ մեռելներից. ցոյց էր տալիս նոցա իւր վերքերը և նոցա  
հետ կերակուր էր ուտում. բայց աշակերտները նկատում էին,

որ նորա մարմինը առաջուան նման չէր, որովհետեւ գուները  
փոկ ժամանակ ևս երեւում էր իրանց: Աշակերտները տարա-  
կուսած էին նորա չարչարանքի և մահուան վերալ: Այս պատ-  
ճառով Քրիստոս իւր աշակերտներին երեւում էր իւր յարու-  
թիւնից յետոյ, լիշեցնում էր նոցա, թէ այն մարդարէութիւն-  
ների համեմատ պիտի չարչարուէր նա և իւր փառքը պիտի  
մտնէր:


#### 79. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Դոկ, ին. 49—53, Գրծ. ա. 4—14.

Քրիստոսի յարութիւնից քառասուն օր յետոյ՝ աշակերտ-  
ները մի տան մէջ հաւաքուեցան: Քրիստոս ալնտեղ երեեցաւ  
նոցա և ասաց. «Ես կուղարկեմ ձեզ իմ Հօրս խաստացած Սուրբ  
Հոգին. իսկ գուք Երուսաղէմի մէջ մնացէք, մինչև որ ՚ի  
վերուստ զօրութիւն առնուք: Յովհաննէսը ջրով էր մկրտում,  
իսկ քանի մի օրից յետոյ Հոգով Սրբով պիտի մկրտուիք:» Աշակերտներն ուրախացան և ասացին Քրիստոսին. «Տէր,  
նոյն ժամանակին պիտի նորոգես Խրապէլացաց թագաւորու-  
թիւնը»: Քրիստոս պատասխանեց թէ. «Չեզ հարկաւոր չէ  
զիտենալ այն ժամանակները, որ Հայր Աստուած սահմանել  
է: Բայց գուք զօրութիւն կ'առնուք, երբոր Հոգին Սուրբ  
ձեզ վերայ կ'իջնէ, և բոլոր աշխարհիս երեսին գուք ինձ հա-  
մար վկալ կըլինիք:» Յետոյ Քրիստոս նոցա հետ հեթանիա  
գիւղը գնաց և Զիթենեաց լերան վերալ կանգնելով, օրհնեց  
նբանց, և նոցա աչքերի տռաջ երկինքը հստիարձաւ և Հօր  
Աստուծոյ աջ կողմը նստաւ. (այսինքն՝ իւր հարդէռլեամբն և Ասպրոտծացին կոտո՞ւ և պարիս ասուած):

Աշակերտները ապշած զէպի երկինք էին նորում, մինչև  
որ տեսան երկու հրեշտակ, որոնք նոցա ասացին. «Ի՞նչ էք

կանգնել և դէպի երկինք էք նայում: Այս Յիսուսը, որ համբարձաւ, դարձեալ պիտի գայ այնպէս, ինչպէս տեսանք նորա համբառնալը դէպի երկինք»: Առաքեալք մեծ ուրախութեամբ լցուած, Երուսաղէմ դարձան:



Մէր հաւատը Քրիստոսի համբարչման և Նորա երէրրը գալութեան մասին մէնք յայտնում ենք այսպէս.

Եւեալ յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և

փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան:


### 80. ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատ. Ժ. 1—8. Իէ. 18—20. Մրկ. Զ. 12—13. Դուկ. Ե, 13—16. Ցոկ. Ի. 21—23.

Քրիստոս համբառնալուց յետոյ աշխարհիս վերալ թողեց իւր աշակելոտներին, որոց անուանեց Պատառէտոյ, որ կընշանակէ ուղարկուած: Նոքա տասներկու հոգի ընտրուած էին, բայց մինը, Յուդա իսկարովտացին, Քրիստոսի մատնիչն եղաւ: Միւս առաքեալների անունները սոքա են. Ալման, որին Քրիստոս Պէտրոս անուանեց, նորա եղբայր Անդրեասը, Յահովէռու և Յաշհաննէն Զեբեղիալի որդիքը, Փէլէպողոսը, Նուբանայէլը, որ Բարբար շէմբու ևս կոչուեցաւ. Թամասը, Մատթէոս մաքսաւորը, Յահովէռու Ալփիալի որդին, Տեառն եղբայրն Յուդա և Շատուն, որ նախանձայուզ էր կոչում: Սոքա ամէնքը հասարակ ժողովրեան դասից էին և մեծ մասը Գալիլիացի ձկնորսներ:

Քրիստոս գեռ աշխարհիս վերայ եղած ժամանակ քարոզելու ուղարկեց նրանց, և իշխանութիւնն տուաւ նոցա, որ իւր անունով բժշկութիւններ անեն: Այն ժամանակ շատ տըկարներին իւզով էին օծում և նոքա բժշկում էին: Քրիստոս իւր համբառնալուց առաջ նոցա երևելով, ասաց. «Դնացէք բոլոր աշխարհ, քարոզեցէք աւետարանը ամենայն արարածոց, մկրտեցէք նրանց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա՝ պահել այն ամէն բաները, ինչ որ ես ձեզ պատուիրեցի: Ո՞վ որ կըհաւատալ և կըմկրտուի, փրկութեան կըհանի. իսկ ո՞վ որ չի հաւատալ, կըդատապարտուի: Նւ ահա ես ձեզ հետ եմ մինչև աշխարհիս վերջը:

Առելք Հոգին Սուրբը, որոնց մեղքերը որ ներէք, ներուած լինի նոցա, և որոնց որ չներէք՝ նոքա իւրեանց մեղքի մէջ մնան:» Այսպէս ահա Քրիստոս իրաւունք տուաւ առաքեալներին, որ քարոզեն, մկրտեն, մեղքերի թողութիւն տան, և հիւանդներ բժշկեն, նոյնպէս հրամայեց նոցա, որ արթուն կենան, որ իրեն հաւատացողները ճշգիւ կոտարեն իւր պատուիրանները:



Տ1. ԳԱԼՈՒՍ ՀՈՎԻՇԵՆ ՍՐՅՈՅ ԱՌԱԲԵԱՆԵՐԻ ՎԵՐԱՅ

Դորձ. Բ. 1-41.

Քրիստոսի համբառնալուց յետոյ աշակերտները Երուսաղէմում մնացին, ուր վերնատան մէջ հաւաքուեցան և ժամանակը անց էին կացնում աղօթքով, Սուրբ Հաղորդութեան խորհուրդը կատարելով և անդադար միխթարիչ Սուրբ Հո-

գոյն սպասելով: Պէնտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները մի տան մէջ հաւաքուեցան: Ցերեկուան երրորդ ժամին (ըստ մեր հաշտոյն առաւտուեան ինն ժամին) յանկարծ մի մեծ շարժում եղաւ, որ սաստիկ հողմոյ յուզման էր նմանում: Հաւատացեալների սիրտը գերբնական ուրախութեամբ լցուեցաւ: Խւրաքանչիւրի գլխի վերալ հրեղէն լեզուներ երեւեցան. այն Հոգին Սուրբն էր, որ իջաւ նոցա վերալ, և Սոտուածային զօրութեամբ հաստատեց նրանց:

Ժողովուրդը այն աղմուկը լսելով, խուռն բազմութեամբ հաւաքուեցան վերնատան մօտ: Հաւատացեալները սկսան խօսել զանական լեզուներով, որի վերալ ամէնքը զարմանում էին: Այն ժամանակ Պետրոս ասաց ժողովրդեան. Քրիստոս, որին Հրէայք խաչեցին՝ յարութիւն առաւ մեռեալներից, և իւր Սուրբ Հոգին մեր վերալ ուղարկեց: Պետրոսի քարոզութիւնից յետոյ երեք հազար մարդ հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան: Այսպէս ահա հաստատուեցաւ երկրիս վերալ Սոտուածոյ արքայութիւնը, այսինքն՝ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին:

Մէր հաւատաց բերդի ամենասուրբ Երրորդութեան Երրորդ տնչը, այն է բերդի Սուրբ Հոգին. Բնույտ յայտնում էնք այսպէս.

Հաւատատամբ և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Ծորդանան, քարոզեաց զառաքեալն և բրակեցաւ 'ի սուրբսն:

82. ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Քրիստոսի երկինք համբառնալուց յետով, Աստուածամօր կեանքը երկար չտևեց: Գաբրիէլ հրեշտակապետը յայտնեց, թէ մօտեցել է նորա մահուան ժամանակը և նա մեծ ուրախութեամբ պատրաստվում էր դէպի մահը:—Մեռնելուց առաջ նա կամեցաւ տեսնել առաքեալներին, որոնք ցրուած էին զանազան երկիրներում—Քրիստոսի խօսքը քարոզելու: Տէր Աստուած կարգադրեց այնպէս, ինչպէս նորա կամքն էր՝ նորա մահուան օրը զանազան երկիրներից հաւաքուեցան բոլոր առաքեալները՝ բացի Բարթուղիմէոսից. նոքա տեսան նորա երանական վախճանք. տեսան, թէ ինչպէս երևեցաւ Քրիստոս, հրեշտակներով շրջապատուած, վեր առաւ նորա ամենամաքուր հոգին և երկինք վերացրեց նորան: Վառուած լապտերներով և սաղմոսերգութեամբ առաքեալները Աստուածամօր մարմինը տարան Գեթսեմանիա և այնտեղ մէկ ալրի մէջ ամփոփեցին: Նորա թաղման երրորդ օրը Երուսաղէմ եկաւ Բարթուղիմէոս առաքեալը: Սորա խնդրանքով առաքեալները բաց արին ալրը, որում ամփոփած էր Աստուածամալրը և ոչինչ չգտան այնտեղ, բացի նորա զգեստից: Առաքեալները մնացին տարակուսած: Այն ժամանակ երկնալին լուսով երևեցաւ նոցա ամենասուրբ Կոյսը և յալտնեց, թէ Աստուած յարութիւն տուեց նորան մեռածներից:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման լիշտակը միշտ տօնում ենք Օգոստոս ամսի 15-ին մօտ Հանդիպած կիւրակէ օրը. և այս տօնախմբութիւնը մեր եկեղեցին կատարում է ինն օր:

~~~~~

83. ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՆՈՐԱ
ԽՈՐՀՈՒԹԻՒՆԵՐԻ ՎԵՐԱՅ

Սուրբ Հոգու իջնելուց յետոյ՝ առաքեալներն իսկոյն սկըսեցին աւետարանի քարոզութիւնը և շատերը ընդունեցին նորան: Քրիստոսի հաւատացեալներից կազմուեցաւ մի ժողով (Հասարակութիւն), որի մէջ ամէնքը սիրում էին մէկմէկու և միակերպ հաւատում էին: Այս ժողովը ասվում էր Քրիստոնէական սուրբ եկեղեցի, իսկ նորան պատկանող մարդիկ՝ Քրիստոնեայք: Քրիստոսի եկեղեցին մի է, որովհետեւ ունի մի գլուխ—Քրիստոս, մի հաւատ, մի օրէնք և բոլոր քրիստոնեաները, խորհուրդների միջնորդութեամբ, ստանում են Սուրբ Հոգու շնորհքը: Մահն անգամ չէ բաժանում քրիստոնեաներին: Մեռեալ արդարները, իւրեանց Աստուածուն ուղղած աղօթքով, օգնում են երկրիս վերայ ապրող մարդիկներին. և սոքա ևս աղօթք են մատուցանում մեռած մարդկանց համար: Եկեղեցին առ-ը է, որովհետեւ քրիստոնեաները մաքրուած են Քրիստոսի արիւնով, և խորհուրդների միջնորդութեամբ Սուրբ Հոգու շնորհքով սրբագործում են: Ընդհանուրութեամբ է, որովհետեւ նորան պատկանում են բոլոր հաւատացեալները, ուր և լինին նոքա: Աստուածամալրն է, որովհետեւ նա պահպանում է առաքեալներից աւտնդուած ուսումը և կառավարվում է առաքեալներից հաստատուած հովիւներով:

Խորհուրդ ասվում են այնպիսի սրբարար գործողութիւններ, որոնցով հաւատացեալներին գաղտնի, անտեսանելի կերպով մատակարարվում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը: Այս իսկ շնորհքն է այն աստուածային զօրութիւնը, որը միաւորում է քրիստոնեաներին՝ ի մի ժողով և սրբագործում է նրանց: Հայստաննեայց ուղղափառ եկեղեցին առաքեալներից հետեւալ խորհուրդներն ընդունեց: Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշ-

խարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ քահանականութեան և Օծումն Հիւանդաց: Մկրտութեամբ ընդունում է Հաւատացեալը Հոգւոյն Սրբոյ շնորհքը—Նոր, քրիստոնէական կեանքի մէջ Հաստատ մնալու համար: Ասպաշխարութեամբ ստանում է շնորհք, որով թողութիւն է տրփում նորա մեղքերին: Հաղորդութեամբ քրիստոնեայն գաղտնի կերպով միանում է Քրիստոսի Հետ: Ամուսնութեամբ օրհնվում է այլ և կնոջ միառորութիւնը: Ձեռնազրութեամբ տրփում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որով ընտրեալն սրբագործուելով, մատչում է եկեղեցուն ծառայելու: Հիւանդների օծմամբը—տրփում է շնորհք, որով մարդ առողջութիւն է գտնում ծանր հիւանդութիւնից:

Հաւատաց, որ ունինք բեղի Եկեղեցին և բեղի Տրոպուլեան շնորհբաշխ զօրութիւնը, այսպես ենք յայդում.

Հաւատամբ՝ի մի միայն ընդհանրան և առաքելական սուրբ եկեղեցի,՝ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն,՝ի քաւութիւն և՝ի թողութիւն մեղաց:

84. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութեան խորհրդով ընդունում է մարդ Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որով վերածնում է, ալսինքն ստանում է նոր կեանք: Այս խորհրդով կատարփում է մկրտուողին երեք անգամ ջրի մէջ ընկդմելով, որի հետ արտասանվում են այսխօսքերը. «Մկրտվում է ծառայն Աստուծոյ (այս անուն) յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: Մկրտուողն աւազան մտնելով մեղաւոր, դուրս է գալիս ալնտեղից, Հոգւոյն Սրբոյ շնորհիւ, տրդարացած իրեւ մարդ Աստուծոյ:

Մկրտութիւն ընդունող մարդուց պահանջվում է, որ նա հրաժարուի իւր առաջուայ վաստարարով կենցաղավարութիւնից, ստանալից և ամէն չարութիւններից, լոյտնէ իւր փափագը Քրիստոսի հետ միաւորուելու և գաւանէ գէպի Քրիստոս ունեցած հաւատալ: Մկրտութիւնից յետոյ նորան հագցնում են սպիտակ շոր, ի նշան նորամաքրութեան: Մկրտութեան խորհսւագը անկրինելի է:

Մկրտուածին նոր կեանքի մէջ գաստիարակելու համար տրփում է կնքահայր, որը ընդունելով նորան աւագանից, նորա երաշխաւորն է գառնում: Երեխալի մկրտութեան ժամանակ կնքահայրը նորա տեղ լոյտնում է ստանալից հրաժարուիլը և հաւատոյ դաւանութիւնը: Նա պիտի հոգայ, որ երեխալն գաստիարակուի քրիստոնէական հաւատի մէջ:

85. ԳՐՈՒՄ

Դրոշմի խորհրդով նոր մկրտուածը ընդունում է Սուրբ Հոգու շնորհքը, որով հաստատվում է քրիստոնէական կեանքի մէջ: Դնոշմը կատարփում է իւկոյն մկրտութիւնից յետոյ: Քահանայն սուրբ մեռօնով օծում է մկրտեալի ճակատը, աչքերը, հոսուելիքը, բերանը, ականջները, ձեռքերը և ոտները, արտասանելով այս խօսքերը. «Կնիւթ ՏԵԱՈՒՆ ՄԵՐՈՅՑ ՅԵՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»: Մարմնի գոնսազան անդամները օծփում են՝ի նշան նորա, որ Հոգին Սուրբ սրբագործում է և զօրացնում մարդու ամէն զգալարանքները և գործերը:

Մեռոնն է իւղ կաղմած զանազան անոշահոտ ծաղիկներից և խոտերից, որոնց մէջ զլխաւոր մասը կազմում է ձիթենու իւղը և ազնիւ բալասանը, և օրհնվում է Սուրբ Եջմիածնում մեծ հանդիսով ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսից, և այնտեղից տարածվում է Հայատանեալց ամենայն եկեղեցիների մէջ:

86. ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ

Ապահխարութեան խորհրդով Քրիստոնեայն ստանում է Սուրբ Հոգու շնորհքը, որով սրբում է նա մկրտութիւնից յետոյ գործած մեղքերից:

Ապահխարութեան մատչողից պահանջվում է մեղքերի զղումն և վարքը ուղղելու դիտաւորութիւն: Որպէս զի քրիստոնեալք միջոց ունենան իւրեանց մէջ զղման զգացմունքը արծարծելու, եկեղեցին նշանակում է ապահխարութիւն՝ այսինքն պահք, աղօթք և առանձնութիւն: Իսկ վարքը ուղղելու դիտաւորութիւնը աւելի հաստատ պահելու համար ապահխարողին սահմանվում է ապահխարանքը, որի կատարումն պիտի լիշեցնէ նորան իւր միտումը դէպի չտրը և օգնէ նորանից հեռանալու: Քրիստոնեայն իւր զղումը յայտնում է քահանայի առաջ, որ դառնում է նորա հոգեսր հայր, բժիշկ նորա հոգու և դատաւոր խոհի: Զղման այսպիսի արտայատութիւնը կոչվում է՝ խոստովանութիւն:

87. ՀԱՂԱՌԴՈՒԹԻՒՆ

Հաղորդութեան խորհրդի մէջ քրիստոնեայն հացի տեսակով ճաշակում է Քրիստոսի մարմինը և գինու տեսակով ընդունում է նորա արիւնը, որով և միանում է Քրիստոսի հետ:

Պաշտօնը, որով կատարվում է Հաղորդութեան խորհրդը, կոչվում է պատարագ, որ ասել է զոհ կամ նուել: Նա կատարվում է սովորաբար ճաշու ժամին, այսինքն կէս օրից առաջ, շատ անգամ առաւատեան ժամից յետոյ, և երկու ճրագալուցի օրերում երեկոյեան ժամից յետոյ:

Պատարագ մատուցանելիս քրիստոնեալք լիշում են իւ-

ըեանց Փրկչի ծնունդը, քարոզութիւնները, չարչարանքը, մահը, յարութիւնը և համբարձումն: Որոնք արժանի են Քրիստոսի հետ միաւորուելու, հաղորդվում են. իսկ անպատրաստները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշխարք) են ճաշակում:— Իւրաքանչիւր քրիստոնեայ, եկեղեցու կանոնների համեմատ, պարտաւոր է հաղորդուել տարին հինգ անգամ՝ հինգ տաղաւարաց օրերում, կամ գոնէ մէկ անգամ – անպատճառ:

88. ԱՄՈՒՆԱՌՈՒԹԻՒՆ

Ամուսնութեան խորհրդով Քրիստոսի եկեղեցին օրհնում է ամուսնական միաւորութիւնը և խնդրում է Աստուծուց այր և կնոջ համար այնպիսի կատարեալ սիրոյ շնորհք, որով միաւորուած է Քրիստոս իւր եկեղեցու հետ: Այսպիսի շնորհքը խնդրում է՝ զաւակ ծնանելու և նրանց քրիստոնէավայել կերպով մեծացնելու համար:

Ամուսնութեան խորհուրդը նոքա միայն կարող են ընդունել, որոնք սորա համար սահմանեալ տարիքն ունին, կայ ամուսնացողների մէջ փոխադարձ համաձայնութիւն և պսակի դէմ սահմանուած արգելքներ չունին:

89. ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգի խորհրդով ձեռնադրուողին տրվում է շնորհք և իշխանութիւն՝ ժողովուրդը հովուելու և եկեղեցու սուրբ խորհուրդները կատարելու:

Կարգը եօթը բաժանումն ունի՝ առաջին երեքը մեծ, այսինքն քահանայութիւնը, սարկաւագութիւնը և կիսասար-

կաւագութիւնը՝ յատկապէս Կարգ են կոչվում: Խոկ վերջին չորսը փոքր, ալսինքն՝ ջահընկալութիւն, երդմնեցուցութիւն, ընթերցողութիւն և գոնսապանութիւն, յատկապէս աստիճանք են կոչվում: Եպիսկոպոսութիւնը նոր կարգ չէ, այլ գերագոյն իշխանութիւն է՝ աստիճանները և միւս կարգերը տալու:

90. ՕԾՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՅ

Հիւանդաց օծման խորհրդով տրվում է Հոգւոյն սրբոյ շնորհքը, որով հիւանդը ընդունում է Աստուծուց մարմնի առողջութիւն և ներելի մեղքերի թողութիւն:

Այս խորհրդով կատարում է քահանայն ալյալէս՝ որ ձեռը դնելով և իւղով օծելով, ազօթք է անում հիւանդի վերայ:

Թէ և Յակոբոս առաքեալից կանոնոգրուած է ազօթքը և օծումը միանգամայն կատարել, բայց որովհետև խորհրդի գլխաւոր մասն ոյն տղօթքն է, որ գիշերաժամ ենք անուանում, այս պատմառով Հայաստանեալց ուղղափառ եկեղեցին սովորութիւն է արել՝ առանց օծման կատարել այս խորհրդով:

91. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԽԱՏԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ

Սկզբում քրիստոնէութիւնը շատ թշնամիների հանդիպեցաւ: Ամէն տեղ քրիստոնեաներին հալածում էին՝ արգելում էին բանտերի մէջ, տանջում էին և սպանում: Քրիստոնէական հաւատի համար առաջին նահատակ եղաւ Ստեփանոս նախասարիաւագը—նորան քարկոծեցին: Բոլոր առաքեալները, բացի սուրբ Յովհաննէսից, կատարեցան մարտիրոսական մահուամբ: Սուրբն Պետրոս և Անդրէաս խաչուեցան,

իսկ սուրբն Պօղոս գլխատուեցաւ: Սորբա երկուսն էլ, ալսինքն Պետրոս և Պօղոս առաքեալները, Հռովմումը նահատակուեցան մի օրուայ մէջ, ինչպէս ասում է աւանդութիւնը: Թագէոս և Բարթողիմէոս նահատակուեցան Հայաստանի մէջ Հայոց Սանտարուկ թագաւորի իշխանութեան ժամանակ: Բայց Քրիստոսի վարդապետութիւնը, չնայելով բոլոր հալածանքներին, աւելի և աւելի տարածվում էր երկրին վերայ: Այս քաշած տառապանքներից Քրիստոնէութեան քարոզիչները ամենեւին չցուսահատուեցան և որքան աւելի չարչարվում էին, այնքան աւելի ուրախունում էին, հաստատ համոզուած լինելով, որ կարճատե տանջանքից լետոյ սպասում է նոցատրգարութեան պասկը երկնալին թագաւորութեան մէջ: Հաւածուելով մի տեղից, նոքա անցնում էին միւս տեղերը, ուր և գտնում էին իրանց հետեւողներին:

92. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԼՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մինչդեռ քրիստոնէութիւնը հալածվում էր ամենուրեք, հեթանոսական Հայաստանը նորան պաշտպան հանգիսացաւ: Արգար Հայոց թագաւորը Քրիստոսի քարոզութիւնների և հրաշագործութիւնների միխթարական լուրը առնելով և ինքը վարակուած լինելով անլուժելի հիւանդամթեամբ (ըորոտութեամբ), գեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ նամակով և խնդրեց որ գալ Եղեսիտ քաղաքքը, բժշկէ նորան հիւանութիւնից և այնտեղ խաղաղական իեանք վարէ, հեռու թշնամիներից: Յիսուս հրամայեց Թուվմայ առաքեալին՝ զրել նամակի պատասխանը, որի մէջ խոստացաւ իւր համբարձմանց լետոյ իւր աշակերտներից մէկին ուղարկել, որպէս զի բժշկէ թագաւորին հիւանդամթիւնից և միանգամայն միխթարէ նորան երկնաւոր միխթարութեամբ:

Արդարեւ Քրիստոսի Համբառնալուց յետով՝ Թագէոսը, որ
նորա եօթանասուն աշակերտներից մէկն էր, մտաւ Եղեսչիայ
քաղաքը և իւր առաքելական քարոզութիւնը սկսեց նոյն իսկ
թագաւորական պալատից։ Արդարը Հաւատաց և բժշկուելով
հիւանդութիւնից՝ մկրտուեց ինքը և իւր գերդաստանը և
նոցա հետ միասին Եղեսչալի բնակիչները։ Շուտով փակուե-
ցան կռատունները և նոցա տեղ փալլեց Քրիստոսի Սուրբ
Խաչը։ Թագէոսը հիմնելով եկեղեցիք, ձեռնադրելով իւր տեղ
Աղդէ եպիսկոպոսին և կարգելով քահանաներ, ինքը գնաց
Հայաստանի միւս աշխարհները աւետարանը քարոզելու։

Արգարի հօրաքեռ որդին, Սանատորուկ, որ ըշմուս էր Հայաստանի Շաւարշան կամ Արտազ գաւառում, իւր Սան- գուխտ գտտեր հետ թէև առաջ ընդունեց քրիստոնէութիւն, բայց յետոյ ուրանալով՝ նահատակեց Թաղէոս առաքեալին և իւր գուստը Սանդուխտին:

իւր դուռատը Սամկութալը։
Թագէսոսից յետոյ ՅՅ թուականին գալիս է Հայաստան Բարթուղիմէոս առաքեալը, բերելով իւր հետ Աստուածածնի թարթուղիմէոս առաքեալը, բերելով իւր հետ Աստուածածնի թիւր, հաստապատկերը, շատացնում է Հաւաստացեալների թիւր, հաստապատկերը, շատացնում է ապա նա ևս նահատակվում է Սատում է եկեղեցիք և ապա նա ևս նահատակվում է Սահատը Այսպէս ուրեմն Հայաստանեալց եկեղեցին կարող է բացարձակ կռչուի՝ Առաջն Քըստրոնեալուս Եկեղեցէ։

Թէ բացարձակ զմշուրը լուսաւ է այս քրիստոնէութեան տարածմանը, բայց Թաղէսոսի և Բարթոլդիմէոսի առաջելական քարողութիւնը և թափած արիւնը անօգուտ չանցելական հարուստութիւնը և մինչեւ Գրիգոր Լուսաւորչի ցան Հալաստանի մէջ, այնպէս որ մինչեւ Գրիգոր Լուսաւորչի տակները (302 թ.) ոչ հոգիւները պակասեցան և ոչ նահաօրերը:

93. ԳՐԻՎՑՈՒՅԹԵԱՆ ՑԱՂԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԵՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԽԵՐԲԻՉ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ Հեթանոս Անակ Պահ-
լաւունու որդին էր, ծնուեցաւ Վաղարշապատ քաղաքում
257 թ: Եւ երբ նորա հայրը, Խորով թագաւորին սպանելուց
լետով, չկարողանալով փախստեամբ ազատուիլ, խեղդուեցաւ
Երասխ գետի մէջ, իսկ նորա ընտանիքը սրով կոտրուեցան.
այս կոտրածից ազատ մնաց երեք տարեկան մանուկը: Սո-
րան, իւր գալեակ Սոփիա անունով կինը, որ հաւատով քըիս-
տոննեալ էր, տանում է Կեսարիա, և այն տեղ մկրտել տալով՝
անունը դնում են Գրիգոր: Նա կեսարիայում սնաւ քրիստո-
նէական բարեպաշտութեամբ: և 18 տարեկան հասակում ա-
մուսնանալով՝ ունեցաւ երկու որդի, Վրթանէս և Արիստակէտ

Գրիգորը, բաժանուելով իւր կին Մարիամից, զնաց Հռովմ, ուր այն ժամանակ գտնվում էր Խոսրով թագաւորի որդին Տրդատը, որի մօտ նա ծառալ մտաւ, որպէս զի իւր հօր յանցանքը քաւի: Գրիգորը մնաց Տրդատի մօտ մինչև որ նա թագաւոր եղաւ ու Հռովմից վերադարձաւ Հալաստան 286 թ: Երբ նոքա համնում են Եկեղեց գաւառի Երեկ աւանը, Տրդատ շնորհակալութեան զոհ է մատուցանում Անահիտ դիցուհուն և Գրիգորին պատուիրում է, որ ծաղկէ պասակ զնէ կուռքի գլխին. բայց նա չկատարելով թագաւորի հրամանը, յայտնի ցոյց է տալի իւր քրիստոնէութիւնը, որ մինչեւ այն ժամանակ ծածուկ էր պահում: Ուստի Տրդատը սարսափելի տանջանքներ է հասցնում նորան և իմանալով, որ Գրիգորը իւր հօրն սպանող Անակի որդին է, հրամայում է ձգել Արտաշատ քաղաքի խորիրասովի մէջ, ուր միայն մահապարտներին էին ձգում: Գրիգորը մնում է նորա մէջ 15 տարի, Կերակրուելով մի բարեպաշտ կնոջից:

Այս միջոցին (Յ01 թ.) Տրդատի հրամանով կատարվում է Հռիփսիմեանց Սուրբ կոյսերի նահատակութիւնը. Սոստուածային պատիժն էլ իսկոյն համուռմ է թագաւորի, նորա ընտանիքի և նախարարների վերալ. Տրդատը կորցնում է բանականութիւնը և կատաղած դիմում է անմտրդարնակ տեղերը: Յետոյ խորվիրապից համուռմ են Սուրբ Գրիգորին, որի աղօթքով բժշկվում է թագաւորը և բոլոր այսահարները և կրկին նորոգվում է քրիստոնէութիւնը Հայոց աշխարհում:

Այսուհետեւ նախարարներ, իշխաններ և հուտառցեալների բազմութիւնը հաւաքուելով Տրդատ թագաւորի մօտ՝ համակամ խորհրդով և հաւանութեամբ ընտրում են Սուրբ Գրիգորին իրանց հովիւ և առաջնորդ և մեծ պատուով Վաղարշապատ քաղաքից տանում են Փոքր Հայատանի Կեսարիա քաղաքը, ուր Աւոնդիոս Հայրապետից, որ Թաղէոս առաքեալի յաջորդն էր, ձեռնադրվում է Հայրապետ քովանդակ Հայատանի՝ Յ03 թուականին Փրկչի:

Սուրբ Գրիգորը վերագառնալով Կեսարիալից Հայուստան, իւր քարոզութեամբ պատրաստում է բոլոր ժողովուրդին մըկրտութիւն ընդունելու համար, պատուիրամ է աղօթել և պահք պահել (Առաջաւորաց պահք) և ապա Եփրատ գետի մէջ մկրտում է թագաւորին, Աշխէն թագուհուն, Խոսրովիդուստին և բոլոր բազմութեանը,—պատուրագ է մատուցանում և ամենքը հաղորդվում են: Այսաեղից թագաւորի հետ գումանի է Վաղարշապատ քաղաքը և Յ03 թուին սկսում է իշխածնի հոլակապ եկեղեցու շինութիւնը:

Յետոյ Սուրբ Լուսաւորիչը շըջելով Տրդատի հետ Հայուստանի ամէն կողմերը, մկրտում է ամենքին, բայց է անում գովրոցներ, կարգում է ուսուցիչներ, ձեռնադրում է եպիսկոպոսներ, քահանաներ, շինում է շատ եկեղեցիք, վանօրալք, կուսանոցներ և հիւրանոցներ, սահմանում է տօներ:

Եւ այսպէս Հայատան աշխարհը քրիստոնէական լուսով

լուսաւորելուց յետոյ՝ Սուրբն Գրիգոր Յ01 թուականին առանձնանում է Սեպուհ սարի վերալ—Մանիսալ ալրը, ուր և կընքում է իւր բազմարդիւն կեանքը:

Ի պատիւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ Հայոց եկեղեցին սահմանած ունի երեք տօն:

ա. Մեծի պահոց հինգերորդ եօթնենկի շաբաթ օրը կատարւում է տօն՝ ՚ի լիշտակ չարչարանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և մտին ՚ի վիրապն:

բ. Ելն նորա ՚ի վիրապէն: Սա լինում է ամառը յունիս ամսին—շաբաթ օրը: Իսկ միւս օրը, որ կիւրակէն է, միշտ կատարվում է Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի:

գ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Աս ևս լինում է ամառը յունիս կամ յուլիս ամիսներին՝ դարձեալ շաբաթ օրը:—

Բայց յայսմանէ սուրբ Աստուածածնի պահոց եօթնենկին — շաբաթ օրը լինում է Տօն Շողակաթին սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:— Սոյն օրը առաւտահան ժամին հոգեռորականաց դասը, ՚ի միջի ալլոց, երգում է և հետեւեալ շաբականը:

Եջ Միածինն ՚ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա, ձայնք հրնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի պատմէր ցնծու-

Միածին Որդին իշաւ Հօրից և Կորա հետ փառաց լոյսը՝ անդունդի խորքերը ձայներ հանեցին:

Գրիգոր Հայրապետը մեծ լոյսը տեսնելով, ուրախութեամբ

**Թեամբ հաւատացեալ
արքային:**

Եկայք շինեսցուք
սուրբ զխորանն ըու-
սոյ, քանզի ՚ի սմա-
ծագեաց մեզ լոյս ՚ի
Հայաստան աշխար-
հի:—

**պատմեց հաւատացեալ
թագաւորին (Տըր-
դատին:)**

Եկէք շինենք ըու-
սոյ սուրբ խորանը
(եկեղեցին), որովհե-
տեւ այստեղ—Հայաս-
տան աշխարհում—
մեզ լոյս ծագեցաւ:

94. ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՒ ՀԱԽԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԻ

Աստուածալին վարդապետութիւնը պարունակվում է Սուրբ Գրքի և սուրբ աւանդութիւնների մէջ: Սուրբ Գիրքը բաղկացած է շատ գրքերից, որոնց գրել են սուրբ մարդիկ, այ-
սինքն մարդարէնները և առաքեալները Սուրբ Հոգու ազգե-
ցութեամբ: Այս գրքերից մի քանիսը գրուած են Քրիստոսի
ծնելուց տուսջ և ասվում են գիրք Հին Ռւխտի կամ Հին Քրոհտ-
քան,—միւսները Քրիստոսի ծնուելուց յետոյ, և ասվում են Գիրք
Նոր ուխտի կամ Նոր կրոհտան: Խոկ բոլորն ՚ի միասին ասվում
են Աստուածաշնորհ Գիրք: Սուրբ աւանդութիւնք տավում են
Աստուածալին այնպիսի վարդապետութիւնները, որոնք չեն
գրուած մարդարէններից և առաքեալներից, այլ բերանացի են
աւանդուած և քանի մի ժամանակից յետոյ միայն արձանա-
գրուած են եկեղեցու հովիւններից և վարդապետներից:

Քրիստոնեայ հասարակութեան մէջ շուտ երևեցան ճշշ-
մարտութեան թշնամիք, որոնք իրենց ազատ մեկնութիւն-
ներով աղաւաղում էին Քրիստոսի վարդապետութիւնը: Քրիս-
տոնեայք նրանց հերետիկոս անուանեցին: Հաւատացեալների

մէջ սկսուեցան վէճեր և անմիաբանութիւններ: Այս տեսակ
վէճերը լուծելու համար նկեղեցու հովիւնները սկսեցին միա-
սին հաւաքուել: Այս կերպով կազմուեցան ժողովներ: Տէղական
ժողով, ուր հաւաքում էին մի գաւառի եկեղեցու հովիւնները
և Տէղերական, ուր բոլոր տիեզերքից հաւաքում էին նկեղե-
ցու հովիւններ: Ժողովների մէջ եկեղեցու Հայրերը բոլոր տա-
րածայնութիւնները փարատեցին և կազմեցին հաւատոյ հա-
մառօտ բովանդակութիւնը կամ արձանագրութիւնը, որ տաս-
ներկու մասն է բաժանվում:

1. Հաւատամբ ՚ի մի Աստուած՝ Հայրն
ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևե-
լեաց և աներեւոյթից:

Մենք հաւատում ենք, որ կայ մի Աստուած, —որ մի է
Աստուած երեւ անհնարութեան մէջ, որ Ամենասուրբ երրորդու-
թեան առաջին անդ Աստուածն է, որ Աստուած ստեղծեց եր-
կինքը և երկիրը—ամենալի տեսանելի և անտեսանելի բա-
ներով, որ բոլոր ստեղծուածներին նա պահպանում է իւր
իշխանութեան ներքոյ և կառավարում է նրանց:

2. Եւ ՚ի մի Տէք Յիսուս Քրիստոս, յոր-
դին Աստուածոյ, ծնեան յԱստուածոյ Հօրէ միա-
ծին, ոյսինքն յեռթենէ Հօր, Աստուած յԱս-
տուածոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած Ճշմարիտ՝
յԱստուածոյ Ճշմարտէ ծնունդ և ոչ արարած:
Կոյն ինքն ՚ի բնութենէ Հօր, որով ամենայն
ինչ եղի յերկինս և ՚ի վերայ երկրի՝ երկելիք և աներեւոյթք:

Մենք հաւատում ենք, թէ Ամենասուրբ Երրորդութեան էրիրորդ անը է մի Տէր Յիսուս Քրիստոսը, Աստուծոյ սրբեն, թէ նա Թածին է, ալսինքն չկայ ուրիշ մէկը նրա նման. թէ Որդին Աստուծոյ ծնուած է Հօր Աստուծուց նոխ հան շյառիքեան, թէ նա ծնուած է ինչպէս լոյսը լուսից, ալսինքն ինչպէս արեգական ճառագայթը արեգակից. թէ նա ձշմարդ Աստուծուց, թէ նա չէ սպեշտուած. թէ նա Համագոյակից է Հօր Աստուծոյ, ալսինքն ունի Հօր Աստուծոյ հետ մի գոյութիւն. թէ ամենայն բան նորոշով է սպեշտուած. և ուրեմն նա է Արարիչ աշխարհի:

3. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս՝ ՚ի Վարիամայ Արբոյ Կուսէն Հոգւովն Արբով։ Որով էառ զմարմին, զշողի և զմիտ և զամենայն, որ ինչ է՝ ՚ի մարդ, ձշմարտապէս և ոչ կարծեօք։

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ երկնքից իջաւ մեզ հարդէանց փրկութեան համար, թէ նա մարմնացաւ, ալսինքն մարդկալին բնութիւն առաւ Մարդու Կուսէն Հոգւոյն սրբութեամբ. թէ նա մարդացաւ, ալսինքն եղաւ կատարեալ մարդ, չդադարելով և Աստուած լինելուց։

4. Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։

Մենք հաւատում ենք, թէ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը չարչարեանցաւ, ալսինքն ցաւ էր զգում, ինչպէս ամէն մարդ. թէ նա խոչ հանուեցաւ մեր պատճառով, ալսինքն թոյլ

տուեց իրեն խաչելու, որպէս զի մեր մեղքի Համար մեզ սպասելի լաւիտենտկան պատժից ազատէ. թէ նա մեռաւ խաչի վերայ և Առշուեցաւ։

5. Յերրորդ աւուր յարուցեալ։

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս մարդկալին բնութեամբ մեռնելուց լետով՝ երրորդ օրը լարութիւն առաւ։

6. Եւեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։

Մենք հաւատում ենք, թէ Աստուծոյ Որդին, Յիսուս Քրիստոսը, մարմնով համբարձու երկինքը, թէ նա նստած է Հօր Աստուծոյ աջ իռջը, ալսինքն ունի նորա հետ հաւասար զօրութիւն և պատիւ։

7. Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ՚ի զատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ դոյ վախճան։

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս Աերապէն իբաց, փառքով, թէ նա կը զայ նորա Համար, որ զատէ ինունիներին և մեռեներին, թէ այս զատաստանից լետով կը հասնի նոր Առգաւորութեանը որը վախճան չընի։

8. Հաւատամք և ՚ի Առքը Հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և

՚ի մարգարես և յաւետարանս: Որ էջն ՚ի
Յորդանան, քարողեաց զառաքեան, և բնա-
կեցաւ ՚ի սուրբսն:

Հաւատում ենք, թէ երրորդ անձն Ամենասուրբ Երրորդու-
թեան է Հոգին Սուրբ. թէ Հոգին Սուրբ Աստուած է, ուրեմն
և պարտական ենք Հօր և Որդւոյ հետ հաւասար փառք և
երկրպագութիւն տալ նորան: Թէ Խորքարէները և առաքեալ-
ները Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և սուրբ Գիրքը
գրելու ժամանակ՝ Հոգւոյն Սրբոյ շնչմամբ էին խօսում և
գրում. թէ երբ Քրիստոս մկրտվում էր Յորդանս գետի մէջ,
Հոգին Սուրբ իջաւ նորա վերայ աղաւնու կերպարանքով և
քարողեց, թէ Քրիստոս ուղարկուած է Հօրից, և թէ Հոգին
Սուրբ բնույթուուր ուրբերի մէջ:

9. Հաւատամբ ՚ի մի միայն ընդհանուրական և առաքելական Սուրբ եկեղեցի:

Հաւատում ենք, թէ Յիսուս Քրիստոս Տէրն մեր ընակ-
վում է իւր եկեղեցու մէջ. թէ եկեղեցին մ է, Սուրբ է, ըստ-
հանրական է և Աստուծուուն:

10 Հաւատամբ ՚ի մի Վկրտութիւն, ԺԿ- պաշխարութիւն, ՚ի Քառութիւն և ՚ի Թողու- թիւն մեղաց:

Հաւատում ենք, թէ մկրտութիւնով մարդս թողութիւն
է գտնում սկզբնական մեղքից և արժանի է լինում Հոգոյն

Սրբոյ շնորհքն ընդունելու, թէ մարդս ճշմարիտ ապաշխա-
րութեամբ ազատվում է և թողութիւն է ստանում այն մեղ-
քերից, որ գործել է մկրտութիւնից յետոյ:

11. Հաւատամբ ՚ի յարութիւն մեռելոց, ՚ի դատաստան յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից:

Հաւատում ենք, թէ ամէն մեռած մարդկանց մարմին-
ները վերջին գատաստանի օրը իւրեանց Հոգիների հետ պիտի
միանան և վերկենան Աստուծոյ Հրամանով և դատուին Քրիս-
տոսից և ամենքը իւրեանց վարձը ստանան:

12. Եւ ՚ի կեանս յաւիտենականս:

Հաւատում ենք՝ թէ այս երկրաւոր կեանքից յետոյ կը-
լինի մի ուրիշ՝ յաւիտենական կեանք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. ԵՐՐՈՐԴՈՒԹՅԻՒՆ ԵՎ ՄԻ ԱՍՏՈԱՆՑՈՒԹՅԻՒՆ: Ուժ ենք անուանում Աստուած: Կմր Ժամանակի, որ Աստուած չլինէր: Մ'ոք է Աստուած: Ի՞նչ յատկութիւններ ունի: Ի՞նչ կը նշանակեն ԱՇԽԱՔՔԻ: Ա.ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ և Ա.ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ բառերը: Կարդ ենք մենք Աստծուն տեսնել: Ի՞նչ յայտնեց Աստուած իրան Համար: Ի՞նչ կը նշանակէ Ամենասուրբ Երրորդութիւն: Ամենասուրբ Երրորդութեան երեք անձինքը հաւասար են միմեանց: Ինչ անուն ենք ապակի Ամենասուրբ Երրորդութեան: Ի՞նչ պատուիքան տուաւ մեզ Աստուած իրեն պատուելու Համար: Մենք թիջակէն ենք վատարանում Աստծուն: Ի՞նչ բառերով ենք յայտնում մեր ցանկութիւնը նորա անունով ապրելու:

2. Թէ ի՞նչ են Հրեցակները: Աշխալիքս մէջ եղած բոլոր բաները ըրտեղից յառաջ եկան: Ի՞նչ կը հանակէ առեջեւ բառը: Ամէն բանից առաջ Աստուած թիւս ստեղծեց: Ի՞նչ են Հրեշտակները: Ի՞նչ կը հանակէ հերշու: բառը: Ի՞նչու Համար Հրեշտակներին այդպիսի անուն ենք տալիս: Տոլոր Հրեշտակները հաւասար են միանաց: Ի՞նչպէս են բաժանվում: Հրեշտակները կամ գասերը թիւս անուններ ունին: Տոլոր Հրեշտակները բարի են ստեղծուած: Արդեօք բոլորը հաւատարին մնացին Աստծուն: Չար Հրեշտակները թիւս կոչվում: Տարի Հրեշտակները թիւս բարեք են անում մեզ և թիւս լինաս են տալիս շարերը: Ո՞ր Հրեշտակներին ասում ենք պահպառ Հրեշտու: Ո՞րպիսի աղօթքով գիտում ենք գէպի պահպառն Հրեշտակը:

3. ՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՀՎԾԻ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՄՏԵՎԾԱԿԱՆԾՈՒԹԻՒՆԸ; Ի՞նչ ստեղծեց Աստուած Հրեշտակներից յետոյ: Քանի՞ օրուայ մէջ ստեղծուեցաւ բոլոր տեսանելի աշխարհը: Ի՞նչից ստեղծեց Աստուած առաջին մարդը: Անզնվ գանացանեց նրան կենդանիներից: Ի՞նչպէս ստեղծեց Աստուած առաջին կինը: Ինչու նախա-

Հօր կողքից ստեղծեց նըան: Ի՞նչ էին առաջին մարդոց անունները: Աստուած ստեղծագործութիւնից յետոյ աշխարհիս վերայ խնամք ունէր: Ի՞նչպիսի անուններ ենք տալիս աշխարհս ստեղծող և նախախնամող Աստծուն: Ի՞նչ պատուիր տուաւ Աստուած եօթներորդ օրուայ համար: Ո՞րպիսի ազօթքով դիմում ենք դէպի Աստուած քնից գարթենելուց յետոյ:—

4. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՅ ԿԵՊՆՔԻ ԴՐԱԽՏԻ Ա.Հ: Աստուած առաջին մարդկանց նոր բնակեցրեց: Ի՞նչ է դրախտը: Դրախտի մէջ ինչ երենելի բան կար: Աստուած առաջին մարդկանց դրախտը տանելու ժամանակ թնչ ասաց: Երջանիկ էին արդեօք մարդեկ դրախտի մէջ: Ի՞նչ հոգեկան և մարմնական գրազմունք ունէին նոքա: Առաջին մարդեկը հոգով թնչափ էին: Աստուած նոցա թնչ պատուիրան տուաւ և ինչնու համար: Տուան մեզ արդեօք Աստուած ոյժ և կարողութիւն ուսանելու: Ո՞րպիսի ազօթքով դիմում ենք դէպի Աստուած դասից առաջ և դասից յետոյ:

5. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՅ ՄԵՂ.ՔԻ ՄԵՂ ԸՆԿԻ.Լ: Առաջին մարդեկ մէջտ իւրեանց երանելի վիճակի մէջ մնացին: Նոքա թնչ պէս կրցըին իւրեանց երանութիւնը. Ո՞վ նրանց խարեց և ինչպէս: Մարդեկ յանցանք գործելուց յետոյ թնչ զգացին: Այն ժամանակ թնչ արեն: Մեղքի պատճառով թնչ փոփոխութիւն եղաւ նոցա հոգու մէջ: Ո՞րպիսի պատուիրան տուեց մեզ Աստուած ուրեշի բարութեան չնախանձելու համար:

6. ԽՈՍՏՈՒՄԻ ՓՐԿՉԻ ԵՒ ՆԱԽԱԾՈՂԱՅ ՅԱՆՑԱՆՔԻ ՊԱ.ՏԻՖ.Բ: Աստուած թնչափս պատժեց մոլորեցնող սաստանալին: Տրուած պատժեց մարդեկ թնչ էին դուշակում: Աստուած թնչափս պատժեց մարդկանց: Ի՞նչ հրամայեց նոցա որ կատարեն՝ Փրկչին յիշելու համար: Մարդեկ դրախտի մէջ մնացին թէ ոչ: Աստուած մարդամար: Մարդեկ դրախտի մէջ մնացին թէ ոչ: Աստուած մարդեկը կրցը այն միջոցը, որի մէջ մարդեկ պատրաստվում էին Փրկչի կոչըլում այն միջոցը, որի մէջ մարդեկ պատրաստվում էին Փրկչի լուղունելու: Ի՞նչ ենք լինդրում Աստուածուց քնիլուց առաջ:

7. ՄԱՐԴԿԱՆՅ Ա.Հ.Գ.Բ ՄԻՆՉԵՒ ԶԲՀԵՂ.Ե.Գ: Ադամի և Եւայի մահուամբը նոցա պատիմն ևս վերջացաւ: Ի՞նչ յոյս ժառանգեցին մարդեկ նախածնողներից. Աղամի և Եւայի առաջին որդւոց ամարդեկ նախածնողն թնչ էին: Նոքա սիրով էին միմեանց հետ: Նոցա թշնամութեան հետեւանքն թնչ եղաւ: Աստուած թնչափս պատժեց Կարցին և ինչնով միխթարեց նախածնողներին Արէլի մահուամբ:

տոյ: Կայէնը իւր հօր տանը մնաց, թէ ոչ Ի՞նչպիսի մարդեկ յառաջ էկան Կայէնի և Սէլթի սերունդներից: Մարդեկ բոլորովին բաժանուած մնացին: Նոցա միանալուց ինչ յառաջ եկաւ: Աստուծում հաւասացող մարդ ևս գտնվնում էր Աստուծալին որ պատուիրանները արգելում են մեզ չարութիւններ անելը:—

8. ՁԲՀԵՂ.Ե.Գ: Աստուած թնչափս պատժեց մարդոց նոցա չարութեան համար: ՁբՀեղեղի ժամանակ բոլոր մարդեկ խեղուեցմն: Աստուած թնչափս ազատեց Նոյին և նորա ընտանեացը: Նոյի ընտանիքից զատ նվ կար տապանի մէջ: ՁբՀեղեղը թնչափս սկսուեցաւ: ՁբՀեղեղից յետոյ նոյ թնչ արաւ: Աստուած նոյի գոհը ընդունեց: Ի՞նչ խոստացաւ Նոյին: Ի՞նչ նշան տուաւ իւր խոստման կատարուելուն:—

9. ՄԱՐԴԿԱՆՅ Ա.Հ.Գ.Բ ՁԲՀԵՂ.Ե.Գ.ԱՅ ՅԵՏՈՅ: ՁբՀեղեղից յետոյ մարդեկ արդար մնացին: Ի՞նչ չարութիւն երեւցաւ նոցա մէջ: Ո՞վ եղաւ առաջին անպատկառութիւն անողը իւր ծնողաց դէմ: Քամը թնչափս ձազրեց հօրը Քամի եղբարյներն թնչափս վարուեցան: Քամը թնչափս պատժուեցաւ: Ի՞նչպէս վարձատրուեցան Սէլթ և Յարէլթ իւրեանց բարութեան համար: Ի՞նչպէս է կարդացվում պատուիրանը ծնողաց սերունդները թնչափս էին ապրում: Ո՞վ էս կառավարում նրանց: Նահապէտի պատճառութիւնն թնչ էր: Զար մարդեկ թնչ բան չինեւ մասած եցին: Կարողացան նոքա աշտարակը շինել վերջացնել: Մարդեկ թնչ արին, երբ Աստուած նոցա լեզուն խառնակեց: Զանագան ազգեր ձևանալուց յետոյ Հշմարիս Աստուածապատճենին մնաց: Մարդեկ երրոր Աստծուն մոռացան, թնչ բաներ էին ընդունում Աստուծոյ տեղ: Ի՞նչ պատիմ էին տալիս սուս աստուածներին: Սուս աստուածներ պաշտօնենք թնչ էին կոչվում: Ի՞նչ է կուտքը: Կռապաշտօնթիւնը սարածուեցաւ մարդկանց մէջ: Ի՞նչ պէս է կարդացվում կռապաշտօնթիւն արգելու պատասխանը:

10. Ա.Բ.Բ.Ն.Ա.Մ ԵՒ ԽԱՎԱԿ ՆԱ.ՎԱ.ՊԱ.ՅԵՏԾԵՐ.Բ: Բոլոր մարդկանց կռապաշտօնթեան մէջ լինկած ժամանակ արդար մարդեկ ևս կացին: Ուր է բնակվում Արքահամբը: Աստուած թնչ պատճառութեց իւր ժողովրդին: Կատարուեցան Աստուծոյ այն խոստումը, թէ Արքահամբը որդի ալետի ունենայ: Աստուած թնչափս փորձեց Արքահամբ համար: Ի՞նչ պատճառութիւնը անողարշակի դանապարհին քանի օր էին նոքա: Ի՞նչ քը կատարելու համար: Ճանապարհին քանի աշխարհին քանի օր էին նոքա:

ասաց Արքահամբ ծառաներին, եթե տեսաւ սարը: Ի՞նչ ասաց Խաչակը, երբոր նա և իւր հայրը բարձրանում էին սարի վերայ: Ի՞նչ Հակը, երբոր նա և իւր հայրը բարձրանում էին սարի վերայ: Ի՞նչ պատասխան տուաւ Արքահամբ: Արքահամբ իւր որդին գոհեց, թէ ոչ ոչ ի՞նչ ձայն լոեց նա երկնքից և ի՞նչ արեց նորանից յետոյ: Առ ու ուուած ի՞նչ վարձատրութիւն տուաւ Արքահամբին նորա հնագանդութեան փոխարիչն:

11. ՅԱԿՈԲ ՆԱԾԱՊԵՑԻ ՈՐԴԻՒԹՅ: Քանի՞ որդի ունէք Յակոբ նահապէտը: Ութին էր նա աւելի սիրում: Ինչու եղբայրները ատում ու էին Յովսէփին: Քանի՞ երազ տեսաւ Յովսէփ և եղբայրներին ու ծնողաց պատմելուց յետոյ ի՞նչ պատասխաններ ստացաւ: Յակոբը ի՞նչու ուղարկեց Յովսէփին եղբայրների մօտ: Ի՞նչ ասացին եղբայրները, երբ նա մօտենում էր նոցա: Ո՞ր եղբայրը ուղումէք ապաները, Յովսէփին և յաջողեցաւ թէ ոչ: Ուրեմն թի՞նչ արեցին տել Յովսէփին և յաջողեցաւ թէ ոչ: Ուրեմն թի՞նչ արեցին Յովսէփին: Ի՞նչ ասաց հայրը, երբ տեսաւ Յովսէփի արինոտ շորերը: Վաճառականները ուր տարան Յովսէփին և մուժ վերայ ծախեցին: —

12. ՅՈՎՍէՓԻ ԲԱՆՑՈՒՄ: Գևառափէսը սկզբումը թի՞նչում ընդունեց Յովսէփին և ինչու բանտը դրաւ նրան: Բանտապէտը թի՞նչում պէս վարուեցաւ Յովսէփի հետ: Փագաւորի ո՞ր իշխաններին բերին պէս կարուեցաւ Յովսէփի հետ: Փագաւորի ո՞ր իշխաններին բերին բանտը: Ի՞նչ էր նոցա տեսած երազը և թի՞նչ մեկնութիւն բանտը: Ի՞նչ էր նոցա տեսած երազը և թի՞նչ մեկնութիւն տուաւ Յովսէփը: Ի՞նչաէս կատարուեցաւ Յովսէփի մեկնութիւնը: Յաջողութեան ժամանակ տակառատութը միտք բերեց Յովսէփին, թէ ոչ: —

13. ՅՈՎՍէՓԻ ՓԱՆԴԻՅ: Ի՞նչ պատահմունքով Յովսէփը հանուեցաւ բանտից: Քանի՞ և թի՞նչ երազներ տեսաւ Փարաւոնը: Մւմ նուեցաւ բանտից: Քանի՞ և թի՞նչ երազներ տեսաւ Փարաւոնի առաջ: Ի՞նչ մեկնութիւն խօսքով բերին Յովսէփին Փարաւոնի առաջ: Ի՞նչ մեկնութիւն տուաւ Յովսէփի Փարաւոնի երազներին: Փարաւոնը թի՞նչում վարուեցաւ Յովսէփի հետ և որպիսի մատոքի հասցըց նորան: Ի՞նչ էր ցուլկան մունետիկը: Այն ժամանակ քանի՞ տարեկան էր Յովսէփիր: —

